

Պ

ԵՏՏՐԱԾԻ
ԵՃԱԼԱԳԻՆ
ԴՐԱԴԱՐԱՆ

№ 57—58

№ 57—58

ՆԱՐ-ԳՈՍ

ԸՆՏԻՐ ՊԱՏՄՎԱԾԲՆԵՐ

(«ՄԵՐ ԹԱՂԻԾ» ՇԱՐՔԻՑ)

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

1934

891.99

7-40

-6 NOV 2011

ՊԵՏՎՐԱՅԻ ԵԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 57—58

No 57-58-

891.99

$$t=40$$

Ն Ա Ր - Դ Ա Ս

ԸՆՏԻՐ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

(«ՄԵՐ ԹԱՂԸ» ՇԱՐՖԻՑ)

P. 1000

1922 M. 10. 15. (3) CEST 10. 10. 1922
1922 M. 10. 15. (3) CEST 10. 10. 1922
1922 M. 10. 15. (3) CEST 10. 10. 1922

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԹԵՐԻ
ՎԵՐԱԿԱՆ 1934

10.07.2013

96174

Տեխ. Խմբագիր՝ Տ. Խաչվանքյան
Սբրագրիչ՝ Գալ. Հակոբյան

ՆԱՐ-ԴՈՍԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԸ

Նար-դոսի այս պատմվածքները նրա գրական ոտեղծագործության սկզբնական, բայց վճռ ամենանախնական գործերից են։ Դրանք գրված են «Աննա Սարոյան» վիպակից հետո, այսինքն այն ժամանակ, յերբ հեղինակը ձեռք եր սերել վորոշ գրական վարպետություն, հստակել իր աշխարհայացքը և ամուր կանգնել գեղարվեստական ունակությունը։ Հողի վրա, թողնելով իր ամենանախնական յերկերի շատ նախվ սոմանտիկական ուսումնառությունը (որինակ, «Նունե», «Ճշմարիտ բարեկամ»), և այլն։

Աշխարհայացքի հստակությունը և հեղինակի հասարակական համակրանքներն ու հակակրանքները յերկում են նար-դոսի պատմվածքների յուրաքանչյուր եջից։ Մեզ թվում ե, վոր հայ լիբերալ քննադատության կիսաքրան գովաստանքը նար-դոսի նկատմամբ և այդպիսի գովաստանքով նրա դրական արժեքի թերագնահատումը պայմանավորված ե մեր հեղինակի գրվածքների մեջ տիրող բարոյական բողոքով բուրժուական հասարակադիր վորոշ հիմքերի դեմ։

Նախ տեսնենք այդ բողոքը, ապա՝ քննադատության վերաբերմունքը։

I

Ասացինք, վոր պատմվածքները գրված են «Աննա Սարոյանց» հետո Աննայի կյանքի վողբերքության պատճաների և այս պատմվածքների հասարակական բազայի միջն այն ընդհանուրը կա, վոր թե վիպակում և թե նովելլաներում հեղինակն իր հերոսների վարած կյանքը համարում և ասալիլ։ Աննան ինքնասպանությունից առաջ գրդում ե ընկերունուն, «ինչ սոսկալի բան և թույզը, բայց կյանքն ավելի սոսկալի յեւ»։

Ինչից ե առաջ գալիս կյանքի սարսափը։ — Պատմվածքների մեջ զբա հիմնական պատճառը կարիքն ե, անծայրածիր աղքատությունը, անտեսական քայլայումը։ Յերբ Գերմանիայում առաջն



61060-67

Դւավիթ № 8410 (բ.), Հրատ. № 2834, պատիք № 161, տիրում 5000. Պետ- հրատիք ապարան, ստ. Փ. 6 72×105, մեկ տպ. թերթում 102.400 տպ. նշ. հանձնված և արտադրության 24/134 թ. ստորա- գրված և տպագրության 27/VI 1934 թ.
--

անդամ բեմադրվեց Հառուպտմանի «Զուլհակները», քննադատները հեղինակին մեղադրեցին, թե նրա պիեսում հերոս չկա: Այդ քըն-նադատներին պատասխանեց Շպիլհանդենը, առևլով: «Դուք հերոս եք զորոնում: Յես գաել եմ նրան: Այդ հերոսը — կարիքն եւ: Նար-դուի պատմվածքների մեջ ես, իսկապէս, «հերոս» չկա: Բայց կա մի հերոս, փոր կենարոնական տեղ ե բռնում: — դա կարիքն եւ:

Պատմվածքների նյութն առնված ե անցյալ դարի ու թունական թվականների հասարակական պայմաններից: Ճիշտ ե, դորձությունը կատարվում եւ «մեծ քայլաքում», բայց իրոք այդ մեծ քայլաքը չե, փոր հեղինակը տալիս ե, խորոր բուրժուազի կյանքը չե, փոր նա պատկերում ե, այլ այդ բուրժուազի շահագործած «փոքր մարդկանց» — մանր բուրժուական, քաղցեններական միջավայրը:

Մանր բուրժուազի քայլաքումը, փոր այս պատմվածքների մեջն ե կազմում, հեղինակը փիլիսոփայական խորհրդածությունների նյութ չի դարձնում, այլ բավականանում ե թշվառության փառակը գեղարվեստական հաշվառումով: Դուք տեսնում եք որն ե բան աշխատող մարդկանց, վորոնք նստում են թեյի լոկ «ցամք հացով»: Դուք տեսնում եք, փոր այդ կիսաքաղց ապրուստը ծերության տարիքում նրանց չի տալիս կյանքի ապահովություն, այլ ընդհակառակը, — ինչպես վիճակադրական դիտությունից ել հայտնի յեւ ինքնասպանությունների խորոր տոկոսը «մեծ քայլաքում» ընկնում ե ծերունիներին, վորոնք ապրելու միջոց չունեն: Հիմանանայու գեղարվում ել հիսուն կոպեկ անդամ չունեն քաղաքային հիմանդրուցին վճարելու, ինչպես թոքախտավոր դուրքար Մաքուլը: Վերջինս թաղված ե պարտքերի մեջ, ամեն ինչ գրավ գրած «աղաներից» մոտ: Նրա մասին հեղինակը գրում ե, «տունը՝ սրբած, կին ու յերեխաները՝ տկլոյ, ինքը՝ դառ ու դասարկ»:

Նար-դոսն իր հերոսների մասնական քայլաքումը շատ մանրամասն ե նկարագրում: բայց մենք քայլաքման պրոցեսը՝ չենք տեսնում ամբողջական ժամանուի ժերան ե, նա տալիս ե սոցիալական հակառակության ցայտուն վիճակներ, մի կորմը կանդնած են առա Սերգոներ, տերակեներ, զսամիկանատուն, իոկ մյուս կողմից քաղցած և հիմանդ, աշխատող և տկլոյ մարդիկ: քայլայի վորոների մեջ նա տեսնում ե նույշինսկ բոսյակային տիպեր, ինչպես, որինակ Արամը: Բայց նար-դոսի պատմվածքների մեջ «մեծ քայլաքի»

առանձնահամառության պարտնյորները — խոշոր ըուբ-ժուազիան և պրոլետարիատը — չկան: Քայլայվող մանր բուրժուազիայի բնորոշ յելքը — գործարանալին բանվոր գառնալու պրոցեսը — նար-դոսի տչըռվը չի ընկեր: Նրա մոտ «մշակները» լոկ սիլուետներ են, փորոնք ավելի դեկորատիվ նշանակություն ունեն, քան գործող անձեր են: Դրանք նոր զինվոր տան ատաղձի մասներ են ավելի զուտ, քան կենարնի մարդիկ (տես «Սաքուլը ու խոտ դնաց» պատմվածքը):

Նար-դոսի նովելլաների գլխավոր հերոսները արհեստավորներն են: Յեթե մանր առևտրականներ ել կան՝ դրանք իրենց անտեսական գրությամբ շատ չեն տարբերվում հիմնական մասսայից: Նրանց խանութը «հավաքրուն» ե անվանում նար-դոսը: Իր այդ հերոսներին հեղինակը նկարագրել ե ավելի շատ «ներսը», քան «գուլացը», ավելի շատ նրանց տունն ու տեղը, քան նրանց շահագործման պրակտիկան: Նա դժագրում ե ավելի շատ հետեւնքները, քան պատմանները: Տակո ե, որինակ, «քննությունների, խարիսուլ ովատերի, լվաներով լցված անկողիների, ցեխոտ հատակների և այդպիսի ծանր պայմաններում ապրող հիվանդ մարդկանց նկարիցը նույշինսկ մի զարք հիվանդություններ ե հիշում, փորոնք այդ հակառակողապահական պայմաններից են ծագում: Բայց այդ բոլորն, այնուամենայնիվ, փորոշ տնտեսական զարգանործման հեռավոր կամ մտավոր արձագանքներն են և նոկ արդ շահագործումը նար-դոսը մոտիկից չի ցույց տալիս: Նույշինսկ գուրգար Սաքուլի և աղա Սերգոյի հանդիպաւմը եղանդողիկ ընույթ ունի և սովորական, տիպիկ շահագործման վճռ նմուշ ե, վոչ ել պատկերացում:

Նար-դոսին հետաքրքրում ե վոչ թե շահագործման պրոցեսն ինքնին, այլ այդ յերեսութիւնը առաջ բնիքած բարոյական վլուգումը: Դրա պիերակասու ապացույցն ե ալկոհոլիզմի այն ցնցող նկարագիրը, փոր տալիս ե հեղինակն իր պատմվածքներում: Խորու են ամենք՝ ամեն սեփի և հասակի՝ կին թե տղամարդ, պառավ թե շահեր: Ալ-կոհոլիզմի հետ միասին, նար-դոսը տալիս ե մի ուրիշ պայուսմի կրոնական միստիցիզմի առկայությունը: Սա անձայրածիր թշվառության կցորդն ե հեղինակը ցույց ե տալիս իր հերոսների տաելությունը «փոքր ցցած» տերակեների հանդեպ, նրանց հեղինությունը այդ քերեխ ու առաջ, «աշքերը քաղցած գայլերի պիստուկած», «խող կտրած» հոդեկորականների նկատմամբ: Բայց միաժամանակ նրանք

վայրենամ են իրենց հոգու վրա մեղք ծանրաբեռնելուց։ Յեթե մեկ-մեկ — հելքանդ կամ հարբած ժամանակ — բողոքում են կտմ ծաղըում կըսնը, բայց գրծով նրանք իրենց հասպանդ են պահում յեկեղեցու պատվիրաններին և առհասարակ ծեսերին, ուխտ են գնում, մատադ են մորթում, պատ և ծոմ են պահում, և այլն։

Նույն կերպ հեղինակը ցույց ե տալիս իր հերոսների ատելությունը կառավարության պաշտոնյաների, պետական հիմնարկների նկատմամբ։ «Մե գորդը տեսնի պոլիցի յերեսը։ Այդ պոլիցին մեծ-մեծ մկներով լի մի նկուղու ունի, փորից վախենում են։ Վախենում են մանավանդ պրիստավից, վոր ևսերհական ձեռքով արյունլիկ անեն քիչ ու պուռնկա ջարդել գիտեն։

Նար-դոսի մոտ թե պոլիցին, թե հոգեորականությունը մենք այնպես ենալից ենք տեսնում, ինչպես «մշակներին» և նույնիսկ «հարուստներին» Որինակ, կապալառու Սերդոյ, վոր մետեղորի պես գալիս ու անցնում ե արագ՝ հիշողության մեջ թողնելով սոսկ իր «խորը արտաքինը», «վոսկե շլթան», «սև ատլասն արխալուղը» և անիուսափելի «տերվողորմյան»։ Անխուսափելի յենք ասում, վորինեաւ այդ տերվողորմյան (համրիչ) դուք կտեսնեք քիչ թե շատ ունելոր, այսինքն քիչ թե շատ պարագ՝ անաշխատ բոլոր հերոսների ձեռքին։

Դրսի կյանքի պատկերներից խուսափելով և ընտանեկան կյանքի վոլորտի մեջ խորանալով Նար-դոսը, հարկավ, ավելի մանրամասն պիտի տաք կանանց և յերեխաների վիճակի նկարագիրը Յեփ, իսկապես, մեր հեղինակի պատմվածքների ամենից ցայտուն եղերը, տպավորիչ տողերը սրանք են. — սոցիալական ճնշման դեմ ավելի սուր ճիշերը լավում են կանանց բերանից և դրա հետ միասին թնդում են սովոր մանուկների լացի ձայները (աես «Հոգուն վրա հասավ պատմվածքը»)։

Կանանց աշխատանքն ավելի ծանը ե, քրտնաթոր և բազմակողմանի, քան նրանց ամուսնների դրսի պրակարիկան։ Սովորական և կանանց աշխատանքի մասին հետեւյալ դարձվածքը. — Ամբողջ որն աշխատում ե, աշխատում և առանց դադար առնելու։ Այդ ժանր, կարելի յե ասել՝ տաժանակիր աշխատանքին ավելանում և հարբեցող ամուսնների կապրիչների անտանելի բեռը, վոր նրանք տանում են լուռ համբերությամբ, վորպես կատարյալ գրաստ։ Մաքսիմ Գորկին նման կանանց համեմատել ե խեղդվողի

հետ, վոր բռնում ե ամեն ծեղից՝ չ'խորասուզվելու համար։ Անձար, տգետ, անոդնական կինը ստրկանում ե տղամարդուն, վորովհետեւ այսպես թե՝ այնպես նա «իր պահողն ու պահողանողն եւ։ Ստրկություն հանդիսացող ամուսնության լրացուցիչն ե պոռնկությունը, վոր շատ թեթեակի կերպով զգալ ե տալիս նար-դոսը քաղքենի կնոջ համար իր ալհեստավոր ալկոհոլիկ տմունուց յերբեմնապես գերազանցելի յե աստիճանավոր սկրենալնը։ Բայց պարզ չե մի բան. զա խանդու ամուսնու յերեխակայություն ե, թե իրականություն։ Հոգեբանորեն հնարավոր ե թե մեկը, թե մյուսը (տես «Հոգուազդը»)։

Իր նկարագրած կանանց ընդհանուր վիճակը նար-դոսը կոնկրետացրել ե յերկու գիմանկարով. մեկը՝ Մային ե, մյուսը՝ Անանը։ Առաջինն անմոռնչ գրաստի պես վողջ որն աշխատում ե թե տանը և թե գուրսուց ի՞նչ բան ե հանդիսացը, նա մոռացել եր և միայն մի կրողություն գտնե, յերեխաները քաղցած են՝ պետք ե աշխատել, յերեխաները տկլոր են՝ պետք ե աշխատել, տանտերը պահանջում ե վարձ՝ պետք ե աշխատել։

Այդ կնոջ պատկերը լրացնում ե Անանը, վորն իր ամուսնու ծեծից սովոնցիւմ ե Նրա արտաքինը հեղինակն այնպես ե տալիս, վոր կարծես թե մարմնացած սարսափ ե նկարագրում ե վոչ թե կենդանի մի անձնու Նրան սարսափի մարմնացում են գարձել կյանքի պայմանները. — Ճանը աշխատանքը, քաղցը, ծեծը, հայուանքը, և մշտական ճիգը՝ այդ բոլորի պատճառն իմանալու, և անիմորդությունը՝ իր գրած «ինչունաներին պատասխան գտնելու»։ «Արսափը քարացած եր նրա զեմքի և աչքերի մեջ»։ Ինչնու յե Անան հանդուրժում այդ վիճակը. — Վորովհետեւ մայրենի տանն իր հարցազաները անցում են հարատել չքաղցորության և քրախտի ժանը հարգածների տակ։ Այդ բոլորից հետո զարմանալի չե, յերե Անանն իր գրությունը շան վիճակի հետ ե համեմատում և պընդում, վոր շան վիճակն ավելի լավ ե, քան իր ապրած կյանքը։ Յեվ վոչ միայն սա, այլև մյուս կանայք իրենց գրությունը սովորաբար շան վիճակի հետ են համեմատում։

Բնորոշ ե Նար-դոսի մի պատմվածքը, վորում մայրն սպանում և իր նորածին յերեխային, վորովհետեւ չի հավատացած, թե կարող ե նրան մեծացնել տնտեսական անասելի կարիքի շնորհիվ։

Այդ բոլորից հետո միանդամայն հասկանալի յե, վոր Նար-

դոսի կանայք հասարակական հիշված պայմաններից մտրակված մասամբ է նախապահարփած են, սնուախաղաշտ, յերազների և տերտերների հավատացող: Իրենց գժբախտ վիճակից իրական յերշ չգտնելով՝ նրանք բանում են միստիցիզմի ուղին, ավելի ջուռ նրանց հրում են բռնելու այդ ուղին:

Յերեխսների վիճակը ևս անմիտթար եւ նրանք ևս աշխատանքի ծանր լուծ են տանում, չնայած տակավին չափահատ չեն դարձել նրանք մտապես քաղցած են, ակլոր, լուսաբորիչի ծեծից ու հայոցանքից վախեցած: Իր նկարագրած յերեխաների ընդհանուր վիճակի պատկերը նար-գոսը գծադրել ե հետեւալ բնորոշ տողերով: «Աղջիկը սովալուկ հայացքով աչքի տակից նայեց հոր դատարկ ձեռներին և այն միջոցին, յերբ փակում եր դուռը, մի ծանր հարփած դրաց գլխին: Սրա յեղային և Ակորը, ութ տարեկան մը յերեխա, փոր աշխատում և պղնձադրուի մոտ: «Մարգ Ակորը գըղթեց ված հագուստով, մրից սեղացած գեմքով, ձեռքերով և մինչև սրոնքները մերկ փասներով: Ցըտից սրսկում եր ամբողջ մարմնով...»:

Նար-գոսն իր բոլոր պատմվածքներն անխռիք վերջացնում ե հուսահատական, կարելի յե ասել՝ սարսափելի պիտիմիգուգույսի, վնչ մի ճառագայթ, քրկության վահ մի նշույլ ազատվելու վնչ մի հուսանկար Բոլոր պատմվածքների վերջարանը փողերգական ե: Հերոսները մենում են կամ թօքախալից, կամ ծեծից, կամ «վախից»: Շատ բնորոշ են նրա այս վեց պատմվածքի վերջին խոսուն տողերը: — 1) Մարթան մնումի, իսկ օհրբաց Գրիգորը մինչև որս ել շարունակում ե իր արհեսաբ տոաջափ պես ժպտում աշքերով և կարմիր այտերով: — 2) Ասքուլը մենում ե, իսկ նրա աղջեկը ճանձ և փորսում և փողոցի կինապյին նմանվերոյ կանչում և «թութա, ախտախ թութա»: — 3) Հարբեցող հավիթը ծեծելով խլում ե իր զափակի ձեռքից նրա աշխատած քսան կրտեկանոցը և ծլկում գեպի գինետուն, իսկ այդ միջոցին նրա կինը «աչքերը քաջում»: — 4) Հարբած Աստաւուրը խանդից մղված վրա յե պըք-սում, փոր կնոջը ծեծի: սա փախում ե, իսկ ամուսինը հետեւից քար և արձակում: «Թարը շեշտակի գնաց գիպավ կնոջ միջքին: Կինը սաստիկ ճշաց... և փոկից գեանին յերսի վրա...»: — 5) «Կնոջը սպանելու համար մեղադրուղ դրոշապան Ցագորը նախական քննության ժամանակ դատական քնչի հարցուփորձերին պատաս-

խանելով ասաց: «Մի մուշտի տվի, ելի, ուրիշ բան իո չեմ տրելու: — 6) Զիբքիր տղան գողանում և պտուավ մոր ապրուստի միակ միջոցը՝ յերկու հավու Մայըը վազում ե հետեւից, վոր բանի, բայց չի կարողանում և նստում և հնենց այնտեղ՝ փողոցի մեջտեղը սկսում ծնկները թակել և լաց լինել առանց արտասուբների...»:

II

Նար-գոսի գեղագիւտական կարողության մասին մեր լիրերալ քննադատությունն, այն կարծիքն ե հայտնել թե դա ավելի լուսանկարչական, արձանադրակոտ բնույթ ունի. հեղինակն ավելի շուտ Ծնկարող վիպասան ե», լուսանկարչական ճշտությամբ գծագորդ, իսկ նրա հերոսները շամմիչապես իրականից կորզած մարդիկ են: «Նար-գոսը, — ասում ե Լեռն, — բավկախանում ե միան գրությունը արձանագրելով... առանց յերկութիւն պատմության և հոգեբանության մեջ մտնելուց ևնա միայն պատմում ե իրողությունը: «Տալիք ե վարդապետ կյանքի տեսարաններ» (ընդգծում-ները մերն են. Ա. 8.)»

Մեր լիեբար քննադատության մեջ արտահայտված այդ կարծիքները միակողմանին յեն Ցեթե բնոււններ, փոր նար-գոսը ցյերեւոյթի պատմության և հսկեանության մեջ շատ չի խորանում, այնուամենային կյանքի փաստը հում-յեփի, առանց գեղարվեստորեն մշակելու չի դնում բնիթերցողի առաջ, չի արձանագրում սոսկ յեղելությունը, չի լուսանկարում դեթ անձն ու անցքը: Լիբերալ քննադատության այդ հայացքը, փոր արտահայտված և Նար-գոսի «Աննա Սարոյան» և «Տանտիրոջ» աղջիկը վիպակների մասին եկմանականում ճիշտ չետ Սիալ և նույնիսկ, յեթե կիրառելու լինենք պատմվածքների նկատմամբ, փորնը, իրոք, կյանքի տեսարաններ են, բայց վնչ արձանագրությունն են, վոչ եւ լուսանկարչությունն:

Վերցնենք մի անպահույց նկարագիր:

«Աքաղաքի ծայրամասերից մեկի թաղը Հավիտենական աղբավ ծածկված ծուտիկ-մուռտիկ փողոցներ, փորնը նեղիկ անցքերով գնում խաչաձեռում են իրար կամ դեմ առնում մի պատիկոյը մուրացկանի պես: Իրար վրա թափած, իրարու հենափած տնակներ... հողածածկ տափակ կտուրներ, փորնք ձմեռը տնքում են ձյունի ծանրության տակ, դարնանը... կաթում, կաթում, կաթում...»:

Միթե այս փոքրիկ նկարագիրն արձանագրություն կամ լուսանկարություն եւ Ուշագրություն գարձորեք ցիրեկություններից բնորոշումներին. — հավիտնական աղբ. — կույր մուրացիկանի պես պատին դեմ ընկած փողոց, — իրար հենված տնակներ. — կտուրը տնիում ե. — կարում ե, կարում, կարում: — Սա «միայն» պատմել չե, այլ բանաստեղծություն:

Նար-դոսը, իբրև նովելլիստ, ունալական արվեստի ներկայացուցիչ եւ Նա հասկանում եր այն հայտնի ճշմարտությունը, թի՞ ինկական սեալիդը միամիտ կերպով իրականության ճշշտ պատճենը տալ չե, այլ այդ իրականության բոլոր ելեմենտների այնպիսի ստեղծագործական կոմբինացիա, զոր առաջ բերի կյանքի դպացում:

Նար-դոսն իր ամենաչնչին դիտողության մեջ տնդամ դնում ե վորոշ ստեղծագործական շեշտ: Որինակ, պարագ մնացած դաշտահեր. — «Ըաղպյանը կարծես խոր քուն եր մտած, կանդնած եր իր ցից ցից այունելով՝ առանց հինածի, վորպես մի կմախք»: Վահ մի-այն այդ, այլէ այն պետք ե շեշտել վոր մեր հեղինակն իր վերաբերունքն ե ցույց տալիս կյանքի վորոց յերեւությունների դեմ, ժիամական, բացանական դիրք ե բոնում, որինակ, հարուստաների, հոգերականության, կառավարության, պաշտոնյաների և նախապահարումների հանդելու: Սա արդեն լուսանկարում չե, այլ արվեստի սրումը հեղինակի չսիրած անձերի և ցիրեկությունների» դեմ:

Նար-դոսն իբրև նովելլիստ, ճիշտ ե, կենցաղագիր ե, բայց նրա կենցաղագրությունն իրականության մերկ պատճենը չե, այլ այդ իրականության արժեքավորումը, վոր թե տկլոր իրեր, այլ սրանց դինամիկան, վո՞չ թե սոսկ գրություններ, այլ վերջիններիս մեջ ծագող դրամատիզմը:

Նար-դոսը սիրում ե հակագրություններ տալ, որինակ, մենոնդ թոքախատակուր սենյակում պառկած, նրա կրծքից ձայնն այնպես եր դուրս գալիս, ասես, «Հորից եր դուրս գալիս», իսկ դուրսը մրգավաճառ կինոտն աղաղակում ե «իր առողջ թոքերի ամբողջ թափով»: Մենք արդեն վերև հիշեցինք մեռնող հոր և ճանձ վոր սացող զավակին:

Ինչպես տեսնում եք, Նար-դոսի կենցաղագրությունը գեղարվեստական արժեքը ունի, վորովնետք հեղինակին նկարագրելու և պատմելու ձիրք և տիած բավական ուժեղ իշխանություն խոսքի

վրա Զնայած նա հանդիստ ե պատմում, բայց այդ հանդստությունը յերկութական ե. հեղինակն իր նկարագրածը շատ մոտ ե առնում արտին:

Յեթե Միք, Նալբանդյանն իր Փելքետոնների մեջ կապալառունների գեմ գրում ե կատաղի հարձակումներով և նրանց դիմակները պատուելու մեծագույն պաթուով, Նար-դոսն այդ նույն կապալառունների գեմ գրում ե ավելի զուսպ, ավելի հանդարտ տոնվ, բայց միհնույն բացասական և ժիմական դիրքագրումով: Նալբանդյանը գրում ե մի կապալառուի մասին, «Նրա անսամբլական անհոգությունից ուռած թշերը կարմրում ելին նրա անխորհուրդը յերեսի վրա... մարդկային պատկերի տակ անասնություն... կղկանք մարդկության» *): Նար-դոսն իր կապալառուններին այդպես բացարձակ չի հայոյում, թքում ու մրում, բայց ցույց ե տալիս շատ վորոշ հակակրանք նրանց անձի և գործի նկատմամբ:

Նար-դոսի սեալիդմի այս վերջին հատկությունը չի ավրում նրա տախած նյութի պատմականորեն-վավերաթղթային ճշտությունը: Գատմում են, վոր սուս նովելլիստ Զեխովը հուշատերը ե յեղել պահելիս: Զեխովի այդ հուշատերում մենք գտնում ենք բազմաթիվ նոր թեմաներ և դիմաված յերեւությունների գրանցում: Եերեւնն նա տալիս ե սոսկ մի բառ, յերեմն բնավորության մի գիծ, յերեւնն բնորոշ հագուստ, և այլն: Նա շարունակ դիմել ե կյանքը և գեղարվեստական ընդհանրացումներ արել: Շատ հաճախ աննշան մանրութը նրան խոցը ծառայություն ե մատուցել **):

Մենք չգիտենք՝ Նար-դոսը նման հուշատերը պահել ե թե չե, բայց մի բան պարզ ե, վոր հեղինակը տալիս ե վորոշ մանրութների այնպիսի սոույդ, տեղին և սպառիչ նկարագիրը, վոր դուք կարծում եք, թե նա լսած ու տեսած բան ե վերաբաղրում, առանց ստեղծագործական քուրայի մեջ թշելու: Բայց զա, և հարկե, այդպես չե, հենց դրանում ե Նար-դոսի ուժը, վոր նրա գրականության մեջ չկա գրականայնություն, դուք չեք տեսնում նրա մանրակրկիտ աշխատանքը — սա յե կարեռը Յեկ Նար-դոսի այդ գեղարվեստական արժանիքը սիսալարար համարվել ե պարզ լուսանկարում կամ արձանադրություն: Բավական ե հիշել յերեք

*) Տես Մ. Նալբանդյան, «Եերկկըր», հատ I, եջ 110.

**) Տես „Работа над художественным словом“, том IV, изд. Рабпрос, стр. 35.

Միթք այս փոքրիկ նկարագիրն արձանագրություն կամ լուսանկարչություն եւ Ուշադրություն դարձրեք ցյերկույթների բնորոշումներին. — հավիտնեական աղք. — կույր մուրացկանի պես պատին դեմ ընկած փողոց, — իրար հենաված տնակներ. — կտուրը տնելում ե, — կարում ե, կարում, կարում: — Սա «միայն» պատմել չե, այլ բանատեղություն:

Նար-դոսը, իբրև նովելլիստ, ունայտկան արվեստի ներկայացուցիչ եւ նա հասկանում եր այն հայտնի ճշմարտությունը, թե՞ իսկական ռեալիզմը միամիտ կերպով իրականության ճշշտ պատճեննը տալ չե, այլ այդ իրականության բոլոր ելեմնաների այնպիսի ստեղծագործական կոմբինացիա, զոր առաջ բերի կյանքի զգացում:

Նար-դոսն իր ամենաչնչին զիտողության մեջ տնդամ դնում է փորոշ ստեղծագործական շեշտ: Որինակ, պարապ մնացած դաշտյահը — «Հաղպյանը կարծես խոր քուն եր մտած, կանդնած եր իր ցից ցից պունկով, առանց հինածի, վորպես մի կմախք»: Վաչ միայն այդ, այլև այն պետք եւ շեշտել վոր մեր հեղինակն իր վերաբերությն եւ ցուց առլիս կյանքի վորոշ յելեւութների դեմ, ժիսական, բացառական դիրք եւ բունում, որինակ, հարուտաների, հոգեռականության, կառավարության, պաշտոնյաների և նախապաշտումների հանգիւթ: Սա արդեն լուսանկարում չե, այլ արվեստի սրումը հեղինակի չսիրած անձերի և ցյերկույթների» դեմ:

Նար-դոսն իբրև նովելլիստ, ճշշտ ե, կենցաղագիր ե, բայց նրա կենցաղագրությունն իրականության մերկ պատճեննը չե, այլ այդ իրականության արժեքափորումը. վոչ թե տկլոր իրեր, այլ առանց դինամիկան, վո՛չ թե սոսկ դրություններ, այլ վերջիններիս մեջ ծագող դրամատիկմը:

Նար-դոսը սիրում է հակադրություններ տալ, որինակ, մեռնող թոքախտավորը սենյակում պառկած, նրա կրծքից ձայնն այնպես եր դուրս գալիս, ասես, «հորից եր դուրս գալիս», իսկ դուրսը մրգավաճառ կինոտն աղաղակում և «իր առողջ թոքերի ամբողջ թափով»: Մենք արդեն վերև հիշեցինք մեռնող հոր և ճանճ փորսցող զավակին:

Ինչպիս տեսնում եք, Նար-դոսի կենցաղագրությունը գեղարվեստական արժեք ունի, փրովինտե հեղինակին նկարագրելու և պատմելու ձիրք և տված՝ բավական ուժեղ իշխանություն խոսքի

վրա Զնայած նա հանդիստ և պատմում, բայց այդ հանգստությունը յերկութական ե, հեղինակն իր նկարագրածը շատ մոտ ե առնում սրահն:

Յեթե Միք, Նալբանդյանն իր Փելյետոնների մեջ կապալառունների գեմ գրում և կատաղի հարձակումներով և նրանց զեմականները պատուելու մեծագոյն պաթոսով, Նար-դոսն այդ նույն կապալառունների դեմ գրում և ավելի զուսպ, ավելի հանդարա տունվ, բայց միւնուցն բացասական և միասական դիրքավորումով նալբանդյանը գրում և մի կապալառուի մասին, «Ըրա անանական անհոգությունից ուռած թշերը կարմըում եյին նրա անխորհուրդ յերեսի վրա... մարդկային պատկերի տակ անամոնություն... լզլանք մարդկության»*): Նար-դոսն իր կապալառուններին այդպես բացարձակ չի հայհոյում, թքում ու մրում, բայց ցույց և տալիս շատ վորոշ հակակրանք նրանց անձի և գործի նկատմամբ:

Նար-դոսի սեալիզմի այս վերջին հատկությունը չի ավրում նրա տված նյութի պատմականորեն-վավերաթղթային ճշությունը: Գատմում են, վոր սուս նովելլիստ Զեխովը հուշատերը և յեղել պահելիս: Զեխովի այդ հուշատերում մենք գտնում ենք բազմաթիվ նոր թեմաներ և դիտած յերկույթների գրանցում: Յերբեմն նա տալիս ե սոսկ մի բառ, յերբեմն բնավորության մի դիմ, յերբեմն բնորոշ հագուստ, և այլն նա շարունակ զիտել ե կյանքը և գեղարվեստական ընդհանրացումներ արել: Տատ համար աննշան մանրուքը նրան խոշոր ժառայություն և մատուցել**):

Մենք չդիտենք՝ Նար-դոսը նման հուշատերը պահել ե թե չե, բայց մի բան պարզ ե, վոր հեղինակը տալիս ե վորոշ մանրուքների այնպիսի սուուզ, տեղին և սպառիչ նկարագրի, վոր գուրք կարծում եր, թե նա լսած ու տեսած բան ե վերաբարտադրում, առանց ստեղծագործական քուրայի մեջ թըրծելու: Բայց դա, ի հարկե, այդպիս չե: հենց զբանամին ե Նար-դոսի ուժը, վոր նրա գրականության մեջ չկա զբականայնություն, գուրք չեք տեսնում նրա մանրակրիստ աշխատանքը — սա յե կարեութ: Յեկ Նար-դոսի այդ գեղարվեստական արժանիքը միավարար համարվել ե պարզ լուսանկարում կամ արձանագրություն: Բավական ե հիշել յերեք

*). Տես Մ. Նալբանդյան. «Յերկերը», հատ I, էջ 110.

**). Տես «Работа над художественным словом», том IV, изд. Рабпрос, стр. 35.

Նկարագիր. 1) հավերի թառից իջնելը («Սև փողերի տոկուը»); — 2) ծեծից մեռնողի շղունչ փշելը («Յելք շաբարամանից յերկու կտոր շաքար պակասեց»); — 3) ալոփոլիկի փողերից խմիչքի ծարավը («Հոդուն վրա հասավ»). — գուք տեսնում եք այդ նկարագիրների մեջ մանրամասների զարմանալի ստուգություն և միաժամանակ ստեղծագործական գուըրայի ջերմությունը:

Այդպիս շեղակի ին նաև բնության նկարագիրը նար-դոսի մոտ Տոլստոյը գրել է, թե զրոյցի ժամանակը յերբ ամերու բան չի մնում, սկսում են խոսել յեղանակից, այդպիս ել կան հեղինակներ, վորոնք բնություն են նկարագրում գրական ծես կատարած լինելու համար: Նար-դոսի մոտ գրեթե բնություն չկա: Խնչու նաև՝ վորովինեակ նրա մեծ քաղաքի թաղը թափուր և բնությունից, և յերկրորդ վորովինեակ «նա ասեիու բան շատ ունի»: Յեթե նար-դոսը բնություն և տալիս՝ նշանակում և այդ բնությունը խիստ անհրաժեշտ և և վոչ թե գրական ծեսի պահանջ եւ Այնուհետեւ նրա բնության նկարագիրը շատ հակիրճ է, ամփոփ, տեղ-տեղ լիրիկական գունավորում ունի: Որինակ, փոթորկի առան շունչը և Մաքուլի ջերմությունը, ասես, ինչ վոր սրտամաշ սիմֆոնիա յեն կազմում...

Նար-դոսի ուելիզմի ուժն արտացոլում են նաև նրա վոճի մեջ: Մեր հեղինակն իր հերոսներին վոչ միայն տեսնում եւ, այլև շարունակ լսում եւ նրա վոճն իրականությունն անգրադարձող մի նուրբ գործիք եւ նովիլլիստն իր տիպերի արտաքին նկարագրի վորովիկության ընկերակցում եւ մի բնորոշ լեզու, բառերի հատուկ դասավորություն և արտաքանակու տառանձին յեղանակը: Նրա հերոսները թեեւ դաստիարականորեն իրար շատ նման, բայց արբերվում են խոսվածքով և պահվածքով: Մեկը մյուսի հետ դժվար է շփոթել:

Նար-դոսի վոճը իիստ ինսմիզմի եւ Յերկար տարիների աշխատանք և յերեսում գրա վրա: Այն խոսքը թե՝ տաղանդը յերկառատու համբերություն եւ — ավլա գետքին սազական եւ: Մեր հեղինակը շատ յերկար և դիմել այն, ինչ վոր դրել և ընթերցողի առաջ: Յերկար դիմելով՝ նա, վերջապես, կարողացել է դիտածին պարզ և ճիշտ պատերացում տալ, ցույց տալ նրա մեջ այն Շնորությունը, վոր դմել և ինքը: Ասել են՝ ամեն մի իր պետք և ունենա իր մակդիրը, կորոնիր և գափիր:

դանում: հաճախ նրա բառը, խոսքը տեղին են գործածվում, այսինքն նրա ամեն մի ֆրազն առանձին վերցրած՝ պարունակում և դրվագքի զվարավոր տրամադրության այս կամ այն արձագանքը: Մա մի վարպետություն եւ վոր ձեռք և բերվում տնապայման յերկարաժակ ուսումնառությամբ: Նար-դոսն իր վոճի վրա այնպես և աշխատում, ինչպես արձանագործն իր արձանի վրա:

Նար-դոսն անհատականացնում եւ իր հերոսների վոճը: Բայտական և լսել պառավ մոր և լոթի վորդու զրոյցը՝ նկատելու համար, թե վորքան մեկի և մյուսի խոսվածքը համապատասխանում և աշխատանքի տարբեր բնադրավարին, ատրիքին, ծնողի և այլասերված վորդու հակագիր զգացմունքներին, դիտավորություններին, և այն:

Նար-դոսն իր համեմատությունների ներկասպնակում գործ և ածում այնպիսի ներկեր, վորոնք հենց վերցված են այն շրջապատի գույններից, վոր նա նկարում եւ Որինակ փողոցը՝ կույր մուրացկանի պես: կենարոնացած մարդ՝ շարունակ վորոնում եւ և չի գտնում: ծեծը՝ կարծես, ճիպոտով կարպեա ևն թափ տալիս: հարբեցողի համար ջուրը՝ լուծողական, և այն Բացի այդ՝ նար-դոսն իր լեզվի մեջ պահում և ժողովրդական խոսվածքի, զրոյցը համն ու հոտը, մեծ չափով ոդապաղործում և գավառաբարբառների բանասաեղծական արժեքները, որինակ՝ ասացվածքները հեղության ձեւերը.

— Բա շուն ու կատու չի ըլել:

— Ի՞, շուն ու կատու, չե մի վոճներ: Աչքին ա երեվացել:

Նար-դոսը դիտե մի քանի գծերով բնորոշել իր ներկայացրած անձի հիմնական բնութագիրը Որինակ գրաց Գրիգորը: Քառասուն տարեկան մասե մարդ եր նա՝ պստիկ ժաղան աչքերով, կորիկ ոտիրած կարմիր դեմքով, վոսկեղոծ նեղ քամարով, դեղին չեսունչե արխալուզով, շարունակ ձեռքին մի կարճ համբէ դեղին հատիկներով, վոր նա ափից ափ եր նետում:

Ասես, զերառան Ավետին և նկարում «Յասում» զրամայում

Դրբացի քաղաքականությունն ու պրյումները, նրա խարելության տեխնիկան սապում են այդ բնութագրին: նախ մեջ և բերում «Աղողոմանի գիրքը», յերբ դա չի ոդնում՝ թասը մոմերով, հետո ծեծ: Աղջրում նա մարդահաճ և և մուտուն, բայց յերբ անհաջողության և հանդիպում՝ դասնում և կրքոտ և գաժան:

Նար-դոսի վոճը ծաղկուն, յերփներանդ, շպարգած չե, նա չի ձգտում անպայման բազմազան լինել, — հաճախ միննույն բանը կրկնում է, յեթե հոգեբանորեն անհրաժեշտ և Որինակ, գրուցի ժամանակ միննույն համեմատությունը մի բանի անզան կրկնում է խոսողը, վոր ցույց ե տալիս իր մտավոր հորիզոնի վորոշ նեղություն կամ հուզմունք Հեղինակի արվեստը հանում և իր բարձրակետին, յերբ նա աշխատում և ստեղծել բրամագրությունների վորոշ սիմֆոնիա, որինակ, մոր ձեռքերը դողում են ուրախությունների միջոց, իսկ միաժամանակ վորոտ չութայի ժանր փեշերը ծափ են տալիս...

Այդ բոլոր առավելություններով հանդերձ Նար-դոսի պատմվածքները զերծ չեն մի շաբթ թերություններից, նախ գծելով բուրժուազիայի ստեղծած վատթար հասարակարգի և դրանից առող «փոքր մարդկանց» տնտեսական և բարոյական ատանջանքները, Նար-դոսը վոչ մի յեթ ցույց չի տալիս փրկվելու համար և թանձր հոռեանությամբ կանգնեցնում և իր պասակարգը փակուղու առաջ: Յերկրորդ՝ մարտական ուղիներ չնշելով չարիքի խափանման համար և բափականանալով միայն բարոյախոսական բողոքով, մեր հեղինակն արժանացել և լիւրուալ քննադատության վորոշ խրախուսանքին: Յուրի Վեսելովսկին Նար-դոսի նովելաների մասին դրում և դրանք արտասալոր մարդասեր, մեղմ կարեկցությամբ լիցուն գործերն են *): Յերրորդ՝ Նար-դոսն իր պատմվածքների շարքը բաց և անում հետեւյալ առաջաբանով, «Մեծ ու փարթամ քաղաքի ծալրամասերից մեկի թաղը», Այդ հակագրության սոսկ մի մասն և նա գեղարվեստորեն պատկերացրել — թաղը, իսկ մյուս մասը՝ մեծ քաղաքը՝ թողել և առանց ուշադրության: Յեթե հեղինակը գեթ հարկանցորեն փարթամ քաղաքը նկարագրեր, այն ժամանակ ընթեցողն ինքը կզգար հակագրությունը ծայրամափ հետ: Մեծ և փարթամ քաղաքն անտեսելով հեղինակը միաժամանակ անտեսել և իր քայլայի արենատավորների պրոետարացման ուղին, ինչպես ասել ենք այս հոդվածի սկզբում: Յեփ, վերջապես, չորրորդ՝ չնայած Նար-դոսի լեզուն առավելություններ չափ ունի, այնուամենայնիվ ժամանակակից ընթեցողը յերեմ

*) Տիկ Յ. Веселовский. «Очерки армянской литературы и жизни», стр. 37.

գեմ և ընկնում այնպիսի դարձվածքների, վորոնց հասկանալու համար պետք ե անպայման «ըրբազան պատմության» հետ ծանոթ լինել: Որինակ, «Դուրսն ամբոխված կանանց և յերեխաների ղըժ-վըժոցը մի կատարյալ Սովոր-Գոմոր եյին դարձրել վողոցը»:

Չնայած այդ բոլոր թերություններին՝ Նար-դոսի պատմվածքները նույնիսկ մի քանի անգամ կարդալուց հետո չեն ձանձրացնում: Դա նրանց գեղարվեստական արժեքի պարզ ցուցանիշն ե

Ա. Տերեներյան

1934. III. 3.

Յերեխան:

61060-67



ԻՆՉՈՒՍ ԲԺՇԿԵՑԻՆ

Մեծ ու փարթամ քաղաքի ծայրամասերից մեկի թաղը: Հավիտենական աղբապի ծածկված ծռւռտիկ-մռւռտիկ փողոցներ, վորոնք նեղվիկ անցքերով գնում խաչաձեվում են իրար կամ դեմ առնում մի պատի՝ կույր մուրացկանի պես: Իրար վրա թափված, իրարու հենված տնակներ, վորոնց խարխուլ լարիաբները թվում ե թե ամեն բոպէ պատրաստ են թափվելու անցորդի գլխին: Փոքրիկ պատուհաններ՝ կեսը ապակի, կեսը թղթած, փտած դռներ, հողածածկ տափակ կտուրներ, վորոնք ձմեռը տնքում են ձյունի ծանրության տակ, գարնանը ծածկվում փարթամ կանաչով և անձրևների ժամանակ կաթում, կաթում, կաթում, ստիպելով խեղճ թշվառ բնակիչներին պատսպարվել ծալքերում, դռների, պատուհանների խոռոչներում, չուլ ու փալասների տակ:

Այսպիսի տնակներից մեկն եր և ջուլհակ թորոսի խրճիթը: Սակայն այս խրճիթը մյուս տնակներից տարբերվում եր միայն նրանով, վոր սրա պատերի կեսն ալիզից եր (կավի և հարդի շաղախից) և կըտրանը յերդիկ տմեր, վորի գլուխը ծածկված եր կոտրած կարասի վերին մասով: Այդ յերդիկի տակ եր ջուլհակի դաղդյահը և այդ տեղից եր նա ձմեռը քոյս ստանում կտապի գործելիս, վորովհետեւ միակ պատուհանը շատ փոքր եր և դադգյահից հեռու:

Զուլհակ թորոսը, վոր մի ժամանակ շատ ժիր ար-
հեստավոր եր, նստում եր իր նահապետական դաղդյա-
ճի առջև, վոտները կախում հորի մեջ, մազողը հինա-
ծի միջով աջ ձեռքից ձախն եր գցում, ձախից աջը, և
վաղ առավոտից մինչև ուշ գիշեր խրճիթի խոր լուս-
թյան մեջ լալում եր ճախարակների միալար ճռճոռ-
ցը: Այժմ ծերացել եր, շատ եր ծերացել. մեջքը կորա-
ցել, կուղ եր գարձել, միրուքը սպիտակավառ փռվել
եր կրծքին, սպիտակ թավ հոնքերը կախվել ելին հան-
գած աչքերի վրա, ձեռքերը դողդողում ելին և առանց
ձեռնախայտի չեր կարողանում ման գալ: Ու չեր հի-
շում, թե յերբվանից եր, վոր դաղդյահը, կարծես խոր
քուն մտած, կանգնած եր յերդիկի տակ իր ցիցցից
ոյուներով, առանց հինածի, վորպես մի կմախք. չեր
հիշում, թե յերբվանից եր, վոր ջահրան իր ծոված
միջով ընկած եր անկյունում անդործ, չեր հիշում,
թե յերբվանից եր, վոր մասրաները փոշեթաթախ ըն-
կած ելին մութ պատի տակ՝ թիթեղյա այն փոքրիկ
լամպի հետ, վոր գիշերները միսում եր դաղդյահի
մոտ:

Այն ել չեր հիշում, թե յերք եր մեռել կինը, թող-
նելով իր մի քանի զավակներից միայն մի աղջիկ, վոր
այժմ մոտ յերեսուն տարեկան եր և իր միակ հույսն
ու ապավենը այդ խորին ծերության հասակում: Մար-
թան եր նրան կերակրում, հաղցնում իր ձեռքի աշխա-
տանքով և չեր ամուսնացել միայն նրա համար, վոր
ծերունի հայրն անտեր-անտիրական չմնա: Նրա, ինչ-
պես և համարյա ամբողջ թաղի կանանց, սովորական
աշխատանքը հինած գործելն եր, վոր նա վերցնում եր
սպիտակ դերձակներից: Ամբողջ որն աշխատում եր,

աշխատում առանց դադար առնելու: Նրան միշտ կա-
րելի յեր տեսնել կամ գուրուը հարեան կանանց պես
տան պատի տակ վիլալարը ձեռքին հինած հինելիս,
կամ թել կծկելիս, կամ գուլուփայի վրա թել յետ տա-
լիս և կամ թե տանը, թախտի վրա, դաղդյահի առջև
նստած, գուլուփան ու թուրը ձեռքին, հինած գոր-
ծելիս:

Տարորինակ աղջիկ եր Մարթան: Ծիծաղ, ուրախ
տրամադրություն ասած բանը կարծես բնալ ծանոթ
չեր նրան. ծանրաբարո, սակավախոս, միշտ զգաստ,
միշտ լուրջ, միշտ կենարոնացած իր ներքին աշխարհի
մեջ, ուր կարծես շարունակ պրապտում եր ինչ-վոր ու
չեր գտնում: Դեռևս մոր կենդանության ժամանակ,
վոր զարմանալի աստվածավախ կին եր, տարված տ-
մեն տեսակ նախապաշարումներով, նա սովորել եր հա-
վատալ սրբերին, վորոնք այժմ մի-մի պաշտամունքի
առարկա ելին գարձել նրա համար: Նրա ամենապաշ-
տելի սուրբը ս. Գեղորգն եր, ուր ամառ-ձմեռ համա-
րյա ամեն շարաթ յերեկո զնում եր համբուրելու, իսկ
ամեն տարի աշնանը, այդ սրբի տոնի շարթին ծոմ եր
պահում—ամբողջ վեց որ վոչ հաց եր առնում բերանը,
վոչ ջուր, խակ յոթերորդ որը հաղորդվում եր: Նույ-
նիսկ մի անդամ ծովապահությունից այնպես հիվան-
գացավ, վոր քիչ մնաց մեռներ, բայց և այնպես շա-
րունակում եր իրենը: Մեծ պասը պահում եր աճենայն
սրբությամբ, իսկ զատկից մինչև Համբարձումը յեր-
կուշարթի որերը չեր աշխատում, վոր հարինք ցավը
չտարածի և արտերը կարկտահար չլինեն: Միշտ այդ-
պես ելին արել հայրն ու մայրը, այդպես ել շարունա-
կում եր այժմ ինքը:

Նա հավասում եր դեերի և ստուանաների, ալքերի
և քաջքերի գոյության, թալիսմաների և ժողովրդա-
կան աղոթքների զորության։ Յերաղի մեջ տեսած ա-
մեն մի կենդանի կամ առարկա նրա համար վորոշ,
տիտուր կամ տւրախ, պատահարի գուշակ եր, հոդ չե-
թե այդ յերադները քնակի ջիւտարվելին։

Դեռևս մանուկ հարակում մորից լսել եր, վոր ա-
մեն մարդու աջ ուսի վրա հրեշտակ կա նստած, ձախ
ուսի վրա—սատանա. Նրանք շարունակ կովում են ի-
րար հետ. Հրեշտակը մարդուն դեպի բարին և մղում,
սատանան—դեպի չարը, ուստի քնելիս պետք և միշտ
ձախ ուսի վրա պառկել, վոր սատանան տակը մնա
ջարդիվ։ Ու Մարթան այդպես ել անում եր միշտ և
հաստատ հավատացած եր, վոր դիշերները ձախ ուսի
վրա պառկելով սատանային տակն և գցում ջարդում
և դրանով ուրախացնում բարի հրեշտակին։

Գարնան վերջին որերից մեկում մեռակ թորոսենց
Հեռու-մոտիկ ազգականներից մեկի թոքախտավոր
տղան՝ Դարչո անունով։ Մարթային յեկան տարան
վոր ոգնի սեեր կարելու սղավորների համար։ Յերեք
որ ու դիշեր մնաց Մարթան մեռելատանը և տուն
դարձավ թաղման որը, արդեն մութն ընկած ժամա-
նակ, յերբ ամենքն արդեն ցրվել եյին։ Հայրը նրանից
շատ առաջ եր վերապարձել և խրճիթի շեմքին նըս-
տած, սպասում եր նրան։

Մարթան մտավ, վոր ճրադ վառի և մտնելուն պետ
այնպիսի մի ճիչ արձակեց, վոր կարծես ոճ խայ-
թեց։

Այդ ճիչն այնքան սարսափելի յեր, վոր ճերումի
հայրը համարյա թե յերիտասարդական կորովով վեր
թուավ տեղից և ներս ընկավ։ Ու ներս ընկնելուն պետ
իրեն դտավ աղջկա գրկի մեջ։

— Վա՛յ, հայրիկ ջան, չնե՞րը, կատվանի՛քը, —
կանչեց Մարթան սարսափահանար, պինդ սեղմելով նրան
եր գրկի մեջ, պաշտպանություն վորոնողի պես։

Հայրը, հազիվ կարողանալով պահել իրեն ծան-
լության տակ, չուափեց նրա վկավոր և հարցրեց ծայր
սատիճան զարմացած։

— Մարթա ջան, ի՞նչ ես ասում։

— Շները, կատվանիքը, —կրկնեց Մարթան, և
հայրն զգաց, վոր նա ամբողջ մարմնով զողում է։

— Ի՞նչ չուն, ի՞նչ կատու, վորդի ջան։

— Հրեն...միսը քրքրում են...

— Ի՞նչ միս, վո՞րտեղ։

— Հրեն...թախտի տակը, թախտի տակը...

Ծերումին մի կերպ ազատեց իրեն աղջկա ցնցողա-
բար սեղմող ձեռքերից, մթության մեջ խարիսխիլով
մոտեցավ սեղանին, վոր ճրադ վառի, բայց թե ձեռ-
քերն եյին դողում և թե իրենից պոկ չեկող սարսափա-
հար աղջիկը չեր թողնում, վոր ակատ շարժումներ
դործի։ Վերջապես, սեղանի վրա յերկար տապտղե-
լուց հետո, զտավ լուցիու տուիլը և մի կերպ վառեց
լամպը։ Ու յերբ լույսի վրա նայեց աղջկան, զարման-
քից քարացավ։ Մարթայի գեմքը սարսափից ծոմովել,
այլանդակվել եր, աչքերը կարծես ուզում եյին դուրս
պրծնել խոռոչներից, հայացքն անմիա եր, յերեսին
գույն չկար և ինքն ամբողջովին դողում եր տերենց
պես։

— Մարթա ջան, եղ ի՞նչ ա հալդ, —ակամա բացականչեց ծերունին իր թույլ, դողդոջուն ձայնով, —ինչի՞ յես դողում:

— Շները, հայրիկ ջան, —կատվանիքը... ախրմիսը քրքրում են... թախտի տակը, —սարսափեած կրկնում եր Մարթան ձեռքով ցույց տալով թախտը:

— Հիսուսին ու Քրիստոսին, վորդի ջան, շուն ու կատու չկա ըստեղ, աչքիդ ա երկում, —խաչակնքեց ծերունին:

Բայց Մարթան շարունակ կրկնում եր իր ասածը և, հորը պիհնդ կպած, սարսափահար աչքերը չեր հեռացնում թախտից:

Ծերունին մի կերպ աղատվեց նրանից, դողդոջուն ձեռքով վերցրեց լամպը, մոտեցավ թախտին, դրեց գետնին, կապերտի փեշը բարձրացրեց և աչք ածեց թախտի տակը:

— Դե դու ել տես, ըստեղ ո՞ւր ա շուն ու կատու, —ասաց նա, դառնալով աղջկան:

Մարթան, առանց տեղից շարժվելու, ձեռքերը դրած ծնկներին, խոնհարվեց և չուած աչքերով հեռվից նայեց թախտի տակը, ուր բացի կավի կրակարանից, վոր նրանք ձմեռը քուրսու տակ եյին բանեցնում, փայտ կոտրելու կացնից և ալիշից, ուրիշ բան չկար:

— Զկա՞,—հարցրեց նա կամաց ծոր տալով:

— Բա կա՞: Վոր ասում եմ աչքիդ ա երեացել...

Ծերունին կապերտի փեշն իջեցրեց, լամպը վերցրեց և տարավ դրավ սեղանի վրա:

— Նստի, բալա ջան, նստի: Մի քիչ սառը ջուր խմի, վախեցած ես:

Նա վերցրեց ջրի թասը, մոտեցավ պատի տակ կի-

սով չափ գետնի մեջ խրված կարասին, ջուր հանեց և քերավ դրավ աղջկա առջեւ:

Բայց Մարթան ձեռ ել չովավ: Այժմ հանգստացել եր և նստած եր աչքերը մի կետի հառած, գլուխիը ձեռքերի մեջ առած, կարծես աշխատելով մտքերը հավաքել:

— Եւր թախտի տակը չե, —չնչաց նա յերկար լոռությունից հետո, —նրանց թախտի տակը... կամ վոր քաշվեց, Դարչոյի մերն ասեց ինձ, վոր մողու միսը հանեմ թախտի տակիցը, տանեմ գանջինումը պահեմ: Կուցար, վոր հանեմ, տեսնեմ չներն ու կատվանիքը վրա յեն թափվել քրքրում... Ընե՞նց վախեցա, վոր... ընե՞նց վախեցա...

— Ի՞նչ մողու միս, —հարցըրեց ծերունին:

— Դարչոյինք վոր պահում ին... Են մատաղացուն, ելի, վոր պլասի տանեյին բոլնըսի ու Գելոր-գում մորթեյին, վոր Դարչոն լավանար:

— Են եյին մորթել քելեխին:

— Բա' :

— Վայ, վայ—ասաց ծերունին գլուխը շարժելով: — Յեսոյ դրուտս չուն ու կատվանիք ի՞ն:

— Յես ի՞մ... վախից սիրս գնացել եր... Սոխն, թե վոչինչ չկա, աչքիս պ երեացել...

— Աչքիդ ա երեացել, բա, աչքիդ, վոնցոր հըմի, —վրա բերեց ծերունին: — վե կաց, բալա ջան, վե կաց կողենքը զցի, քնենք: Իրեք որ ա չըլչարվել ես, շատ կըլես բեղարած: Հըս իմ քունն ել ա տանում:

Յեվ ծերունին, բոլորովին հանգստացած, հորան-ջեց:

Մի քանի որ Մարթայի վարժումքի մեջ մի առանձին տարրինակ բան չեր նկատվում: Առվորականի պես առավոտները վաղ վեր եր կենում, փոքրիկ ինքնայենը դցում, անկողինը հավաքում, թախոն ու հատակն ավլում, ամեն բան իր տեղը դնում ու նստում հինած զործելու մինչև ինքնայենի յեռ գալը: Հետո հոր հետ սուսավուս թեյ եր խմում ցամաք հացով և նորից դործի նստում մինչև ճաշ և մինչև յերեկո: Բայց այնուհետև հայրը նկատեց, վոր նա մենակ գործի նստած ժամանակ խսում և ինքն իրեն, դեմքով ինչ-վոր ծամածոռթյուններ և անում, յերեմն ծիծաղում առանց վորեն առիթի, յերեմն ել սպառի պես մղկտալով մրմում, լաց լինում: Մի որ ել ծերունին դրսից ներս գալով տեսավ թախոր մի կողմն և քաշել ու կացնով քանդում և դետինը:

— Մարթա՛, եղ ի՞նչ ես անում, — բացականչեց նա զարմացած և վախեցած:

— Հանում եմ... հանում եմ, — ասաց Մարթան, կացինն ուժով թափով դարկելով հողի հատակին:

— Ի՞նչը:

— Մողին...

— Ի՞նչ մողի:

— Մատաղացու մողին... մատաղացու մողին... ու գեղորդի մողին... քանի վախս ա մղում ա... բա մԵղք չի... բա մԵղքը չի... բա մնալանք, վոր չներն ու կատվանիքը զգագե՞ն...

Ասում եր ու հետևով քանդում դետինը շարունակ հողը ցաքուցրիվ տալով շտորք:

Ծերունին, տեղն ու տեղը քարացած, նայեց, նայեց, հետո մի «կայ» արագի և յերկու ձեռքով թակելով դլուխը՝ շտապից գեպի դուրս, հարաններին ողնության կանչելու:

Զանցավի մի քանի բոպե, և արդեն ամբողջ թաղը դրնգում եր, թէ «Թորոսանց Մարթան գժվել ա»: Ել մեծ, ել փոքր, ել կին, ել աղջիկ—ով ասես, բան ու գործ թողած, շտապում եր թամաշի: Թորոսանց խրճիթի ներսն ու դուրսն ասեղ դցելու տեղ չկար. իրար ձիւելով, իրար հրելով, իրար վոտ կոխ տալով ներս ելին խցկում հա խցկում խրճիթի նեղ դըռնից: Զայների ժիւորը բոնել եր ամբողջ վողոցը:

Մարթան նստած եր իր փորած գետնի վար և, կացինը ձեռին, խելազարի անմիտ հայացքով նայում եր ներսը ճխտված կանանց և յերեխաների ամբոխին: Շրթունքները շարունակ կրծում եր և գերիայի փեշը փաթաթում մատների վրա, յետ անում ու նորից փաթաթում: Նստած եր լուռ, բոյորովին ճայն չեր հանում մինչեւ իսկ այն ժամանակ, յերբ փորձում ելին խոսեցնել: Մի քանի սրտոտներ փորձեցին կացինն առնել նրա ձեռից և վեր կացնել, բայց նա կացինը չեքը կոխեց, ամբողջ մարմնով կոացավ նրա վրա և սկսեց լաց լինել յերեխայի պես, յերբ նրա ձեռքից ուզում են խել իր խաղալիքը:

Տեղահան արած թախտի ծայրին կծկվել կուչ եր յեկել ծերունի հայրը, կուղը ցցել, սպիտակ միքուքը թաղել ծնկների արանքին և մղկտում դառնագին:

Ներսը հավաքված կանայք նայում ելին ծերունում և նրա աղջկան խղճահարությամբ և մի տեսակ վախի զգացումով, վոր ակամա պատում և մարդուն

խելագարի հանդեպ: Յեկ թեպետ վոչ-վոք տեղից չեր շարժվում, բայց ամեն մեկի մեջ այդ վախի զզացումն ամ աստիճան ուժեղ եր, վոր բավական եր Մարթան հանկարծ վեր թոշեր տեղից և վրա պրծներ, իսկույն ամենքը գլխապատճառ դուրս կփախէցին ճիչ ու ծկըլ-թոցով:

Ի՞նչ այն կանանց մեջ, վորոնք ամբոխիկ ելին դուրսը՝ ներս տեղ չլինելու պատճառով, տեղի ելին ունենում հետեւալ խոսակցությունները.

— Աղջի նատու, տեսնես ինչօցն ա խելքեց ըլել: Եվոն ասում ա, թե Դարչոյի հոգեառ հրեշտակն ա խիել, յանի դորթ ա՞:

— Դե յես ի՞մ. վորն եղ ա ասում, վորն ել ասում ա, թե Բոլնիսի ո. Գեորգն ա բռնել:

— Ի՞նչ, մենամ նրա զորութենին, յանի եղ խեղճին բռնում ա ինչ անի: Հանդեպիսի կըլի եկած:

— Ասում են, թե Դարչոյենց թախտի տակը չներ ու կատվանիք են երեացել աչքին:

— Դրուստ ա, դրուստ,—խոսակցությանը խառնվեց մի ուրիշը, վորը ամենից անտարբեր, յեկել եր ամենից ուշ և դուզա յեր դործում: Ողորմածիկ Դարչոյի են շաշ մերը Բոլնըսի ո. Գեորգի համար յետ դրած մոզին վեր ա ունում քեկեխին մորթիլ տալի, մատղացուն խաշամի տեղ ուստացնում: Բա խելքը դըլ-խին կնիւարմատն ըտենց բան կանի՞: Վոր շաշ ա, շաշ, ե՛լի: Քեկեխին եղ մոզու խաշամից վորն ուստում են, ուստում, մնացածն ել դնում թախտի տակը, պահում: Յենա, իրիկնապահին, խալիսը վոր քաշվում ա, Դարչոյի մերը Մարթին ասում ա, վոր միւր թախտի տակից հանի, դնի դանջինումը: Մարթեն հենց կուանում

ա, վոր հանի, տեսնում ա չներ ու կատվանիք են թոփ ըլել մասի վրեն, քրքրում: Հա՛ ըստեղ սիրտը զնում ա վախից: Վրա յեն թափում, ջուր ածում, քրքրում, գլխում, զորով յետ բերում: Ա՛յ ըսենց ա ըլել բանը, թե վոր դրուստն ուզում եք իմանա:

— Բա չուն ու կատու չի ըլլ՛ու:

— Ի՞ր, չուն ու կատու, չե մի վոաներ: Աչքին ա բրեացել:

Թաղի կանանց այցը վերջանալուց հետո հավաքվեցին թորոսի հեռու-մոտիկ բարեկամ կանայք և ըստեցին խելք-խելքի տալ, թե ի՞նչ դարման անեն: Խորհրդակցությանը նախադահում եր հարեան խարագակետոյի այրի կինը Ռսանը, վորը հայտնի յեր իր լեզվագարությամբ և առանց վորի գործոն մասնակցության թաղում վոչինչ չեր կատարվում: Ռսանի առաջարկով վորոշեցին գիմել տերաերի փեսա դրաց և չեքիմ Գրիգորին, վորը մեծ հոչակ եր վայելում նախապաշրակած ժողովրդի շրջանում: Բերներերան լեզվին պատմում նրա անվրեպ գուշակությունների և բժշկությունների մասին, այնպես վոր տարվա բոլոր յեղանակներին և շարաթմլա բոլոր որերին նրա ընդունարանը լիքն եր լինում ամեն ազգի, ամեն հասակի ու սեռի, գլխավորապես կին-այցելուներով, վորոնք ժամերով հերթի եյին սպասում: Այդպիսի պայմաններում հեշտ չեր նրան տանից դուրս բերել առանց խոչը և կանխիկ վարձատրության: Թորոսը մի քանի գրոչներ ուներ հոգեպահում, մնացածը լրացրին սըրտացակ բարեկամներից վոմանք, մի կլորիկ դումար-

կազմեցին, սպիս Ոսանի ձեռքը և դրկեցին պրբաց Գրիգորի մոտ:

Գրբաց Գրիգորը սկզբում չեմուչում արեց, մողը քիչ համարեց, անաց, թէ ժամանակ չունի, վերջը, անսալով Ոսանի ճարտար լեզվին, համաձայնեց և խոստացավ հետեւյալ որը ճաշից հետո արցելել հիմանգին:

Մոտ քառասուն տարեկան մսեղ մարդ եր նա՝ պըստիկ ժամուն աչքերով, կլորիկ, մաքուր սափրած կարծիք դեմքով, բաճկոնի տակ հագած դեղին չնսունչի արխալուղով, վոսկեղոծ նեղ քամարով և ձեռքին շարունակ մի կարճ համրիչ դեղին հատիկներով, վոր նա ավելի շուտ ափից ափ եր նետում, քան հատիկները պցում:

Հետեւյալ որը ճաշից հետո նա կատարեց իր խոստումը և յեկալ Ոսանի առաջնորդությամբ: Նրա ճարպոտ դեմքից, մի քիչ ծուռ դրած դդակից և սովորականից ավելի ժամուն աչքերից յերեսում եր, վոր լավ կերել-խմել եր:

Յեկով ու թաղը նորից գրնդաց: Այս անդամ հետաքրքրությունն ավելի մեծ եր, քան նախորդ որը, յերը նոր եր տարածվել Մարթայի խելազարության լուրը: Թաղի կանայք, իրար ձեն տալով, վաղում ելին, վորը ծծկեր յերեխային խստած, վորը վոտաքորիկ, վոր շտափելուց չուստի մեկը մոռացած, մյուսը քարչ տալով վոտին, վորը գլխի աղլուխի ծայ ըերը շտապ կապելով, վորը կուսի աղլուխի ծայ ըերը շտապ կապելով, վորը կուրծքը կոճկելով: Ու ամենից առաջ, թաղի անթիվ յերեխաները համարյաթե տկլոր ու վոտաքորիկ, թուչկոտալով ու ծկլթագով:

Դեռ նախորդ որպանից, թախար տեղահան տնելուց և գետինը քանդելուց հետո, Մարթան բոլորովին հանգստացել եր, լեզուն փորը գցել և իր համար կար սուսուփուս: Այժմ ել, յերբ գրբաց Գրիգորը մտավ, նա հանգիստ նստած եր թախտի վրա, արմունկը հենել ծնկանը, դուիսը դրել ափին և անթարթ նախում եր պատուհանից դուրս, կարծես խոր մտածմունքի մեջ ընկղզված:

Գրբաց Գրիգորին հարգանքով և պատկառանքով առաջարկեցին խրճիթում գտնված յերկու հատիկ հնաձև աթոռաներից մեկը: Նստեց և սկսեց մանրամասն հարցուփորձ անել: Սկսեցին իրար կտրելով, իրար ուղղելով, վորը սկլերից, վորը վերջից, վորը միջից պատմել ամբողջ յեղելությունը:

Գրիղորը նստած եր գդակը յետ գցած ճակատից, աթոռի մեջքին յետ ընկած, ձեռքերը գրած կրծքին, համրիչի հատիկները մեկ-մեկ դցելով, և լսում եր նայելով մերթ Մարթային, վորը նստած եր անշարժ նույն դիրքում, և մերթ դուան կողմը, վորտեղից մեկը մյուսի յետեւից կամացուկ, իրար հրելով ու փափառով ներս եյին մտնում թաղի կանայք և տապ անում իրար քամակի:

Եեղելության պատմությունը լսելուց հետո Գրիգորը վեր կացավ, աթոռն առավ և գնաց նստեց ուղղակի Մարթայի առջև:

Մարթան վերջապես շարժվեց, նստեց ուղիղ և սկսեց խոր դիմել նրան հոնքերը կիսած. հետո հանկարծ հոնքերը վեր նետեց, լեզուն հանեց, ծափ տվավ և սկսեց ծիծաղել:

ԽԵՂԱՊԱՐԻ այդ վարմունքի վրա մի փոթկոց բարձրացավ թամաշաչի կանանց մեջ։

Դրիգորը սակայն վոչ մի ուշադրություն չդարձեց խեղագարի արդ վարմունքի վրա, համրիչը հանդիսաւ կերպով դցեց արիստուղի դրազնը, մյուս դրապանից հանեց մետաքսի թաշկինակի մեջ խնամքով փաթաթիմած ինչպո՞ր մի բան և ակսեց կամաց-կամաց բաց անել. Հնությունից Ն շատ գործածելուց մաշված ու կեղտակալած կաշեկազմ մի փոքրիկ ու հաստ գրքույկ եր, վոր նա անվանում եր «Սողոմոնի գիրք»։ Յերկար ժամանակ ծանրութարակ թերթելուց հետո վերջապես կանգ առավ մի յերեսի վրա և սկսեց կարդալ կամացուկ։

Խրճիթում բոլոր շուկները դաշտարեցին և ամենքը լարված լողություն դարձան։

Մարթան նույնպես առաջվա պես սուա եր արել, հոնքերը կիտել և անմիտ հայացքը հառել Գրիգորի շրթունքներին։ Բայց չանցավ մի քանի բովեն, յերբ հանկարծ նա յերկու ձեռքորով պինդ զարկեց ծնկներին, վեր թռավ տեղից, իրեն ներքեւ դցեց և ուղեց դուրս փախչել։

Խեղագար աղջկա այդ նոր վարմունքի վրա խրճիթում տիրող հանդիսավոր սպասողական դրությունը մեկեն սոսկալի ժխորի փոխվեց։ Սարսափահար ամբուլը ճիչ ու աղաղակով դցեց իրեն գեպի դուռը, բայց դուռն այնքան փոքր եր և ամենքն այնքան ճխտված ելին իրար, վոր համարյա վոչ վոք չկարողացավ իսկույն տիղից շարժվել, բացի դռան մոտ կանդնածներից, վորոնք դուրս փախան դլխապատռ։ Մինչև վոր մյուսների համար ել ճանապարհ կըացլեր դուրս փախան

չելու, Ոսանը և մի քանի ուրիշ սրտոտներ բռնեցին խեղագարին, վոր փորձում եր կծել նրանց ձեռքերը, տարան նորից նստեցրին թախտի վրա և գրբացի հրամանով թոկով կապեցին նրա ձեռքերը յետելից։

Խրճիթը դատարկվեց թամաշաչի կանանցից և յերեխաներից։

— Դուռը կողպեցիք, ել ոչովի ջթողաք մտնի, — Հրամայեց գրբաց Գրիգորը, վոր այժմ լուրջ և մտադրաղ կերպարանք եր առել։ Ի՞նչ ա. մայմուն խոչն խաղացնում ըստել։

Դուռը փակվեց։ Խրճիթում մնացին, բացի իրենից Գրիգորից, խեղագարից և նրա ծերունի հորից, Ոսանը և այն մի քանի սրտոտները, վորոնք բռնել ելին Մարթային։

Գրբաց Գրիգորը նստեց իր առաջվա տեղը, Մարթայի առջև, և նորից սկսեց թերթել «Սողոմոնի գիրքը»։ Խեղագարն այժմ նստած եր առաջվա պես հանդիսաւ, առանց նույնիսկ բողոքելու, վոր ձեռքերը կապել են։ Խրճիթում առ ժամանակ կատարյալ լուռություն եր տէրում։ Այնինչ դրսից լսվում եր կանանց ամբոխի զժվեցը, յերեխանց կանչն ու աղմուկը։ Փոքրիկ պատուհանը ծնկվել եր դրսից ներս նայող հետաքրքիր դիմքերով ու պսպղուն աչքերով, այնպես վոր առանց այն ել կիսախավար խրճիթը համարյա թե մթնել եր։

Ու նոր եր սկսել գրբաց Գրիգորը համապատասխան աղոթքը քթի տակ փնթփնթալ, յերբ Մարթան նորից գժության նշաններ ցույց տվալ։ Սկզբում ձեռքերը ձիգումիկ արտվ, վոր կապանքից ազատի, հետո

տեսնելով, վոր չի կարողանում, ակսեց վոտները բարդիւրի անել, վոլոր-մոլոր գալ և բղավել ու անփծել:

Գրիգորը գլուխը յերնքեց, գիրքը ծածկեց և վեր կացավ:

— Տես, տես ինչ են անում նզովվածները, — ասաց նա խորհրդավոր կերպով, դիտելով Մարթայի խեթաքար շարժումները: — Յետ արեք ձեռքերը, բալքի հանգըստանա:

Մարթայի ձեռքերը յետ արին, և խկազես վոր նա հանգստացավ և այժմ ակսեց միայն լաց լինել:

— Բա յետ զրբաց Գրիգորը չեմ ըլլի, թե վոր թողնեմ ես խեղճին լոտենց չարչարեք, — ասաց Գրիգորը նույն խորհրդավոր յեղանեկով հայտնի չե ում հասցեցին, և հրամայեց, վոր մի թաս ջուր բերեն:

Թասով ջուրը բերին: Գրիգորն առավ և դրեց թախտի վրա, Մարթայի առջեւ:

— Մի պատիկ ըրեխա չկա՞ , կանչեցեք դա:

Ռասնը գուռը բաց արեց, դրսից ներս կանչեց լազի յերեխաներից մեկին, վոր հաղին բացի մի կեղտոտ չապէիլեց ուրիշ բան չկար, և շտապեց գուռը նորից փակել մի քանի կանանց յերեխին, վորոնք ոգտվելով այդ հանգամանքից ուղում ելին ներս պըծնել:

Գրիգորը յերեխայի ձեռքեց բռնեց, տարավ նըստեցրեց թախտի վրա և թասով ջուրը քաշեց նրա առջեւ:

— Իստակ մում չունե՞ք, բերեք մի ջուխտ:

Թորոսը դողողուն ձեռքերով թարեքեց համեց յերկու հատ դեղին լուրիկ մեղքամոմ, վորից նա առնեն կիրակշտեքին վանում եր իր դաղդյանի վրա, և առվագ գրբացին:

Գրիգորը մոմերը կպցրեց Բասի պանկին իրաք դիմոց և դարձավ ներկաներին՝ դեմքի անսովոր խորհրդավոր արաւահայտությամբ:

— Բա ասիկ չեք, ես խեղճի փորը սատանեք են մտել...

— Վո՞նց թե սատանեք, — զուրբ թռավ ամենքի քերանից:

— Սատանեքը վո՞նց կը լեն. պողավոր ու պոչավոր, խկազես սատանեք եմ ասում, համար չկարծեք:

Զարհուրանքը տիրեց ներկաներին. մի քանիսը նույնիսկ յերենները խաչակինքցին: Ծերունի թուրուր խո տեղնուռտեղը քարացավ, նա միայն անստամ բերանը բաց արավ և յերկայն միրուքը տմբոմբացնելով առանց այն ել ծերությունից առաջ ընկած գլուխն ավելի առաջ տարավ դեսի դրբաց Գրիգորը և հարցրեց.

— Յետո՞...

— Յետո ի՞նչ: Յետո են, վոր իրեք հատ են ու շատ ել չար: Այս տեսաք, երկու հետ, հենց վոր սկսեցի ալորթքը կարողալ, վոնց դժվարըին: Ուզում են ես խեղճին տանեն ջուրը դցեն:

Գրբաց Գրիգորի այլ խոսքերի վրա խեղճ ծերունու գլուխը սկսեց ավելի շարժվել:

— Ա! քե մատաղ, — բացականչեց նա լալազին ձայնով, — այսր սատանեքը սրա փորն են մտնում, ի՞նչ անհն:

— Բա ո. Գևորգի հըմար յետ դըած մատաղացուն մեռելի քելեխին մորթելլը հանաք բան եք կարծո՞ւմ. բա առւրն անպատճի կթողնի՞ եղ տեսակ բանը:

— Հայլ, մեռնեմ իրան, սա եր մորթել տովե՞լ, վոր սրան ա պատժել:

— Դու գիտում չես, բիծա ջան, սուրբն արդարին ա բոնում, վոր մեղալորները խելքի դան, իրան ընդդիմ րան չանեն; Համար դու զարդ մի անի, — ավելացրեց Գրիգորը խրախուսիչ ժախտով խմելով ծերունու ուսին, — յես ես ա լավացնելու յեմ: Ինձ գրքաց Դրիդոր կատեն. սատանեք չե, Սաթայելն ել դա, իմ ձեռից պրծնիլ չե: Դե, հրմի սկսենք:

Նա հրամայեց, վոր յերկու հոդի նստեն Մարթայի աջ ու ձախ կողմը, վորպեսզի, յեթե նրա փորի մեջ նստած սատանաները, ով գիտե, նորից վեր թողնեն նրան, վոր տանեն ջուրը դցեն, բռնեն նրան, չժողովն փախչի:

Ռանը և մի ուրիշը նստեցին Մարթայի այս ու այն կողմը: Թորոսը տեղափորիեց թախտի ծայրին: Իսկ լեռը Մարթան նստած եր հանդիսատ, միանդամայն անտարբեր, թէ ինչ մն ասում և անում իր շուրջը:

Գրիգորը մոմերը վառեց, նստեց իր առաջվառեղը, աթոռի վրա, նորից բաց արայլ «Սողոմոնի դիրք» և սասաց.

— Հրմի ես աղոթքը վրա իրեք անդամ կկարդամ, սատաները մեկ-մեկ դուրս կցան, կընկնեն ես թասի շուրը: Համար մենք տեսնիլ չենք, մենակ ես ըրեխեն կտեսնի, չունքի անմեղ ա: Պատի՛կ, — դարձավ նա թասի առջև ծալտպատիկ նստած յերեխային — մտիկ առա՛ ես ջրին, աչքը հեռացնես վոչ, հենց վոր տեսնաս սատանեք մեջն են ընկնում, իմաց արա ինձ: Իմացմբ:

Յերեխան տմբամբացրեց դլուխը և աչքերը չորս շինած՝ հառեց:

Գրիգորն սկսեց կիսաճայն կարգալ, նայելով մերթ գրքին, մերթ Մարթային և մերթ յերեխային: Ներկաներին ուիրել եր նախաղաշարվածներին և սնոտկապաշտներին հասուլ այն սրբազն յերկուղածությունը, վորով նրանք սպասում են հրաշքի. այդ տրամադրությունը, սակայն ավելի նման եր ներքին սարսպի, վորովհետեւ գործը վերաբերում եր սատանաներին: Սպասողական գրության մեջ նրանք ևս իրենց կողմից նայում ենին մերթ դրացի ըրթունքներին, մերթ Մարթային և մերթ յերեխայի առջև դրած թասին, յերեկ մտածելով, թէ գուցե իրենք ել տեսնեն սատանաներին, բայց անշուշտ վոչ վոքի մտքով չեր անցնում, թէ ինչքան վոքը պիտի լինեն այդ սատանաները, վոր աեղավորվեն և խեղդվեն թասի ջրի մեջ:

Իսկ Մարթան նստած եր լուռ ու անշարժ և այնքան լուրջ, վոր վոչ վոք չեր կարծի, թէ խելագար ե: Նա աչքերը հառել եր վասած մոմերին, վորոնք, ըստ յերեւոյթին, նրա խանգարված ուղեղի մեջ մութ հիշողություններ ենին հարուցանում իր ասող ժամանակվալած-բարեպաշտական կյանքից, խաչերից ու սրբերից:

Այնինչ կանանց ամբոխի ժխորը շարունակվում էր գուրսը, միանդամայն հակապատկերը ներկայացնելով խրճիթում տիրող հանդիսավոր-սպասողական յառաջան, վորը խանգարվում եր միայն դրացի կիսաճայն ընթերցումով: Պատուհանի աղակիներն աղելի ելին ծեփել հետաքրքիր դեմքերով, ըստ յերեւոյթին գուրսն ել զգացել ենին, վոր ներսն ինչ-վոր խորհըրգավոր բան և կատարվում:

— Հը՛, մեջք չընկա՞ն, — յերկար ժամանակից հե-

տո հարցը եց գրբացը յերեխային, ընթերցումն ընդհատելով:

Յերեխան, առանց աչքերը հեռացնելու թառից, գլուխը բացասական կերպով շարժեց:

— Դայիմ են նստած, ե՛, — առաց Գրիգորը և շարունակեց ընթերցումը:

Անցավ դարձյալ մի հինգ րոպէ:

— Հը, ելի ընկա՞ն:

— Զե, պատսախանեց յերեխան:

Յերրորդ անդամ կրկնվեց նույն հարց ու պատսախանը. անպիտան չար սատանաները վոչ մի օդայմանով չելին ուղղում զուրս դալ Մարթայի փորից և թառի ըրի մեջ խեղդվել:

Թորոսը, Ոսանը և մյուսները մի տեսող հարցական հայացքով, կարծես խոսքը մեկ արած, լուս նայեցն իրար յերեսի. պարզ եր, վոր կասկածի ու թիրահավատության սուաջին չողն եր այդ, վոր վայրկենապես լուսավորեց նրանց խավար միտքը:

Գրիգորն իսկուն դպաց այդ ու մինչդեռ ներքին չփոթմունքը զսպած՝ չեր իմանում ինչ անի, վոր դուրս դա իր անհաճող գրությունից, Մարթան հանկարծ չանչ արագ նրա մրա, փչեց հանդցրեց մոմերը և սկսեց բարձրաձայն ծիծաղել իր խելապար ծիծաղով:

Գրիգորը ճարպիկորեն ողտովեց այդ հանդամանքից:

— Տեսա՞ք, — առաց նա դառն ժայիսով. — Ես ինքը չեր, ե՛. եղ են նզովյալներն ելին, վոր հանդցրին մթամ թե բանի տեղ չենք դնումք քո ազոթքը: Ես վոր բոտենց ա, հըմի յես դիտամ...

Նա պատվիրեց, վոր թառը վերցնեն, «Առղոմոնի

դիրքը» վաթաթեց թաշկինակի մեջ, գրպանը կոխեց և վեր կացալ:

— Կարա՞ք մի լախտի կամ մաթրախ ճարեք:

Այդ տարորինակ պահանջը մի նոր գարմանքի առիթ տվավ ներկաներին:

— Լախտի՞... մաթրա՞խ, — հարցը ին այս կողմից:

— Հա՛, հա՛, լախտի կամ մաթրախ, վորն ուզում արի—մեկ ա:

— Ինչի՞ հըմար, — հարցը թորոսը, ինչ-վոր վաս բան զուշակելով:

— Դե հըմի յես նստեմ ձեղ մինամին պատմե՞մ, թե ինչի հըմար, — հանկարծ բզավեց Գրիգորը զրդոված ալելի իր անհաջողությունից, քան թե այդ հարցուփորձից: — Ասում եմ ճարեցեք— ճարեցեք, թե չե ես ա կթողնեմ կդնամ:

Ու մինչդեռ, նրա բարկությունից վախեցած, Ոսանն ու մյուսները փախալով խորհրդակցում եյին իրար հետ, թե վորտեղից ճարեն լախտին կամ մաթրախը, նա նորից զոռաց անհամբեր:

— Դե՛ շուտ, յես խո կարալ չեմ ըստեղ տասը սը հաթ նստի. հըրես վորտեղ վոր ա կմթնի:

Ոսանը, կիսատ թողնելով խորհրդակցությունը, շտապեց դուրս ասելով «Ես ա զնում եմ ճարեմ», բայց բավական ժամանակ անցավ, մինչեւ վոր վերադարձավ մի մաթրախ ձեռքին:

Գրիգորը մաթրախն առավ և հրամայեց, վոր ամենքը դուրս գնան:

Այս բանն ավելի մեծ կասկած դարթեցրեց, բայց վոք չհամարձակվեց ճայն-ծպուտ հանել, վորով-

Հետև Գրիգորն այն սատիճան դաժան կերպարանք եր առել, վոր կարծես այն քաղցրախռո և ժպտերես մարդը չեր այլես : Միայն թորոսն եր, վոր համարձակորեն հարցըեց :

— Յես ել:

— Ամենքը, ամենքը : Դու ել, այս լակոտ, — դարձալ Գրիգորը յերեխային, վոր համարձակ ցցվել եր նրա առջե, ըստ յերեռյթին սպասելով, թե մի նոր պաշտոն պիտի հանձնեն իրեն :

Ամենից առաջ դուրս թռավ յերեխան : Այնուհետև սուս ու փուս մեկը մյուսի յետեկից դուրս գնացին թուրուը, Ռսանը և մյուսները :

— Եղ խալխին ել քշեցեք ակռչի մոտից, ոչովի թողնեք վոչ մտիկ անի, — գոռաց նրանց յետեկից Գրիգորը և դուռը փակեց :

Թորոսը մեծ անհանգստությամբ և մութ կասկածներ սրտում նստեց հենց այնտեղ, դուսն մոտ գետնի մեջ խրված սուլ քարի վրա, յերկայն միրուքը կախելով չորիկ-մորիկ ծնկների արանքում, իսկ Ռսանը մտազրադ դեմքով սկսեց հեռացնել կանանց ամբոխը պատուհանի մոտից, միենույն կցկառւը պատասխաներ տալով չորս կողմից իրեն ուղղված անհամբեր հարցուիսորձերին : Նույն հարցուիսորձերով շրջապատել եյին յերեխային և մյուսներին, վորոնք ներկա եյին յեղել խրճիթում կատարվածին : Սատանաների անունն իր աղդեցությունը դորժեց . վորանք յերեսները խաչակնքեցին, վորանք ահ ու դողով բոնված՝ կարկամեցին, վասմանք ել, թերահավատներից, քթերը վեր քաշեցին

ասելով՝ «սատանեք չե, մի վոտներ» : Բայց լնովհանուր ժխորն այժմ միանդամից զսպարեց : Հետաքրքրությունն իր զսպաթնակետին եր հասել . այժմ անհամբեր սպասում եյին, թե ինչ պիտի կատարվի ներսը, խբճիթում :

Իսկ խբճիթն առժամանակ խորհրդավոր լուսություն եր պահպանում :

Մեկ ել հանկարծ ներսից մի սարսափելի ճիչ լըսվեց, վորին հետեւեցին սրտամաշ աղաղակներ :

Փողոցը մի ըսովե քարացավ : Հետո սաստիկ իրարանցում ընկապվեց :

Ռսանը, վոր մեջքը պատուհանի կողմն արած՝ վոչ վոքի մոտ չեր թողնում, արագ չուս յեկավ և ձեռքերն այտերի մոտ բոնած՝ ներս նայեց ապակուց :

Ամբոխը վրա վագեց զեպի պատուհանը :

Ներսից աղաղակները լսվում եյին միալար և քանի գնում՝ սաստիկանում եյին : Մեջ ընդ մեջ լսվում եյին ինչ-վոր բանի դիպչող հարվածներ, կարծես ճիշպտով կապերտ եյին թափ տալիս և ամեն մի հարգածին հետեւում եր զդրացի հատու ձայնը, վոր սաստ եր, «ասա՛ սատանաների անունը, ասա՛ սատանաների անունը...» :

— Վաւէ, քոռնամ իս, աղջի, ծեծում ա մաթը սխով, ծեծում, — ճվաց Ռսանը և յերեսն ավելի պինդ կպցըեց ապակուն :

— Հա, ելի, հա, ելի, աղջի, — ասաց մի ուրիշ կին, վոր նույնպես աչքերը չուած՝ նայում եր պատուհանից ներս : — Վաւէ, վաւէ, վանց ա թակում, ճիշ մհոնեմ... Քա, քա, քա, ճեններն ու վոտներն ել կապել ա թու

կով... Վույ, վույ, վույ, վոնց ա թեփոխն-թեփոխն
գալիս, ձեղ մատադ...

Ու, այլևս չկարողանալով դիմանալ, նա սկսեց ծեծել պատռհանը, հետո դարձավ դեպի ամբոխը և աղաղակեց.

— Աղջի, ի՞նչ եք ըստեղ փետացել, գնացեք բաց անիլ տվեք դուռը սպանեց, ե, սպանեց են խեղճ աղջկան...

Բայց մինչ զարմանքից քարացած ամբոխը տեղից կշարժվեր, Ռսանն ամենից առաջ վազեց դեպի զուռը և սկսեց ծեծել: Նրան հետևեցին ուրիշները: Յեվ բազմաթիվ ձեռքերի կատաղի հարվածներ ելին, վոր իջնում ելին հնութեաւնից փայտոջիւներով ծածկված խարխուլ դուան տախտակներին: Արդ հարվածների ձայնը, սերսից լավող Մարթալի աղեկտուր աղաղակը, սերը, դուրսն ամբոխված կանանց և յերեխանների դժվարոցը մի կատարեալ Սոդոմ-Գոմոր ելին դարձրել փողոցը:

Թուրուը վեր եր կացել նստած տեղից և իր յերերուն վոտների վրա հաղիվ կանգնած, ծեր գլուխը հազիվ տմբամբացնելով, ապուշի պես նայում եր մեկ սրան, մեկ նրան և հարցնում.

— Ի՞նչ ա, ի՞նչ ա...

* * *

Այդ միջոցին ալրի Ռսանի պսակած տղան, վորին թաքախ ման ածող Յական ելին ասում (նա շրջիկ մրկավաճառ եր), տուն դարձավ դատարկ թաքախը գլխին, կշեռքն ուսին, չիրուխը բերնին: Նա մի բռպեկանդ առավ իրենց գուան առջև, անտարբեր նայեց:

Փողոցում աղմկող կանանց ամբոխին, կարծելով. թե կանացի սովորական մի կոփի ե, վորպիսին համարլաթե ամեն որ պատահում եր թաղում, բայց տեսնելով, վոր դաս սովորական դալմաղաներից չե, այլ ինչ-վոր մի արտակարդ բան և կատարվում, թաքախը դրեց դետնին, կշեռքը հանեց ուսից, թասակի հետ գցեց թաքախի մեջ և, չիրուխը հանելով բերնից, հարցրեց մոտ վաղող կնոջը.

— Ես ի՞նչ խաբար ա:

Կինը, չափազանց հուզված, կցկտուր խոսքերով պատմեց նրան լեզելությունը:

— Են Մարթին ա բղավիւմ, — հարցրեց Յականը, ուշագիր լեզուց հետո:

— Հա բա, հա բա, — պատասխանեց կինը լացակումած: — Սպանեց են խեղճին, սպանեց ծեծելով: Դուռն ել, տեսնում ես, քանի վախտ ա, չի բաց անում...

Յականը հանդած չիրուխը թափ տվեց կուն վրան, խրելով մեջքին կաշու դոտկի մեջ, առանց շտապելու, սակայն լայն քայլերով դիմեց դեպի Թորոսենց խըրճիթի դուռը, վորը դեռևս ծեծում ելին կատաղի թափով:

— Դեսը մի տեսնամ, — ասաց նա:

Նրան իսկուն ճանապարհ տվին:

Իր փիղիքական ուժի վրա վստահ մարդու հանգըստությամբ նա մոտեցավ, մի ձեռքը զցեց դուան տակը, ուր տախտակներից մեկի ծալըն անձրկներից փառենկել եր, մուտքով բռնեց յերկաթի փականքից, բարձրացրեց և մի անգամից դուռը կընկանան ներս շպըռտեց խըրճիթը:

Նա մտավ և նրա յետելից ներս թափվեց ամըոլը:
Նրա աչքի առջև բացվեց հետեւյալ տեսարանը. Մար-
թան ձեռքն ու վոտքը կապած՝ կողքի վրա ընկած եր
թախտի վրա. սպիտակ աղուին ընկել եր գլխից, և
դեմքը ծածկվել ցաք ու ցրիվ մաղերի մեջ, ալժմ այլիս
չեր ճշում, չեր շարժվում, այլ միայն նվզում եր ֆիզի-
քական ցավերից հոգնած: Նրա պոտ կանգնած եր
գրբաց Գրիգորը՝ մաթրախը ձեռին, քրտնքակոյի և
համրով: Դուն կրինահան ընկնելը և խրճիթն ամբո-
խով ցվին, ըստ յերեւյթին, այնքան անսպասելի
յեր նրա համար, վոր նա մի անգամից գունատվեց և
տեղնուտեղը մնաց քարացած:

Թորոսը հազիվ վոտները շարժելով մոտեցավ թախ-
տին և, խոնարհվելով աղջկա վրա, շնչաց աղեկառուր
ձայնով.

— Բայտ ջան, վորդի ջան...

Ոսանը և մի քանի ուրիշ կանաչք, սիրտ առած ծա-
կանի ներկայությունից, վրա թափվեցին և սկսեցին
արձակել Մարթալի կապանքները, ասելով՝

— Վայ քո սիրտը չմեռնի, հս վոնց ա կուլուկապ
արել...

Ցականն իր յերկայն ու մեկ հասակով ցցվեց վա-
խից և շփոթմունքից տեղնուտեղը ցամաքած Գրիգորի
առջև: Նրա աչքերը վառվում ելին ներքին զսպած
վրդովմուքից:

— Ես ի՞նչ ես արել, — ասաց նա, ցույց տալով
Մարթալին, վորդի ձախը քանի գնում նվազում եր: —
Ըստնց ես լավացնում գու հիգանդներին:

— Բա վոր աղոթքը կտրում չեր, — թոթովեց Գրի-
գորը:

— Ի՞նչ աղոթք:

— Սատանեքին քշելու աղոթքը:

— Ի՞նչ սատանեք, տա: Յես ել խո կնիկարմատ-
չեմ, վոր ուզում ես խարի: Խո չես ուզում ես սըհա-
թին բուրգդ զղեմ: Ըստնց անաստոծ բան կըլի, վոր
դու յես արել:

— Բա գժին լավացնելը վենց ես ուզում:

— Հըմի, քո խելքով, սա գիտ ա ու դու խելք,
ելի: Տո, քու խելքդ հրես ես չի. ենքան ծեծել ես, վոր
քիչ ա մնում մնուի: Աղոթք ու սատանեք ասում ա-
Տո անտեր-մունդուիկ, բա մի մարդակարի փեշակ չկմը,
վոր գնացել ջաղուբաղ կնկա փեշակ ես բռնել: Բա ել
ի՞նչ ես գդակ գնում գլխիդ, գնա լաշակ ծածկի, ելի:
Փռւ, յես քո մարդ ասողին ինչ ասեմ: Վորտեղից ել
մոգնել ա, թե սատանեք են մտել փորը, Մի հարցնող
ըլի-ի՞նչ ա սատանեն, վժրտեղից ա մտել, ընչի ա
մտել Տո, թե սատանա յես ուզում, հրեդ տեղնուտեղդ
սատանա լես, ելի, վոր սուտ-սուտ բաներով խալխին
խամբում ես, փողերը ցնցում, փորդ տողացնում:

— Սուտ-սուտ բաներով, բա ի՞նչ, — վրա բերին մի
քանի կանաչք, սրտապնդված ծականի համարձակ
խոսքերից:

— Ի՞նչքան ես ասել, դըռւստ ասա, — շարունակեց
ծականը: Եդ մաթրախը հլա մի գեսը տու...

Ու առանց սպասելու, վոր գրբաց Գրիգորն ինքը
տա, մաթրախը խլեց նրա ձեռքից և կրկնեց.

— Ասա, ի՞նչքան ես ասել:

— Քսան մանեթ, ծական ջան, քսան մանեթ, —
կանչեցին ձայներ:

— Հլա տառում եր քիչ ա, — ավելացրեց Ոսանը, վո-

մյուս կանանց հետ դեռևս զբաղված եր Մարթալով:
— Հյա քիչ ա, հը, —աչքերը վոլորելով Դրիգորի
վրա, զլուխը յերերեց Յականը, — Քսան մանեթ... Տո,
կես ապ որը թրե եմ գալի քուշեքը, որը մի ջուխտ
չուստ եմ մաշում, շատ բղավելուց բողաղս ցավում ա,
թաբախից շինքս փետացել ա, քիչ ա մնում կոտրվի
ու մի քսան շայի անջաղ եմ գատում, վոր ողլուշաղս
պահեմ, — դու քու սուստ աղոթքի ու գրի հըմար քսան
մանեթ ես առնժում, են ել հոմից (Յականը բոնեց թո-
րոսի թևից և առաջ քաշեց), — սրանից, ես նաչար
հալիսըից, Բա չամանչեցիր սրա սպիտակ միրքիցը,
բա ես սուրը միրուքը խոռով չկենամ քու գլխին: Քու
կավացրածն ել ես չի (Յական գարճար մատնացուց
արակ թախտի վրա կիսամեռ ընկած Մարթալին), ձենը
անջաղ ա դուրս գալի, ենքան ես ծեծել:

Իսկապես Մարթան այնքան նվազել եր, վոր թուզը
հառաջանքի հետ հազիվ եյին լսկում նրա բերնից
դուրս թուզող խոսքերը. «Վայ, մեռա... վայ, մեռա...»:

— Հանի ես սրհաթին քսան մանեթը, թե չե տես-
նում ես ես մաթրախը, կոթն ել հետը կկոտրեմ վրեդ:
Հը, ինչ ես փետացել, հանի քեզ ասում եմ, — գոռաց
Յականը աչքերը կրակ կտրած:

— Սիսկը, ինչ ես ուզում ինձանից, — խոսեց վեր-
ջապես գրբաց Դրիգորը, չուզելով արդպես շուտ անձ-
նատուր լինել, առանց իրեն արդարացնելու: — Յես իս
զոսով չեկա, չեյին ուզում — չեյին հանչի, փողն ել իս
զոսով չառա, չեյին ուզում — չեյին տա: Այ, հարցրու,
ելի, յես գալիս ի, հաղար ու մի արաջանք պաղատան-
քով չբերի՞ն:

— Հըմի չես ուզում տա, ելի, — հանդիստ լսելոց

հետո ասաց Յականը չարագուշակ ձայնով և մաթրախը
բարձրացրեց:

Կինը, վոր կանգնած եր կողքին, վրա ընկավ նրա
թմբին:

— Վայ, Յական ջան, — շացաց նա վախեցած, —
կանոնիծի...

— Տո, դենը դնա հա, — ասաց Յականն արհամա-
րանքով. թեր խլելով կնոջ ձեռքից: — Կանոնիծի... Յես
մեկ սրա աղոթքին եմ հավատում, մեկ ել անեծքից
վախենում: Սուստ իս չի ասում. ես դիմ ձեր բաներն
ա, Կոնկարմատներ չեք համի խելքով: Դուք, վոր շը-
յեք, ես ջաղուբազները վերտեղից կըլեն... Հը, ինչ ես
ասում, — դարձավ նա գրբաց Դրիգորին, — տակիս իս,
թե չե:

Գրբաց գրիգորը դեռևս տատանվում եր. յերեսում
եր, վոր շատ դժվար եր նրա համար քստն ուռելուց
զրկվելը, բայց մի կողմից Յականի բոնած սպառնա-
կան դիրքը, մլուս կողմից տին վախը, վոր բոնել եր
նրան, տեսնելով իր «բժշկության» հետեվանքը, ստի-
պեցին նրան հնազանդվել:

— Վոր զոսի յես կանգնել, կտամ, ճարս ինչ, —
ասաց նա ձեռքը կոխելով բաճկոնի ծոցի գրալանը:
Այնտեղից հանեց կաշիվ մի հաստ թղթապանակ, համ-
բեց քսան ուռելին ե, տալով Յականին, ավելացրեց. —
տակիս եմ, համա իմաց կաց, վոր արածդ մարդավա-
րություն չի: Ափսոս իմ ժամանակը, եսքան վախիստ,
վոր իմ տակը նստած ըլելի...

— Եհ, ել շատ մի խոսա, — ընդհատեց նրան Յա-
կանը, — փաստավուսեդ քաշի գնա:

Գրբաց Դրիգորը գալիք քաշեց աչքերին և, ամո-

թից ու անզոր կատաղությունից դուհատ, կանանց ծաղրական ժպիտների տակ դիմեց դեպի դուռը:

— Համա չկարծես, թե եղ ա պրծար, — կանչեց նրա լիտեկից ծականը. — Թող մի ես աղջիկը չլավանաքու դամդեքից... իմ մարդավարությունը դու են վախտը կտևնաս...

Մարթան թեև շուտով լավացավ մաթրախի խարաններից, բայց մի քանի ամսից հետո մեռավ նույն խելագար գրության մեջ: Նրան շուտով հետեւց և ծնուռնի հայրը:

Իսկ գրբաց Գրիգորը մինչև որս ել շարունակում է իր արհեստը առաջվա պես ժպատուն աշքերով և կարմիր ալտերով:

ՍԱՔՈՒԼ ՈՒԽՏ ԳՆԱՑ

Դուրգար Սաքուլը կամաց բաց արեց դուռը և ներս մտավ:

Նրա կինը, Նատոն, թևերը մինչև արմունկները քշտած՝ պպղած եր հատակի վրա և լվացք եր անում կոծկած թարախում: Բովսարու մեջ կասկարալի վրա դրած կաթօսայի տակ մի քանի բարակ փայտ եր ծըխում: Հողի հատակի վրա բավկական ցեխ եր գոյացել և լվացքի սապնոս ջուրը տեղանու դուր եր կապել: Սենյակի ողը հազեցած եր խոնավության, սապնաջրի և ծխի գարշ հոտով: Թախտի վրա դրած որորոցի մեջ քնած եր ծծի լիբեխան:

Կինը նայեց մարդու հիվանդոտ, թախծալի լերեսին, և նրա սիրտը ճմլվեց: «Ելի լավ չի»—մտածեց նա և վշտահար մնաց նալելիս մարդու լերեսին:

Սաքուլը դուռը լիտ դրեց, զնաց դեպի թախտը, մութաքեն առաջ քաշեց և պառկեց:

— Մի բան զցի վրես, — ասաց նա թուլլ ձայնով և վոտները կուչ արեց:

Նատոն սապնոս ձեռները սրբեց, վեր կացավ, բարձրացավ թախտը, ցեխոս չուստերը թողնելով գետնին, ծալքից հանեց բավկան մեծ ու հաստ մի վերմակ և ծածկեց մարդուն:

— Լավ ծածկի, ջանս սըթսըթում ա, — ասաց Սաքուլը, վերմակը գլխին քաշելով:

Նատոն վերմակի ծալքերը ներս կոխեց կողքերից, վոր բաց տեղեր չմնան:

— Ուզնում ես, մի լըհեր ել ծածկեմ, — ասաց:
— Ծածկի:

Նատոն-բերեց մի ուրիշ վերմակ ել գցեց նրա վրա
և նորից կողքերը տապտպեց: Յիժմ Սաքուլը վոտով-
գլխով կորած եր վերմակների տակ: Նատոն լվացքը
մոռացած՝ առժամանակ նստած մնաց մարդու մոտ:
Կարճ, թախծալից լուսությունից հետո վերմակների
ծալրիրը յետ քաշեց մարդու լերեսից և շնչաց.

— Սաքուլ:

Սաքուլն աչքերը բաց արեց և նայեց նրան հար-
ցական հայացքով:

— Բա չգնացիր հիվանդանոց:
— Գնացի:
— Ի՞նչ ասեցին:
— Տասը շայի լեն ուզում:
— Բա ասում են՝ ով չունի, չեն ուզում:
— Ասեցին պոլիցիցը յան տերտերիցը շուղթ բեր,
վոր չունես:
— Յետո գնացիր պոլիցին:
— Աև գրողը տեսնի պոլիցի լերեսը. նրանց «զալթ-
րի» գլուխն մվ ունի:
— Դե տերտերի մոտ գնայիր:
— Տերտերի հերն ել ընտեղ անիծեմ: Նոր չեր, վոր
տեսա մելքանումը փորս ցցած: Տաս շային ինչ ա, ա-
սում ա, ջահել մարդ ես, մի որ վոր բանես, ասում ա,
տաս շայի չե, իրեք մանեթ ել կվեկալնես: Ախր, տեր
հայր, ասում եմ, ջանս չի գալիս: Լավ, լավ, ասում ա,
հանաք եմ անում. կիրակի որը ժամ արի, ասում ա,
կտամ:
— Ա՛յ, նրա ջանը դուրս դա, — սրտով բացական-

չեց նատոն: — Եդ հալով մինչև կիրակի վոնց մուլափ
տաս: Քելեխ ըլեր, ձեռաց վոնց վաղ կտար:

Ու լոեց դաղված սրտով: Յեվ լերկար ժամանակ
անասելի վշտով նայում եր մարդու մաշված, դեղնած
դեմքին, վորի վրա հիվանդությունը մեռելալին անըզ-
դայություն եր դրոշմել Յերեք ամբողջ տարի յե, վոր
այդ անհասկանալի հիվանդությունը որ որի վրա հա-
լում, մաշում և Սաքուլին: Ել դեղ չմնաց, վոր վորը
չածեց, ել հեքիմ չմնաց, վորին չդիմեց: Որեր ու շա-
բաթներ խաչերի դռանն անցկացրին, մատաղներ մոր-
թեցին, կարմիր ու սպիտակ հագցրին, բայց և այնպես
վոլինչ, վոլինչ չոգնեց: Ընդհակառակը՝ Սաքուլն որ
որի վրա վատացավ, հիվանդությունն ավելի խոր բը-
նակալեց: Սկզբներում ելի քիչ ու միշ կարողանում
եր բանել, բայց վերջին ժամանակներն ուրագը մի քանի
անգամ վրա անելուց հետո չունչը կտրվում եր և սիրտն
այնպես արագ բարախում, վոր կարծում եր, թե դուրս
պիտի պըծնի ըերնից: Ալդ յերեք տարվա ընթացքում
նրանք քանդվեցին, քարը քսվեցին. տանն ել վոսկե-
ղեն ու արծաթեղեն չմնաց գրավ դրին, ժամանակին
չկարողացան թափել — կորցրին, ավելորդ բաները ծա-
խեցին-ծախծինցին, հետո պարտքերի մեջ թաղվեցին
և այսոր, իերբ յերթեկի հիվանդների քաղաքային ըու-
ժարանում կանոնավոր դեղ ու դարման անելու համար
«տաս շայի» լեն ուզում, — չկա:

Նատոն մի ծանր թառանչ քաշեց:

— Սաքուլ — շնչաց նորից:

Սաքուլն աչքերը բաց արեց:

— Սոված չեմ:

— Զե:

— Ախը վոչ յերեկ, վոչ եսոր դատ չես առել բերանդ, մի բան ելա կեր, վոր ուժ ունենաս: Հեղնաբանք մատաղ են բերել քեզ հըմար պահել, վեր կաց կե: Աղին ել ճրես փոնիցը հացերը կրերի:

— Վոր չեմ ուզում, ինչ ուտեմ:

— Հաջաթ չի, զորով կե: Թե չե, բերանդ ըտենց հուփ տված խո ջիս հալից կընկնես: Վեր կաց:

— Են, — նեղորտությամբ արտասանեց Սաքուլը և աչքերը նորից փակեց:

Նատոն կրկին հառաջեց և կարճ ժամանակ նստած եր լուռ ու վշտահար մտածմունքի մեջ:

— Հա, Սաքուլ ջան, — հանկարծ ասաց նա, ըստ իերեութին, մի բան հիշելով: — Առավոտն ուզում ելի պատմեմ քեզ, վեր կենամ տեսնեմ դնացել ես: Գիշերս ախը մի զարմանալի յերազ տեսա: Միթամ թե դու ըտենց թախտի վրա պառկած ես, մեկ ել տեսնեմ մի կարմիր ձիավոր թուրը ձեռին նի ընկավ ու վրա պըծավ քեզ: «Ինչ ես պառկել ասում ա, ընչի՞ չես դաշիս: Ես սըհաթիս թրովս կտամ, ասում ա, կես կանեմ, թե չես եկել»: Ու թուրը դորդ, վոր վրա չբերեց: Հա ըտեղ յես զարթեցի: Միթս ընենց լքոցն եր ընկել, վոր կարծում ելի դորթ եր: Հըմի, Սաքուլ ջան, աս ասում եմ, աղին վոր գա, բացանողի մոտ դրկենք: Յես ինչ զիտամ, բալի ելի խաչիցն ես ու անմեղ տեղը քեզ պտի փչացնես դեղերով:

— Տո, ելի խաչ, — վրա բերեց Սաքուլը դառն հանդիմանությամբ:

— Վհւէ, ըտենց մի ասի, Սաքուլ ջան, խաչը կընեղանա, — ասաց նատոն վախեցած: — Դորթ ա, իւաշերի դուռը շատ ենք ման եկել, համա ինչ կա վոր,

ես մեկն ել փորձենք: Ախը չես իմանում, ե, իմ որումս ըսենց ափաշկարա տեսած չեմ. կասես ես նըմուտին ել կանգնած ա աչքիս առջել ձիուն նստած, թուրը հանած: Հօը, Սաքուլ ջան, աղին վոր գա, դրկենք:

Սաքուլն արդեն ծածկել եր աչքերը ձանձրացած:

— Ե՞ն, արեք, ինչ ուզում եք, — ասաց նա խորին անտարբերությամբ:

— Հա, Սաքուլ ջան, դրկենք, դրկենք:

Ռորորոցի յերեխան լաց յեղավ:

Նատոն վեր կացավ, զնաց չոքեց որորոցի մոտ, նախ սկսեց որորել, հետո վոր տեսավ ձայնը չի կտրում, ծիծը բերանը դրեց և, մի ձեռքով որորոցը դրկած, մտախոհության մեջ ընկավ՝ աչքերը մի կետի հառած:

* *

Դուռը բացվեց: Կապուտ սուփրի մեջ հացերը շաշակին, տնքտնքալով մտավ աղին—Սաքուլի մալը, կարճահասամակ, չորացած պառակ մի կին, վշտահար, խորշումած բարի դեմքով, Յետսելց մտավ նրա թոռը— չորս-հինգ տարեկան վտիս մի աղջիկ, ձեռներով յերկու հաց իրար վրա պինդ սեղմած կրծքին: Հացերից մեկը, տակինը, սահել եր ներքեւ և սպառնում եր ընկոնել: Նա վաղելով հասավ թախտին, բարձրացավ վոտների ծայրերի վրա և հացերն անմսաս դրեց թախտի ծայրին:

— Ըհ՛ը, հըլա չեր պառկել, — տխուր քըթմնջաց պառակը, տեսնելով վորդուն պառկած: — Ասա, վոր կարում չես, ել իսի՞ ես ծեքքալի դուրս գնում:

Շալակի հացը դրեց թախտի վրա և կամաց դարձավ հաբսին.

— Աղջի, քնած ա: — Գիտում չեմ, նոր զարթուն եր, — պատրասխանեց Նատոն:

Պառավը մոտեցավ վողրուն և խոնրհվեց նրա վրա: — Սաքուլ ջմն:

— Հը:
— Թնած չես:

— Չե:

— Վճնց ես:

— Ե՞ն, յես իմ վոնց եմ:

— Տաք-տաք հաց եմ բերել վե կաց կե:

— Ո՞հ, զահլա տարաք, ելի, ջղայնոտությամբ արտասանեց Սաքուլ վերմակների տակից և շուռ ինկավ մյուս կողքին:

Պառավը, խորին վշտով համակված, մի կարճ ժամանակ խոնրհված մնաց վորդու վրա, հետո մի ծանր թառանչ քաշեց, գնաց բաց արեց կապոցը և սկսեց թեժ-թեժ հացերը փռել թախտի վրա, վոր սառչեն: Այժմ սենյակի մեջ տարածվեց տաք-տաք հացերի տիրթալի հոտը:

— Աղջի, բա հիվանդանոց չի գնացի՞լ, — կամաց հարցրեց հարսին, վոր ծիծը տալը վերջացնելով, լսակընել եր որորել յերեխալին:

Նատոն պատմեց, վոր հիվանդանոցում առանց չքավորութեան վկայականի չեն ընդունել ձրի, Պատմեց և այս, վոր տերտերն ասել եր, թե վկայականը կերպակի որը կտա:

— Ա՛յ, տափը դնեմ նրա գլուխը, — վրդովված բացականչեց բարի պառավը: — Բա նա հոգի ունի: Ես հալին վհնց միա մինչև կիրակի, աղջի. ըսոր յերկուշաբթի ա ախր: Հը:

— Իե յես ինչ գիտամ, — տխուր ու հուսահատ պատասխանեց հաըսը և որորոցը մի կողմ քաշեց, վորովհետև թախտի մի տախտակը խիստ ճրմռում եր նրա տակ: — Աղջի, արի մի որորի, Ե, վլացքս մաց, — գարձավ նա աղջկան, վորը թաֆա հացեց մի կտոր կտրած ախորժակով կծոտում եր:

Փոքրիկ աղջիկը բարձրացավ թախտը, ծալապատիկ նստեց որորոցի մոտ և մի ձեռքով սկսեց որորել իերեխային, իսկ մյուսով շարունակում եր կծոտել հացը:

Նատոն իջավ թախտից, մերկ վոտներին հագավ չուստերը, բայց վլացքին դիմելուց առաջ նստեց ըսկեսոր մոտ և փսփսաց նրա ականջին:

— Աղի ջան, արի մի ձեռաց գնա բացանողի մոտ, տեհանք ինչ կտսի են իմ երազի հըմա, առավոտը վոր քեզ պատմեցի: Ա՛յ, կտեսնես, թե ո. Դեռդը չըմի են ձիավորը:

— Իե յես ինչ գիտամ, վորդի, — վշտահար արտասանեց պառավը: — Ս. Դկորդն ել են եր, վոր գնացինք, մատաղն ել են եր, վոր մորթեցինք, ճար չըլավ ու, — մեռնեմ նրա վոտին:

Յեկ պառավը լերկուղածութեամբ բռնված, ծանր հառաչեց:

— Չե, աղի ջան, աղի, հոգուտ մեռնեմ, վե կաց հենց հիմիսկեթ գնա, — աղաչեց հարսը: — Ա՛յ, մի արասի ունեմ, տամ:

Նատոն դերիալի զրպանից շտապով հանեց թաշկինակը, յետ արեց ծայրին կապած մի քսան կոպեկանոց և ավեց սկսաորը: Պառավը, լուռ ու մտախոն, դրամը կապեց իր բռնօթուտ, դեղնած թաշկինակի մեջ, գրպանը կոխեց, ծածկեց իր խունացած սկ շալը և դուրս գնաց:

Անցավ մոտ յերեք ժամ։ Նատոն պարզաջրել եր վաշքը և փռում եր փողոցում կապած թոկի վրա, վոր վերադարձավ սկսուրը։

— Վեր կացմավ, աղջի, — հարցրեց պառավը։

— Զե. ընենց լավ քնած ա վոր, — պատասխանեց Նատոն և իր կողմից հարցրեց. — Ընչի՞ եսքան ուշացար։

Պառավը վրայից վերցրեց շալը և նստեց դռան մոտ գետնին ամբացրած նստարանի վրա։

— Էսկի ճար ու ճամփա կմք վոր. — ասաց նա։ — Ինչքան մուշտարի ունի քոռացածը, — տունը զմփում եր։

— Յանի լավ խմացմավ, աղի ջան, — հարցրեց հարսը։

— Ընենց մին-մին յետ ասեց, վոնց վոր մեր տանը նստած ըլեր։

— Ի՞...
— Քու արելու,

Նատոն արագ նստեց սկսոր կողքին։

— Ի՞նչ ասեց, — հարցրեց նա չափաղանց հետաքրքրված։

— Վոր ասեմ, ասում ա, կորուստ ա — կորուստ չի. վոր ասեմ, ասում ա, ճամփորդ ա — ճամփորդ չի։ Ես ով-վոր վոր ա, վոչ ըրեխա յա, վոչ ծեր, Ես ինչ ա, ասում ա, առաջն ընկած, ուրագ ա, թե ինչ — չեմ դիտում, համա ինչ արած, ասում ա, վոր խեղճը ճեռումը զը-վաթ չունի վեկալնի։

— Ի՞, զժրթ, աղի՞ ջան, — բացականչեց Նատոն զարմանքից տարված։

— Են աստոծը։ Ափսուս, ասում ա, ըժում ինչ լավ

աղամորդի ա, եւ Ես յերբ ա, ասում ա, հիվանդացել, վոր ըսենց թել ա կտրվել Հըես պարզ ըրեռում ա, ելի, ասում ա, ունեցած-չունեցածը դեղ ու դարձանի ա տվել, համա զատ չի զառել։ Ես մվքեր են, ասում ա, երկուսը պստիկ են, մեկը — մենձ։ Ես մենածը քիրն ա, ասում ա, թե կնիկը, շատ ա դարդ անում։ Հըես մեկն ել կա, ասում ա, պառավ ա, սա ել ա, ասում ա, շատ տարակուսած։ Դե ես ել դու յես, Ելի, ասում ա, ինչ ես շատ զանլա տանում։

— Վույ զժրթ, աղի ջան, — բացականչեց Նատոն, վորի աչքերը վառվում ելին ծալրահեղ զարմանքով և հիասքանչումով։

— Ղորթս վհրն ա, աղջի։ Ասում ա Ելի, ընենց մին-մին յետ ասեց քոռացածը, վոնց վոր մեր տանը նստած ըլի։

— Ըժում։

— Ըժում... Ես ինչ ա, ասում ա, ձիավոր մ, թե թեավոր, համա հողեղեն չի։ Հըես-հըես ասում ա, պրնկներից կրակ ա թափվում, կասես թոնիր ըլի։ Դե խաչ ա, Ելի, ասում ա. յես խո իմաստուն չեմ, ասում ա, վոր ամեն բան դբուստ իմանամ։ Ում համբուրող ա, ասում ա, ս. Սարգսի, թե ս. Գևորգի, ուխտ պիտի գնա։ Դե ուրիշ ինչ ասեմ, ասում ա, ես ա, Ելի։

— Վույ մեռնեմ ս. Սարգսի եր ս. Գևորգի ել ողորմութենին, — արտասանեց Նատոն և, աչքերը յերկինք զցած, ջերմեռանդությամբ խաչակնքեց յերեսը։ — Տեսար, երազս դորթ զուրս եկավ։ Թուանամ յես, անցկացած տարին զոխտուների յետելց ընկանք, չդնացինք թելիթ ու հըմի տեսնում եմս...»

— Հա, ես ել ասեց, — ընդհատեց նրան պառավը,

մտարերելով բաց անողին պատվերը.—իրեք որ ու գիշեր,
ասում ա, պաի պառկած մնա խաչի տակը. ոճորքը
յերկինքը պաի ըլի, ասում ա, կողենքը — գետինքը,
չունքի, ասում ա, հրեղեն-թևավոր ձիավորը թռչում
ա յերկնքի ու գետնքի մեջ տեղը:

Նատոն նորից ու ավելի, ջերմեռանդությամբ խա-
չակնքեց յերեսը և ասաց վճռական կերպով.

— Յես ես ա մում եմ յետ դնում թ՛, իբթի ս. Գեոր-
գի հըմար, մեռնեմ նրա սուրբ զորութենին:

Նա վեր կացավ, շտապելով փոեց լվացքի վերջին
կտորները և ներս գնաց սենյակը: Սկեսուրը հետևեց
նրան:

Նատոն չուստերը թողեց ցեխուտ հատակին, բարձ-
րացավ թախտը, պատի մեջ գտնված պահարանից հա-
նեց յերկու դեղին մեղրամոմ, զգուշորեն, վորպեսզի
թախտի տախտակները չճրճռան վոտի տակ, մոտեցավ
քնած ամուսնուն, մոմերը պառուտ տվեց նրա գլխի
վերել, հետո նույն զգուշ քայլերով իջավ, հագավ
չուստերը և մոմերը տարավ գրեց բուխարու գլխին,
ուր յերեռմ ելին ամեն շաբաթ գիշեր վառվող մոմերի
պահած հետքերը:

*

Հիվանդը տնքաց և շաբաթվեց վերմակների տակ:
Պառավը մոտեցավ նրան:

— Սաքուլ:

— Հը:

— Զարթուն Բու:

— Հա:

— Գնացքի ախը բացանողի մոտ:

Սաքուլը վերմակների ծալրերը յետ քաշեց յերեսից
և հետաքրքրությամբ նայեց մոք աչքերին:

— Հա-մ: Ի՞նչ ասեց:

Նրա կարմրատակած թաց յերեսին և տենդոտ,
պլազոդ աչքերից յերեռմ եր, վոր քնի մեջ կազդուրիչ
քրախնք եր յեկել:

— Վճէ, եղ ինչ լավ ա ըլեւ Սաքուլ ջան, հրեգ-
քրախնք ա յեկել, — մոտ վագելով բացականչեց Նա-
տոն ուրախացած և, իսկույն իր զլիի սպիտակ աղ-
լուխն առնելով, սրբեց ամուսնու յերեսի քրտինքը:—
Բաց չըլես, Սաքուլ ջան, բաց չըլես, — ավելացրեց նա
և սկսեց տապապել վերմակների ծալրերը նրա շուր-
ջը:— Ընենց լավ իմացել ա, Սաքուլ ջան, վոր արմացքը
Ազի ջան, մի պատմի, ե:

Պառավը ծալրապատիկ նստեց վորդու մոտ և սկսեց
ավելի մանրամասնորեն պատմել բացանողի զուշակու-
թյունները:

Նատոն նստել եր մարդու վատների մոտ և շարու-
նակ նայում եր նրա գեմքին՝ կարծես ստուգելու հա-
մար, թե բացանողի ճիշտ դուշակությունն արդիոք
նրան ևս նույն զարմանքն ու հիացքն և պատճառում,
ինչ վոր իրեն:

Սաքուլը լսում եր լուս և, ըստ յերեռութին, ան-
տարեր. միայն չորացած շրթունքներն եր լսուառում:

Փոքրիկ աղջիկը մի վոաով որորու եր որորոցը և
տիկնիկ եր խաղում: Ելք տիկնիկն ինքն եր շինել. մի-
տափակ կոճակի վրա սպիտակ փալաս եր փաթաթել
կոճակը կարի ու թերով կապկապել եր մի փոքրիկ փար-
տի ծալրին, փալտին հազըրել եր դերիալի պես եր
ձեռքով կարած մի փոքրիկ տոպրակ, և տիկնիկը կազմ

ու պատրաստ խաղում եր նրա ձեռքին: Նրա տիկնախաղն ել պարզ եր, ինչպես իր տիկնիկը. շրթունքներով ճշգացնում եր պարերգի պես մի բան և ձեռքերով պար եր ածում տիկնիկը թախտի վրա:

— Հըմի ինչ ես ասում, վորդի ջան, գնում ենք թելեթ, թե չե, — հարցրեց պառավը պատմությունը վերջանալուց հետո:

— Ընով գնանք, ե, — ասաց Սաքուլը: — Տաս շայի չունեմ, վոր հիվանդանոցումը տամ, թելեթ վհնց գընանք: Եթի քիչ-քիչ մի երկու թումանը հերիք չի:

— Ի, Սաքուլ ջան, ըտենց մի ասի, խաչը հնեղանա: Երկու թումանն ինչ ա, վոր չես կարա մեկից ճարի: Կդնաս ասածու ողորմութենով կլավանաս, կդաս կբանես, պարտքդ երկու շաբաթումը կտաս:

Սաքուլը յերկար ժամանակ չեր համաձայնում նոր պարտք անելու, քանի վոր արդեն բավական հին պարտքեր ուներ վճարելու, Բացի դրանից, նրա վիճակը տեսնելով, ով եր գժվել պարտք տալու նրան:

— Տունդ գրավ դի, գլուխը քարը, տունը ջանիցդ խո լավ չի—ասաց նատոն:

— Դու ել բան ասացիր, — նկատեց Սաքուլը ջղայնացած: — Բալքի չլավացա, մեռա, ընչով եք թաղելու: Հաց շատ կճարեք, այ, ուտելու, վոր տան քրին ել քաշեք: Ես մի քնձոտա տունն ա, ելի, թողեք ես ելա մնա ձեզ, վոր քուչումը չմնաք:

— Ե՞ն ընչեր ես ասում, Սաքուլ ջան,— բացականչեց պառավը մեղմ կշամբանքով: — Եդ ինչ ասելու բաներ են, վոր ասում ես: Մի քիչ ել մեզ խեղճ արի, ե, սիրտներս կրակ ես գցում, փթոթում:

Յեվ պառավի բարի, վշտահար աչքերը թաց լեղան:

— Դա ըսկի աստված ունի վոր, — բեկրեկ ձախով արտասանեց Նատոն և զլիի աղլուխի ծալը սեղմեց, աչքերին:

Մի րոպէ սենյակում ճնշող լուսիցուն ալրեց: Լոհել եր նույնիսկ փոքրիկ աղջիկը և, տիկնիկը գոգին զըրած, յերեխայական հետաքըքությանը նայում եր տատին, մորը հորը:

— Լով, ես մեկն ել թող ձեր ասածն ըլի, — վերջապես համաձայնեց Սաքուլը, վոր ինքն ևս դզացել եր վերջին խոսքերի ծանրությունը:

* * *

Յերեկոյան գեմ նա գնաց իրեն լավ ծանոթ մի կապարուի մոտ, վորն ամքողջ քաղաքի հյուսների, վորմատիրների և մշակների շըջանում: հայտնի իեր Սերգեյ Ստեփանիչ, կամ ոլարդապես Սերգո անունով:

Սերգեյ Ստեփանիչը, — խոշոր արտաքինով, խոշոր բեխերով, մոտ ճիշտն տարեկան մի տղամարդ, սև ատլասի արխալուղով, վորի վրա հուրհըտախն եր տալիս ժամացուցի վոսկե հաստ շղթան, — նստած եր մի նոր հսկայական շինության բակում իրար վրա դարսած հաստ տախտակների վրա, արխալուղի վրայից հագած ամառվա վերարկուի փեշերը գոգին հավաքած, և տեր-վողորմայան՝ ձեռքին՝ դիտում եր որվա վերջին աշխատանքները: Տասնյակ վարպետներ և մշակներ զըմքում եին կիսաշեն պատերի զլիին, տախտակամածների վրա, բակե մեջ, ցեմենտի տակառների, աշվազի, հողի, ցեխի, գաջի ու կրի կույտերի և բուրգեր կաղմած աղյուսների շուրջը: Մի շատ բարձր պատի գլխին վորմատիրներից մեկը — մի պարսիկ — փափառէ

գլխին, մայր մտնող արեի կարմիր ճաճանչներով վողողված, համ շարում եր պատը, համ կլկացնում մի բայաթի շատ ախորժալուր տեսորով:

— Ռւստա Սաքուլ, — բացականչեց Սերգեյ Ստեփանիչը: — Տո, եղ ի՞նչ ա հարդ, ելի հիվանդ ես:

— Հա, աղա ջան:

— Տնաշեն, բա վհնց չլավացաբ մինչև հըմի: Ըսկի դեղմեղ անում են:

— Քնչոր ունեյի, դիմ դեղի ու համի տվի ու, իս ի՞նչ պիտամ: Ես անտեր ցավը մտել ա ջանս, դուրս չի գալիս:

— Բա ըսկի չես բանում:

— Թե վոր լավ եմ ըլում, ընչի՞ չե, մին-մին բանում եմ, համա մին-մին բանելով ի՞նչ կըլի: Մի տօւն ողուշալ պահելը դժար ա, աղա:

— Այ, թե ուզում ես, բան: շատ ունեմ, ըստեղ ել, ուրիշ տեղ եք արի բանի:

— Ուզում եմ, վհնց չեմ ուզում, աղա, այ, սրանց վոր տեսնում եմ (Սաքուլը ձեռքով ցույց տվալ շուրջը), ջանս կրակ ա ընկնում, համա վոր ես անտեր ձեռներում հարաքաթ ջա:

— Բա ընչի՞ յես յեկել:

— Եկել եմ, վոր... կմկմաց Սաքուլն աչքերը վայր թողնելով և չվերջացրեց:

— Վոր ելի փող ուզես, չե:

— Հա, աղա ջան, — արտասանեց Սաքուլը խեղճինեղճ նայելով նրան:

— Բա են առաջիւ տասը մանեթը:

— Դե են առաջիւ տասը մանեթն ել... դե, իհարկե, — նորից կմկմաց Սաքուլը և ավելացրեց — թե վոր...

— Ի՞նչ թե վոր:

— Թե վոր... յես ի՞նչ գիտամ, գրավ կուղես...

— Ի՞նչ գրավի:

— Դե դիտես ելի, աղա ջան, մի տուն ունեմ...

— Տուն ել ասում: — Սերգեյ Ստեփանիչն անկեղծ զվարճությամբ ծիծաղեց, կայտառ պատանու պես վեր թռավ տեղից և ձեռքով թափ տվալ քամակը: — Տո, տանդ վոր մի քացի տամ, շուռ կզաւ: Բան ունես, բան ասա:

— Դե, ի՞նչ ասեմ, աղա, եղ ա, ինչոր ունեմ: Աւզում ես՝ առ, չես ումզում՝ ասա գնա Քուռն ընկիւ Թւրիշ ճար:

Սերգեյ Ստեփանիչը նորից ծիծաղեց:

— Վայ, խեղճ իմ Սաքուլ ի՞նչ լավ ժարդ ես, — ասաց բարեսրտությամբ խփելով նրա ուսին: — Դու ինձ ես ասա, ելի ի՞նչքան ես ուզում:

— Ելի վոր մի քան մանեթ տաս, աղա...

— Քսան մանեթ: Տո, քսան մանեթն ի՞նչ ա, քսան մանեթին մեկ փշեցի — հանգավ, — շաբունակեց ծիծաղելով Սերգեյ Ստեփանիչը:

— Դե, հլա քսան մանեթ ել հերիք ա, աղա, — նրա խոսքերից սրտապնդված ասաց Սաքուլը, — ու թե վոր վերջը...

Սերգեյ Ստեփանիչը հանկարծ լուրջ դեմք ընդունեց:

— Ե՛, եղ չըլավ, եղ չըլավ, ուստա Սաքուլ, — շտապնց ընդհատել նրան: — Քսան մանեթն ել վոր տալիս եմ, Սաքուլ ջան, հոգուս խաթեր եմ տալիս, չունքի ըավ ժարդ ես: լավ ուստա յես, ինձ հըմար շատ ես բանել, համ ել խմող չես:

— Աստված քեզ յերկար կյանք տա, աղա ջան:
Յես ել քու հացը շտա եմ կերել, շնորհակալ եմ. դե
ինչ ասեմ, աղա ջան, թե վոր լավացա, չմեռա. են
յես գիտամ ելի:

— Դե, հըմի մի քիչ սպասի, հրես շաբաշ կանեն,
կդնանք ինձ մոտ մի վեքսիլ կզբենք յեռուուն մանե-
թի, — են առաջվա տասը մանեթն ել հետու եմ ասում, —
ու վերջը, յերբ վոր կլավանաս, կամ փողը կտաս,
կամ փողի տեղ կրանես: Հը, լավ չեմ ասում, — հարց-
րեց Սերդեց Սետփանիչը, տեսնելով, վոր Սաքուլը,
վեքսիլի անունը լսելով, մի քիչ մտատանջութիւն
մեջ ընկավ:

— Դե վոնցվոր ուզում ես, աղա ջան. — ասաց
Սաքուլն ականջի յետել քորելով:

— Զե, դժու վանց ես ուզում: Վեքսիլ նրա հըմար
եմ ասում, վոր տան դրավը դամաղալ բան ա — ել
նատարիուս, ել կուպչի, ել պոշլինի, — որեր կքաշի,
համ ել անմեղ տեղը ծախսեր կդնա:

— Լավ, թող վեքսիլ ըլի, համաձայնեց Սաքուլը:

*

*

Հետեւալ որն ևեթ նատոն մի քանի արշին սպիտակ
միտկալ գնեց, շապիկ կարեց և հագցրեց Սաքուլին
արխալուղի վրայից, խկ մի քանի որից հետո «թելիֆ-
կեն» բարձած, իրենք ել յերեխաներով վրեն նստած
առափոյան վաղ բռնեցին թելեթի ճանապարհը: «թե-
լիֆկեն» յետել վոտներից պինդ կտպկատած՝ պառկած
եր մատաղացու վոչխարը և գլուխը դրած «թելիֆկեն»
ճրճուցող տախտակներին՝ իր վոչխարամիտ հալացքով
նայում եր յետեւից յերկար ու մեկ ձգվող արկակեղ
փոշու խճուղուն:

Յերկար, քարքարոտ ճանապարհը, «թելիֆկեն» տա-
տանումը, տոթ լեղանակը բոլորովին ուժասպառ արին
Սաքուլին, այնպես վոր յերբ ճաշի դեմ, թելիթ հա-
սան, մոր և կնոջ ոգնությամբ հազիվ կարողացավ
իջնել «թելիֆկեց» և վոտները քաշ տալով, գնաց
նստեց հսկայական ընկուղենու տակ յերկալն նստա-
բանի ծալըրին:

Նույն ընկուղենու ընդարձակ հովանու տակ քա-
ռակուսի տախտակամածի վրա հավաքված եյին զուգ-
ված-դարդարված մի խումբ տիկիններ, որիորդներ և
գպրոցական տղաներ ու աղջիկներ՝ թիֆլոսեցի հարուստ
բաղադների. բախկալների ու զինեվաճարների ընտա-
նիքներից, վորոնք ծառաներով ու աղախիներով լեկել
բոնել եյին վանքի ամենալավ սենյակները վոչ այն-
քան իրրե ուխավոր, վորքան իրրե ամառող: Նույն
տեղը առանձնակի նստած եյին իրար կողքի դյուղի
յերկու քահանաները, ամեն մեկի ձեռքին մի հովանոց,
և աշքերը քաղցած գայլերի պիս տնկել եյին գեպի
ուխտավորների բնակարանների յերկայն պատշգամբը,
վորտեղ աղախիները և ծառաները սուրճի պատրաս-
տություններ ելին տեսնում սպիտակ սփորցներով
ծածկված սեղանների վրա:

Վանահայրը — խող կտրած մի վարդապետ կա-
պայով և թասակը գլխին — իր բնակարանի պատշ-
գամբում, զանգակատան տակ, նարդի յեր խաղում
ուխտավոր ընտանիքներից մեկին պատկանող մի լե-
րիտասարդի հետ:

— Դուք գնացեք համբուրեցեք, մինչեւ յես տեղա-
շորը կցցեմ ու բարգն ել տուն կածեմ, — ասաց նա-
տոն սկիսորն ու ամուսնուն:

Նար-Դաս—5

Պառավն առավ Սաքուլի թեր, մտան լեկեղեցի, մոմ վառեցին, համբուրեցին, ծունը դրին, աղոթք առին, դարձալ համբուրեցին, «պահպանիչ» ասել տվին քահանաներից մեկին, վորը շտապել եր ներս մտնել յեկեղեցի նրանց յետելից: Այդ բոլորը տեսնց այնքան յերկար, վոր յերբ գուրս յեկան, նատոն, բացանողի պատվերի համաձայն, արդեն անկողին եր պատրաստել յեկեղեցու պատի տակ, յետենի կողմը և հետները բերած իրեղեները թափել եր գտատարկ սենյակներից մեկում: Ծծի յերեխան լաց եր լինում փոքրիկ աղջկա դոզին, վորը որորելով և «ուշ-ուր» անելով ապարդյուն աշխատում եր լսեցնել նրան:

Յեկեղեցուց դուրս գալուն պես Սաքուլը պառկեց անկողնում:

Սայրը ժողեց նրան և գնաց հարսին ոդնելու, վոր անյակը կարգի դնեն: Սենյակը խոնավ և աղառու եր:

Այդ և հետեւյալ որը գիշեր-ցերեկ Սաքուլը պառկած եր անկողնում յեկեղեցու պատի տակ: Գիշերները նրա մոտ նստած հակում եր մայրը համարյա անքուն: Բարերախտաբար այդ յերկու որը յեղանակը լավ եր, և Սաքուլը բավական լավ եր զգում իրեն: Յերբորդ որը առավոտան մատաղը մորթեցին: Ամենալավ կտորները և մորթին տարան վանահայրը, տերտերները, տիրացուն և ժամկոչը, մնացածից շատը բաժանեցին հարեան ուխտավորներին, իսկ մսաջուրը տարան գյուղի բոկոտն յերեխաները և կանայք, վոր հավաքվել ելին հաղար ու մի տեսակ ամաններ ձեռքներին:

Որը տոթ եր, շունչ քաշել շեր լինում: Յերեկոյան դեմ յերկինքը թխպեց, արագորին սեացավ, հրեղեն կայծ ակներն սկսեցին պատռել ամպերի կուրծքը նախ

հեռավոր ու խուլ, հետո ավելի ու ավելի մոտեցող և աւժգին վորոտառմներով. ողը սկսեց շարժվել և ցրտել. հետո հանկարծ այնպիսի մի ուժգին փոթորիկ բարձրացավ շրխկոցով ու թրխկոցով, վոր յերկինք ու լերկիր խաճանկեցին իրար փոշով ու աղբով: Մի ինչ-վոր ցուրտ բան, կորիկ ու պստիկ, հրացանի կոտորակի պես թրխկաց Սաքուլի յերեսին, վոր վերմակի տակ պառկած դիտում եր մոլեգնած բնության այս արհամիրքը: Մի կոտորակին հետևեց յերկրորդը, յերբորդը... ավելի ու ավելի հաճախ ու խոշոր: Սաքուլը շտապեց շուր գալ կողքի և գլուխը ծածկեց վերմակի տակ: Նույն ըոպելին զգաց, վոր կարկտախան անձրել թակում և վերմակը, նառոն ձեռաց վազացրեց մի մեծ կապերտ և ձգեց նրա վրա: Պառավն ել մի յերկու տոպպրակ բերեց և ձգեց կապերտի վրա:

Սաքուլը կուչ եր յեկել այդ ծանրության տակ, ձնշվելով ողի պակասությունից, և ականջ եր դնում, թե ինչպես կարկտախան հորդառատ անձրել շիշփուցով թակում եր տոպպրակներն ու կապերտը, թե ինչպես յերկինքը գորգուում եր ահեղագոչ վորոտումներով համարյա թե անընդհատ, թե ինչպես հառաչում ու շառաչում եյին ընկույզենին և մցուս ծառերը փոթորկի ուժգին թափահարութներից: Նա զգաց, թե ինչպես անձրեի ջրից գոյացած մի առվակ ծլլալին ներս խուժեց բարձի վրալով, անախորժ սառնությամբ սողաց ականջի մոտով և սկսեց գուր կապել տակը, ծծվելով ներքնակի մեջ: Առվակներ եյին, վոր վազում եյին անկողնի կողքերից:

Կինն ու մայրը, հորդառատ անձրեի տակ թրջելով, շփոթված, չելին իմանում ինչ անեն: Բացանողը

պատվիրել եր, վոր հիվանդը լիրեք որ ու գիշեր պիտք և պառկած մնա խաչի տակ բացոթլա, մինչդեռ լիրեք որ ու գիշերը դեռ չեր լրացել իսկ հիվանդին այդ հորդահօս անձրեի տակ թռինելն անկարելի յեր՝ — Աղջի, վեր առնենք տուն տանենք, — առում եր պառավը:

— Բա վոր իրեք որը չի թամամել — առարկում եր նատոն:

— Աղջի, բա ես անձրել չես տեսնեմ:
— Դե ասում եմ վորտեղ վոր ա՞ կկտրի:
— Վարդիան կկտրի, աղջի, տես, ե, վոնց ա հուրհու բատում:

Հիրավի, անձրել կարծես միտք չուներ կտրվելու Ալժմ կարկուտն ել անձրեի լիր փոխվել և ջրերը թափվում եին ախքան հորդ ու առատ՝ վոր նրանց թանձրության մեջ լիրեկնքի փալատակումները հաղիկ եին լուսավորում մթաղնած յերկիրը: Ցերեկնքի համարյա անընդհատ վորոտի ձայները, անձրեի շփշփոցը՝ մոտակա ձորակի միջով վազող ջրերի քչքոցը և ծառերի շառաչը միախառնվելով՝ ախնպիսի մի ժխոր եյին բարձրացրել, վոր իրար մոտ կանգնած հարս ու սկեսուր հաղիկ եյին լուսմ իրար ձայն:

Սաքուլը, անկողնու մեջ կուշ լեկած, զգումներ եը՝ թե ինչպես այս ու այն կողմից ներս ծորացող առվակները շատանում են և վերմակն անձրեի ջրերից թրջված տոպրակներից ու կապերտից հիտղնետե խոնավանալով ճնշում ե իր վտիտ մարմինը: Ոդ չկար, վոր շնչեր և շնչածն ել բաղնիքի տաք դորոշու պես մի բան եր, վորից քիչ եր մոտակներից Տեսնելով, վոր այլ և չի կարողանում դիմանալ, վրայի ծանրութունը

մի կողմ շպրտեց և նստեց անկողնում: Ալժմ անձրեն ակսեց թակել ուղղակի նրա գլուխն ու միջքը:

— Տո, բա դուք աստված չունեք. ինձ խո սպանեցիք բատեղ, — կանչեց նա:

Կինն ու մայրը շտապեցին նրան վերկացնել և հորդահօս անձրեի տակ մի կերպ տեղափոխեցին սենյակ:

* * *

Ցերեք որվա ուխտն արդեն կատարված եր, թեև Սաքուլը լկորորդ որվա գիշերը չեր անցկացրել բաց յերկնքի տակ: Զորբորդ որը «թելեմկեն» քաղաքից յեկավ, վոր մեր ուխտավորներին տուն տանի: Սաքուլին պառկեցրին «թելեմկի» մեջ ուժից բոլորովին ընկած: Ճանապարհին մի գլուխ բղավում եր կողերի մեջ զգացած անտանելի ծակոցներից: դադարում եր բղավելուց այն ժամանակ միայն, յերբ հազը բռնում եր: Հաղում եր չոր ու թուզը, վորի ժամանակ ձայնը կարծես հորից եր գուրս գալիս: Ցերեկնմն պարզապես եր լինում: Մայրն ու կինը նստած եյին կողքին և հետները վերցրած գինու շնչից յերեսին ջուր եյին ցրցամ տալիս, վոր շունչը յետ բերի:

* * *

Թախտի վրա, անկողնու մեջ պառկած և Սաքուլը, գլուխը կապած սպիտակ փաթաթանով, վորի տակից գուրս են պրծել յերկարացած մաղերը և, քրտնքից ու կեղարից թաղիք դարձած կպել վոսկրացրած գունքերին: Դիսքին մնացել ե միայն քիթը խոշոր ու սուր, և աչքերը, անագին ու պաղպուն ապակու պես նայում են բաց դանով դեպի դուրս: Այնտեղ ամառվա միջո-

բելի արեւը հրաշեկ ճառագալթներով կիզում և դիմացի տան պատը և այն աստիճան շողջողում, վոր ուղիդ նայելիս մարդու աչքերը ցավում են: Ուղղակի դռան առջե, ստվերի մեջ նստած և փողոցի պառավ շունը և, կարմիր լեզուն հանած, հեթեթում և տապից: Սաքուլը բարձն ի վեր կիսանստած, անթարթ նայում և դուրս բթացող հայացքով և ծանր շունչ քաշում: Ծերկու որե, վոր կողերի մեջ այլևս ծակծկոցներ չի զգում. հաղնես քչացել և, բայց այնտեղ, ներսը, ինչ-վոր տարուրինակ դատարկություն և զգում. կարծես թոքը, սիրու և ամբողջ փառութիքը հանել դուրս են թափել:

Անհուն վիշտը ցամաքած դեմքին՝ մայրը նստած և մեռնող վորդու կողքին և թաշկինակով քշում և ճանձերը նրա դեմքից: Նատոն որորոցի մոտ չոքած՝ ծիծ և տալիս լերեխալին և հուսահատ հայացքով անթարթ նայում սենյակի պուճախին, վորտեղ անսներկ զայն առատորեն ծծել և գետնի խոնավությունը և տեղ-տեղ թափել: Նրա հայացքը ցուց և տալիս, վոր նա առաջուց արդեն հաջտվել և անխուսափելի թշվառության հետ: Թախտի վրա, լուսամուտի առջե չոքած և փոքրիկ աղջիկը և աշխատում և բռնել ապակիների վրա պղղացող ճանձերը:

Ծանր ու չարագուշակ լուռթյուն և տիրում սենյակում և դուրսը: Այդ լուռթյունը խանգարում է խառթութ ծախող մի կինսո, վորը թարախը գլխին և կենոքն ուսին՝ անցնում և դռան մոտով և իր առողջ թոքերի ամբողջ թափով աղաղակում. «Թութա, թութա, ախառի թութա»: Նա մի րոպե կանգ և առնում բաց դռան առջե, նայում և ներս, իր թափ ճանով հարցնում: «Խառը թութ չեք ուղում» և, տեսնելով՝

վոր պատասխան չի ստանում, շարունակում և ճանապարհ՝ կշեռքը շրխկացնելով և փողոցն աղմկելով իր հուժկու կանչով: Աւ կյանքի առորջան հիշեցնող այդ կանչը, մի բողեք վանելով մահվան ուրվականը, լսում և մի առժամանակ ևս, մինչև վոր հետզետե խրանալով լուսմ և վերջապես, և մահվան ուրվականը նորից դալիս և իր փսխուելը տարածելու մեռնողի սենյակում առաջվանից ալելի ծանր ու չարագուշակ լուռթյան մեջ:

Հիվանդն այժմ պառկած և աչքերը փակ, և յեթե ծանր հեքը չլինի, տեսնողը կկարծի, թե մեռած և Պառավ մայրը անհանգստացած աչքը չի հոռացնում նրա գեմքից: Նրա դլուխը սաստիկ շարժվում և ըստ լերկութին, ուղում և ինչ-վոր տակ, բայց չի համարձակվում: Վերջապես դադարում և ճանձերը քշելուց և, խոնարհվելով վորդու դեմքի վրա, շշնջում և անհամարձակորեն:

— Սաքու ջան...

Սաքուլը կամաց բաց և անում աչքերը և նայում նրան:

— Ի՞նչ կը ի, վոր տերտերին իմաց տանք:

Տո, ելի տերտեր, — բացականչեց Սաքուլը գալրութի այնպիսի հանկարծական բռնկումով, վոր մայրն ել, կինն ել ապացեցին, թե վնրանդից նա, վորի ձայնը մինչև այժմ հաղիկ եր լսվում, հանկարծ արդպիսի մի ուլժ հավաքից իր մեջ: — Տո, ձեր տերտերն ու խաչը չե՞ր վոր ինձ ես տեղը հասցըին... ել ինչ եք ուղում ինձանից... թողեք, ելի, հանդիստ հոգիս տամ..

Նրա ձայնը հանկարծ կտրվեց, աչքերը լցվեցին արտասուրքով, և նա այլևս վոչինչ չկարողացավ արտասանել:

— Դե յես ինչ գիտեմ, վորդի ջան, ասում եմ բա-

լի..., — արտասանեց մայրը կոկծալից և առանց խոսքը վերջացնելու լոեց, վորպիսզի այլս չգրգոի վորդուն:

Առ առ ժամանակ խանդարված չարագուշակ ծանր լությունը գալիս և նորից թագավորելու մեռնողի սենյակում:

Սաքուլը կամաց-կամաց հանգստանում և և մտառու հայացքը անկում դիմացի տան արեակեզ պատին: Յերկար լությունից հետո նրա շրթունքները շարժվում են. ինչ-վոր բան և ասում, բայց դժվար և լինում վլորոշել արտասանածը:

— Ի՞նչ, Սաքուլ ջան, — հաբցնում և մայրը, խոնարհվելով նրա գեմքին:

Նատոն, վոր զեռ ևս շարունակում եր ծիծ տալ լերեխային: գեմքը դարձնում և դեպի նա և ականջը սրում:

— Ասում եմ փոթքագիրկ Սերգոն, — շնչում և մեռնողը, ամեն մի խոսքի վրա հազիվ շունչը լիտ բերելով, — են, վոր իրեք թուժան եմ պարտ... վիս մարդ չի... կլի, վոր չուզի... Համա թե ուզի... յարադ տվեք... Թե հերիք չանի... քամարս ծախեցեք... հոգիս չանրացնեք...

Խեղճ պառավ մայրը միանդամայն կարկամում և չի իմանում ինչ ասի:

Նատոն զգում ե, թե ինչպես ամուր մի բան բռնում և բռեկը: Գլուխը զնում և որորոցի վրա, գեմքը ծածկում կոնկրի մեջ և ամեն կերպ աշխատում և զապել խեղդող հեծկոտանքը:

Իսկ փոքրիկ աղջիկը շարունակում և մատները շարժիլ լուսամուտի ապակիների վրա, վոր բռնի ճանձերը, և նմանացներով կինտոյի կանաչին, մեքենայառար կանչում և կամացուկ՝ «թութա, թութա, տիտան թութա»:

ՀՈԳՈՒՆ ՎՐԱ ՀԱՍԱՎ

Զմեռնամուտ որերից մեկն եր. Մութը գեռ բոլորվին չեր կոխել լերկիրը: Յերկինքը պղտոր եր զարնան ջրի պես: Կատաղի քամին վժժալով ներս եր պրծնում փողոցի մի բերանից, թոցնում եր առաջին պատահած մարդու գդակը, լիզում եր գետնից աղբն ու փոշին, ծեծում եր դռներն ու պատուհանները, բարձրացնում պատովն եր տալիս մանրավաճառի խանութի ճակատից կախված ցուցանակն ու կորչում փողոցի մյուս բերանից: Լապտերավառը, սանդուղն ուսին, փոքրիկ լապտերը ձեռքին, վազում եր լապտերները վառելու: Փողոցի անկյունում արդեն վառված լապտերը, հողմածեծ, ծոել եր գլուխը և նայում եր շուրջը կեղտոտ ապակիների միջից մարդու ցավագար ճպռոս աչքերի պես: Ամալի փողոցում մի փոքրիկ շուն կուչ եր լիկել մի փակ դռան առջե, սրթսրթում եր ամբողջ մարմնով և կաղկանձում:

Նաղշքար Դավիթը գնում եր տուն, մատների ծայրերը կապույտ արխալուզի գրաբանները կոխած: Քամին փոփոացնում եր նրա մաշված չուխայի փեշերը և կարմիր աղլուխը, վոր մի ծայրով պնդացրած եր կոդքին կաշու գոտիից: Ամբողջ հագուստը, սկսած գոտից մինչև վոտնամանները, ծածկված եր ամեն գուշնի ներկերի բծերով, վորոնց մեջ առանձնապես աչքի ելին ընկնում սպիտակները: Նա անցնում եր անհույս ու աննպատակ մարդու անորոշ քայլերով և քթի տակ մըթմըթում եր տրտունջի և հայնոյանքի պես մի բան:

Ցուրտ քամին ծեծում եր նրա մազակալ յերեսը, փողով ծածկում միրուքը, բեխերն ու թավ հոնքերը, ստիպում ծածկել աչքերը, սպառնում խլել գդակը, վոր նա քաշել եր մինչև ականջները, և յերբեմն-յերբեմն դրո՞ն տալիս նրա վրա այնքան ուժգին. վոր նա ակամա կանգ եր առնում և ամբողջ մարմնով առաջ թեքվում, վոր յիշութեա չզնա: Բայց նա վոչինչ չեր զգում. զգում եր միայն մի բան — սիրուհու չափ տենչալի և մահվան չափ անդիմադրելի, զգում եր ծարավ, վոգելից խմիչքի անհունուն ծարավ, վորից լեզուն ցամաքել եր բերանում, վորկորը քերվում եր, աղիքները գաւարվում ելին փորում և ամբողջ մարմինը կարծես զրկվել եր սովորական ջերմությունից:

Ամբողջ յերեք շաբաթ եր, վոր պարապ եր, գործ չկար, չեր ճարվում: Զանեանամուտ եր, տուն շինողը շինել պրծել եր, վերանորոգողը՝ վերանորոգել պրծել. այլիս վոչ վոք նոր տուն չեր շինում, վոչ վոք հատակները, պատշամբները, տանիքները ներկել չեր տալիս, պատշարին նոր պաստաներ կպցնել չեր տաւիս: Նաղշարների բանի որերը անցել գնացել ելին:

Ամառվա և աշնան աշխատանքի փողն որ գալիս եր, որ գնում: Այժմ — վոչ մի ու գրոշ գրպանում, վոր աչքը կոխեր: Իսկ այսոր առաջին անգամն եր, վոր բերանը մի կաթիլ անգամ չեր առել վոչ արաղից, վոչ գինուց: Մի ամբողջ որ... Խենթանալու բան եր այդ, և նա անկեղծ կերպով զարմանում եր, վոր մինչև այժմ դեռ խելքը չեր կորցրել կամ չեր մեռել: Այն ինչ մինչև այսոր, մինչև այս տաժանելի մի որը, ամբողջ ամսվա ընթացքում և հետո, յերբ գրպանում միշտ փող կար, պատահել եր մի որ, գեթ մի հատիկ որ, վոր

բանի ժամանակ ձեռաց չվագեր մստակած «պադվալը» բերանը մի քիչ թաց անելու կամ բանից հետո ամբողջ ժամերով չնստեր զինետանը իր ընկերների հետ և լավ «թրջված» տուն չդառնար կես-գիշերին բայաթի յերգելով: Իսկ այժմ... Գոնե ապառիկ տային մի կես թունգի զինի կամ մի «տրիցատկա» արագ. — չե՛, չիշին տալիս անխիզները, այսինքն տվել ելին, բայց ել չելին տալիս, տեսնելով, վոր արդեն հավաքված պարտքը վճարել չի կարողանում, մինչդեռ այդ ապերախտների մոտ եր թողել իր վաստակած գրեթե ըուլոր փողերը: Գոնե ընկերներից մեկն ու մեկը հրավիրեր. — չե՛, չելին հրավիրում: ամենքն ել իր պես պարապ ելին, ամենքի գրպանումն ել մկներ ելին խաղում: Անտեր տանն ել չկար այնպիսի մի բան — արծաթի գլաւ վոսկի մատանի, ականջի ող կամ գորգ, թեկող կնոջից ծածուկ տաներ գրավ դներ կամ ծախեր. — տունը՝ սրբած, կինն ու յերեխաները՝ տկլոր, ինքը՝ դառ ու դատարկի:

Այսոր գինելաճառը; վորի մոտ նա թողել եր իր ամառվա գրեթե ամբողջ վաստակը, բաց արեց նրա առջև գավթարը և ասաց:

— Այ, ուստա Դավիթ, տամը մանեթ հինգ շաբի նիսիա կա վրեդ. բե տու, ախպեր, ու ելի ինչքան ուղում ես՝ նստի խմի, քեզ անուշ ըլի:

Ու, չայելով Դավիթի աղաչանք-պաղատանքին, մեռավ-կարգեց՝ մի բաժակ ողի չավեց, վոր ցամաքած բերանը թաց աներ ու մի քիչ տաքանար այս անպիտան ցուրտ յեղանակին:

Այժմ նա տուն եր դառնում հուսը բոլորովին կտրած և խիստ չարացած ամենքի և ամեն բանի վրա:

Աւ վոր մտածում եր, թե վաղն ել, միուս որն ել, իերորդ որն ել — մի գիտե դարձալ քանի որել — նույն անհաջողությունը պիտի ունենար, ինչ վոր ալսոր, քիչ եր մնում իսկապես խենթանար: Մատներով անդադար պրալտում եր արխալուզի գրալանները, հուսաբով, թե մի գուցե տաս կամ տասնհինգ կոպեկանոց մի դրամ խցկված լինի կարկատանների արանքը, ինչպես շատ անդամ եր պատահել փող ունեցած ժամանակ, բայց մատների ծայրերը միայն շշշափում ելին գղղղված գրալանների մազանման մճճված կեղտը:

Քամու գեմ կովելով, նա մտավ իրենց նեղ ու ծուռ փողոցը, վորի յերկանքով այս ու այն կողմը իրար հենված ելին, կարծես չթափվելու համար, խղճուկ տնակներ ցածր, հողածածկ կտուրներով, ծուռտիկ-մուռտիկ պատոհաններով, փտած դռներով, վարը գետնի մեջ խրված, վորը՝ զետանից բարձր:

Դավիթը կանգ առալ այդ գոներից մեկի առջև, վորի ծակոտիներից և ճեղքերից ճրադի լույս եր յերեսում: Փոխանակ ծեծելու, նա վոտը բարձրացրեց և մի պինդ հարված տվեց դուանը: Դուռը ճրճաց՝ քիչ մնաց տեղահան լիներ, բայց չբացվեց. ներսից փակ եր: Այդ բանն ավելի կատաղեցրեց Դավիթին, և նա կրկնեց հարվածն առաջգանից ավելի պինդ:

— Մեսել ե՞ք, սատկել ե՞ք, — գոռաց նա, սարսափելի հալոնյանքներ թափելով:

Ներսից լսվեց դուան փականքի չըխկոցը: Վոտաբորիկ, պատառոտուն հագուստով, խճճված մազերով մի փոքրիկ աղջիկ դուռը բաց արավ և, ցրախց սարսելով, մի կողմ քաշվեց, վոր հալրը ներս մտնի:

Դավիթը մտավ արլուն կտրած աչքերով:

Աղջիկը սովալլուկ հալացքով աչքի տակից նայեց հոր դատարկ ձեռներին և այն միջոցին, յերբ փակում եր դուռը, մի ծանր հարված դգաց զլխին: Նա ձայն չհանեց, այլ ձեռքերը դրեց գագաթին և տեղնուտեղը պաղեց տապ-տապ արած հավի պես: Հստ յերեսութին սպասում եր թե հարվածը պիտի կրկնվի և իր մանկական սովալլուկ աւրմանի փիզիկական ամբողջ ույժը վոսկրացած ձեռքերի մեջ հալաքած՝ աշխատում եր պաշտպանել գլուխը շեքերի մեջ կոխած:

Սակայն հալոր բավականացավ մի հարվածով միայն և անմիջապես գարձավ կնոջը, վոր թախտի վրա նըստած կար եր անում լամպի լուսով:

— Համ, մեռել ե՞ք, սատկել ե՞ք: Տո, դուռը եսքան կոտրատում եմ չեք իմաննեմ: Այ խլանաք դուք, խլանաք: Պինդ ել կողպել եք, թե ի՞նչ: Գիտամ, ենքան բան-ման ունես անտեր տանդ, վոր վախենում ես նի չթափվեն, չթլանեն: Վայ ձեր ծնուղը չորանա, ձեր ծնունդը, Դուք խո ինձ հմար կնիկ ու վորդիք չեք, ցավ ու կրակ եք ինձ հմար, ցավ ու կրակ գա ձեր գլխին: Ել ջըրումս բարաքաթ չմնաց, ինչ դու եղ կոտրած վոստ տուն դրիր ըստեղ..,

Դավիթի արտասանած ամեն մի պարբերությունը համեմված եր ամենալընտիր և յերենմն շատ ինքնուրույն հայոցյանքներով:

Կինն ամենեին ձայն չհանեց, նույնիսկ գլուխը չբարձրացրեց կարի վրայից: Ամուսնու գորգոռոցն ու հալուանքն այնքան սովորական բան ելին դարձել նրա համար, վոր միանգամայն կորցրել ելին իրենց բոլոր նշանակությունն ու ազդեցությունը, և վաղուց եր արդեն, վոր Մալին այլևս չեր պատասխանում, մի անգամ

առ միշտ համոզվելով, վոր այդ վոչ միայն անողութ, այլ նույնիսկ վտանգավոր ե, վորովինեաւ խոսքը խոսք եր բերում, և Դավիթը վերջիվերջո խոսքից անցնում եր «գործի»։ Կնոջ միակ պատասխանը լուռթյունն ու անտարբերությունն եր լինում։ Շունը հաջեր, թե Դավիթը — այդ միենունն եր նրա համար։ Պատահում եր, վոր Դավիթն ամբողջ ժամերով գուռում՝ գորգուռում, հայ-հոյում եր ամենազգվելի ածականներով, բայց Մալին դլուխը կախ մնում եր իր բանին, քարի պես լուր ու անտարբեր։

Մանը, շատ ծանր ելին խեղճ կնոջ քաշած որերն արբեցող ամուսնու ձեռքին։ Ինչ Մային վոտ եր զրել ամուսնու տուն, վոչ սի լավ որ չեր տեսել միշտ ծեծ ու հայնոյանք, միշտ հայնոյանք ու ծեծ։ Ծեծն ու հայնոյանքն ելի մնաս չունի. — այդ բանին այսպիս թե ամսպես զեռ կարելի յեր զիմանալ, — ըալց գոնե տան և յերեխանների հոգսը քաշեր, այդ ել չկար. ինչ վաս-տակում եր, իր փորը ածում։ Ուրեմն ել ինչո՞ւ յեր. ավելի լավ չե՞ր լինի, վոր իսկի լիներ, խեղճ կինը գոնե հանգիստ իր բանին կկենար, գոնե գիշերները չեր սպասի ահուզով, թե ահա վորտեղ վոր և պիտի գա իր գահինը արբած-տրաքած, յերեխաններին լեղաճաք անի, ամբողջ թաղը հավաքի գլմին։ Տունը ինքն եր պահում, յերեխաններին ինքն եր հաղցնում, կերակրում իր ձեռքի աշխատանքով, ուրեմն ել ինչացնւ յեր այդ միշտ արբած մարդը, ել ինչ սրտով եր բղավում, հայ-հոյում, ծեծում, ինչո՞ւ և ինչ իրավունքով։

Մալին աշխատում եր, գիշեր-ցերեկ աշխատում, — կար եր անում, լվացք եր անում, հաց եր թխում, թոկ եր գզում, բարդաններ եր կարում, հինած եր հինում,

պարսիկ վաճառականների համար նուշ, ընկույզ, տիկի եր կոտորում. կարիքը ստիպել եր նրան վարժվելու ամեն տեսակ աշխատանքի, և վոչ մի որ նրա ձեռքը դադար չեր առնում։ Հարատե աշխատանքը, զրկանք-ներն ու հոգսերը և ամուսնու պատաճառ ֆիզիքական ու բարյական տանջանքները հալումաշ ելին արել խեղճին։ Նրա կյանքը դարձել եր մի տեսակ անտա-նական, չեր իմանում՝ ինչ որ ե լուսանում, ինչ որ մթնում. մի, բան եր միայն իմանում — յերեխանները քաղցած են՝ պետք ե աշխատել՝ յերեխանները տկոր են՝ պետք ե աշխատել ատանտերը պահանջում ե վարձը՝ պետք ե աշխատել։

Ահա այս գիշեր ել, շաբաթ գիշեր ե, կերակրուեք ե, յերը ամեն աշխատանք դադար ե առնում, նա դարձյալ աշխատում ե. կարում ե ամբողջ որը՝ վաղ առավոտից նստած, վորպեսդի վերջացնի, տանի տա տիրոջը, մի քանի կոպեկ փող ստանա գեթ. վաղը մի քիչ հաց առ-նելու։ Առանց այն ել յերեխանները այսուր ամբողջ որը սովոր մնաստում ելին։ Փոքրն արդեն շատ մնաստուց հոգնել, քնիլ ե, մեծն ել, աղջիկը՝ չես իմանում ինչի յե սպասում։ Նրա մատանները փետացել են, ասեղը հա-զիվ են բռնում. մեջքը, կորացել ե, վոր շտկում ե, կարծում ե, թե վողնաշարն ուզում ե կոտրվել։

Յերկար, շատ յերկար գորգոռաց Դավիթը, հայնուեց, ել մեռել ու կենդան չթողեց, հետո պառկեց թախտի վրա, ձեռները գրեց գլմի տակ և սկսեց նայել առաս-տաղի կաթիւքից բազմազան դույներ ստացած, ճաք-ճաքած գերաններին։

Փոքրիկ, աղջիկը, վոր հոր ահից հենց այնպիս ել մնացել եր դռան մոտ պալպած, ուր դռան ճեղքերից

փչող սառը քամին մրսեցնում եր նրա վտիտ մարմինը, կամաց վերկացավ, կատվի քալերով գնաց բարձրացավ թախտը և նստեց մոր մոտ, մերկ սրունքները ծածկելով չթի դերիայի կարճ փեշերի տակ: Շուտով նրա աչքերի կոպերը ծանրացան, և նա նստած տեղն սկսեց նիբհել:

Մայն ատամներով կտրեց կարի թելը, վորի ժամանակ աչքն ընկավ նիբհի մեջ զլուխը բարձր ու ցածրանող աղջկա վրա:

— Աղջի, քունդ տանում ա, գնա քնի:

Աղջիկը բաց արեց շաղված աչքերը, մի ըոպե ապուշ ապուշ նայեց մորը, հետո սուր-սուր յեղունդ-ներով սկսեց քորելզլուխը և կամացուկ մնացտաց.

— Հաց եմ ուղում:

— Յես ել եմ ուղում, — արձադանք տվավ թախտի ծալրից փոքրիկը, վոր հոր զորդուսցի վրա զարթնել եր և, մինչև այժմ լուս, մթելի տակից պլղած աչքերով նայում եր ճրագին:

— Եղուց, եղուց, բարա ջան, հմի քնեցեք, — ասաց մայրը:

Բայց փոքրիկը ենրանից սիրտ առած մեծը սկսեցին տվելի ու ավելի մնացտալ:

— Սուս, շան լակոտներ, թե չե, եսա վերկացա, — հանկարծ գոռաց նավիթը, արագորեն շուռ զալով պառկած տեղը և բռունքն ուժգին զարկելով թախտին:

Փոքրիկն իսկույն սուս արավ և մթելը զլսին քաշեց, Աղջիկը նույնպես լոեց չոքեչոք գնաց դեպի անկողինը, պառկելուց առաջ քորումոր յեկով ամբողջ-մարմով, հետո մթելի ծալրը բարձրացրեց, մտավ տակը, զլուխը զրեց յեղբոր գլսի մոտ, կուչ յեկավ սրբսըրթալով և համարյա թե նույն ըոպեյին ել քննեց,

Քամին շվշվացնում եր դուրսը, պղղում եր բուխարու մեջ, ծեծում եր դուռ ու պատուհանը, իսկ նիբը լուսթիան մեջ լավում եր քնած յերեխաների շնչառութիւնը և յերեմն-յերեմն՝ Դավիթի մրմոռցը: Այսինչ Մայն, զլուխը միշտ կախ, կարում եր հա կարում, և սպիտակ քաթանը նրա հոգնած աչքերի առաջ յերբեմն-յերբեմն շերտավորվում եր կարմիր, կանաչ, դեղին զոլերով:

Պառկած տեղն ել հանգիստ չեր կարողանում մնալ Դավիթը, տենդով բռնված մարդու պես դես եր շուռ գալիս, դեն եր շուռ գալիս, մռնչում եր, փանչում, վո-գելից խմբչքի ծարավն ավելի ու ավելի յեր նեղում նրան: Նրան թվում եր, թե այդ գիշեր չի լուսացնի. Կամ կմեռնի, կամ կզժի: Առասարակ ամբողջ որը հիվանդ եր զգում իրեն, զլուխը ծանր եր քարի պես, աչքերից ջուր եր գնում, ձեռները զողում էլին, ծըկների մեջ ինչ-վոր մղմիղ եր զգում, իսկ ստամոքսի մեջ կաբծում եր թե մժեղներ են զժվում. Հնաբերով վոր վոչինչ չեր կերել, այնուամենայնիվ քաղց չեր զգում և ուտելու մասին չեր ել մտածում: Զգում եր միան, վոր մի քանի բաժակ ողին բավական եր այդ հիվանդագին բոլոր յերեւովները ձեռաց վանելու համար:

— Ո՞հ, իս ձեր..., — մի ծանր բռունցք իջեցնելով թախտի վրա՝ զորավոր հայնոյանք ուղղեց նա հալտնի չե ում հասցելին, նստեց, վոտները կախեց թախտից, խոնարհմեց և գլուխն առավ ձեռքերի մեջ. Գոնե քունը գար, վոր թերես առժամանակ մոռանար այդ անտառելի պապակը: Վոզելից խմիչքի ծարավը չեր այնքան, վոր տանջում եր նրան, այլ ավելի յերեակայությունը, վոր այնքան հրապուրիչ ու գալթակղիչ մտապատկեր-նար-Դուռ—

Ներ եր ստեղծում ողու և գինու շուրջը՝ ընկերական շրջանում, դուդուկի և արկանի ձայների տակ, գինետան մեջ, վորի քացախած ողը նրա համար ափելի ախորժելի յեր, քան բուրավետ վարդն ու ծաղիկը:

Նա վերկացավ և սկսեց քայլել սենյակի յերկայնքով: Մտածում եր՝ ինչ աներ այդ սոսկավի դրությունից քեզ ու համար. մտածում եր կյանքի և մահվան տռողջածի առջև կանգնած մարդու մտատանջանքով: Ամեն անպամ, վոր մոտենում եր սենյակի անկյանը, նրա աչքովն եր ընկնում ջրի կուլան: Սկզբում ուշադրություն չեր դարձնում, հետո կանգ առավ կուլայի առաջ և յերկար ժամանակ չեր կարողանում հազթառերել իր մեջ տարրորինակ զդվանք, վոր, իբրև արքեցող, առածում եր դեպի ջուրը: Բայց վոդելց խմիչքի ձարավը սպանում եր նրան, թուքը ցամաքել եր վոր կորը խանձվել, պետք եր բերանը մի բանով թաց աշել: Յեղ Դավիթը կամառակամա խոնարհեց դեպի ջրի կուլան:

Բայց այդ միջոցին հանկարծ մի միաք ծագեց նրա գլխում, և նրա դաժան դեմքը մի բռպի կարծես թե ուղայժառացավ:

Նա արագորեն մոտեցավ պատի մեջ դանված պահարանին, բաց արկց, հանեց ողու դատարկ միջը, կուլոյից մի դավաթի չափ չուր ածեց մեջը և սկսեց վոդովել վաղողեց, վաղողեց ողու շիշը, հետո զվարեն քաշ և սկսեց ծծել: Ծծում եր աչքերը փակ և շրթունքը ները սինդ սենկան անդամ շնի: Այդ միջոցին նրա դեմքը զարցանքի այսպիսի արտահայտություն եր ստացել, վոր կարծես լուծողական եր ընդունում:

Կինո առաջին անդամ բարձրացրեց գլուխը, նայեց

նրան, յետեկից մի չանչ արավ և նորից շարունակեց կարը:

Դավիթը չտեսավ այդ չանչը, բայց նրան թվաց, թե կինն իր հասցելին ինչ-վոր փնթփնթաց քթի տակ:

— Հը, ի՞նչ ես փնթփնթում, — կամաց դարձավ նա կնոջ կողմը, շիշը հեռացնելով շրթունքներից: Հրացայտ աչքերով յերկար ժամանակ լուս ու անշարժ խեթում եր կնոջը, հետո ավելացրեց ծանր ու սպառնալից. — Չանդ խոր քոր չի գալիս: Թե քոր ա գալիս, քորեմ...

Կինը ձայն ծպուտ չհանեց:

Դավիթը շիշը տեղը դրեց, պահարանի գուռը շրինկացնելով փակեց և գնաց նորից պառկեց թախաի վրա՝ չմուռանալով հայոհոյանքի մի նոր փունջ հրամցնելու կնոջը: Զուրը թեև մի քիչ ողու համ եր ստացել, բայց, իհարկե, այն չեր, ինչ վոր քթից ծուխ հանող, աչքերից արտասուրք քամող ողին, վոր խմելուն պես բալասանի նման տարածվում եր մարդու յերակների մեջ, և այդ բանն եր, վոր ավելի ջղանուտ եր դարձել Դավիթին, ավելի ևս գրգռելով նրա վոգելից խմիչքի պապակը: Նա ստախիկ ցանկանում եր, վոր կինը ձայն հաներ, բան ստեր, վորպեսի իսկուն վեր թոչեր և մի լավ տրորեր նրան, սրտի բոլոր մաղձը նրա վրա թափերով: Բայց Մային ձկան պես լուռ, իր բանին եր:

Դուռը վրսից ծեծեցին:

Դավիթը գլուխը բարձրացրեց, նայեց դռան և նորից պառկեց: Այդ անշուշտ Սկոբն եր — անգրանիկ վորդին՝ ութ տարեկան, վոր նոր եր վերադառնում խանութից: Չորրորդ ամիսն եր, վոր նրան աշակերտ եր ավել մի պղնձագործի՝ մի տարի անվարձ ծառայելու, մինչև վոր արհեատ սովորեր:

Դորովնետե դուռն իսկույն բացող չեղավ, նորից ծեծեցին:

Դավիթը վեր թուավ, նստեց և դարձավ կնոջը կատաղած:

— Տո, խլացել Ես, չես իմանում: Ես ել խո յեւ չեմ, վերկաց բաց արա, Ելի: Այ չորանսա եղ ճշագիտակը, հ'ը, ընենց կպչես եղ թախտից, վոր ել պուկ չզաս: Մը հարցնող բիլ, ողուսդի ինչ ա, Ե, եղ անտերամունդոիկ կարիցը: Նավթն ել մինչեւ լիս երում եռ:

Մային կարը մի կողմ դրեց, մեջքը հաղիվ շտկեց, վեր կացավ, իջավ թախտից և ամռանու անհատնում հայոցյանքների ուղեկցությամբ գնաց դուռը բանարսւ:

Մտավ Ակորը զգգոված հագուստով, մրից սեացած գեմքով, ձեռքերով և մինչեւ սրունքները մերկ վոտներով: Յրտից սըրթորթում եր ամբողջ մարմնով և ատամները նկատելի կերպով զարնում եր իրար, բայց աշխերն իրենց տարորինակ սպիտակուցներով սեացած գեմքի վրա փայլում եյին մանկական ինչ-վոր անհուն բերկրանքով:

— Մայիլո ջան, — մտնելուն պես բացականչեց նա, — ըսոր մեկն յեկավ, պղինձներ առավ, տարատուն մի աբասի փող բաշխեց: Ա՛յ

Դավիթը փողի անունը լսելուն պես ծտի նման թռավ տեղից և մի վոստունով հասավ դռան մոտ:

— Աբամ, աբամ...

Ու քաղցած գալիք պես վրա ընկավ յերեխային: Մայրը ընկավ վորդու և նրա մեջտեղ:

— Զտաս, չտաս, Ակոր ջան, հաց չունենք, հաց կտո...

Խոսքը չվերջացավ կնոջ բերանում: Դավիթը յեր-

Պու ձեռքով բռնեց նրա վոսկրացած ուսերից և այնպիսի ուժով յետ զպրտեց նրան, վոր նա փուլեց գետնին մեջքի վրա:

— Ինձ տու, — բղավեց և այնպես պինդ հուզ տվեց վորդու ըսունցքը, վոր նա ցավից ճչաց և իսկույն փողը վայր գցեց ձեռքից:

Դավիթը փողը թոցրեց գետնից և խելագարի պես գուրս թռավ...

Յերբ Մային ուշքի յեկավ և աշքերը կամաց բաց արեց, կարծես յերազի մեջ տեսավ, վոր Ակորը պատին կպած՝ լաց և լինում յերեխայական ուժգին հեծկլտանքով, և ցուրտ քամին փշում ե բաց դռնից, բլրլացնելով լամպի լույսը թախտի վրա: Մեծ գժվարությամբ հստեց, յերկու ձեռքով բռնեց ծոծրակը, աշքերը փակեց ինչ-վոր սուր ցավից և մի յերկար ու ձիգ թառանչ քաշեց:

— Դուռը կողպի, Ակոր ջան, գուռը կողպիցուրտա, — հաղիվ կարողացավ արտասանել նա:

Հ Ա Ր Ո Ւ

Զինագործ Աստառութը, — հնամաշ արխալուզով, կաշե գոտիկով, արբեցողությունից ուռած-կարմրած դեմքով մոտ քառասուն տարեկան մի մարդ, վոր ամբողջ թաղում և բազարում հայտնի լեր Հոպոպ մականունով, — յերեկոյան իր հավաքնի չափ փոքրիկ խանութը փակելուց հետո տուն եր դնում: Մի ձեռքին բռնած եր կես թունդանոց մի գավ, վորի պատերը տարիների ընթացքում սկացել ելին կարմիր դինուց, մյուս ձեռքին՝ կարմիր աղուտի մի կապոց, վորի մեջ կար մի քիչ օդող (ձուկ), մի քիչ կանաչի, մի կապոց կարմիր բողկ և յերկու սպիտակ «շոթի» (վրացական յերկանունեղ հաց), վորոնց սուր ծալրերը յերկար ականջների պես դուրս ելին ցցված աղլուխի կապի արանքներից:

Արեց նոր եր մալր մտել, ամառային անտանելի տոթ յեղանակը փոքր ինչ կոտրվել եր, բայց և այնպես անշարժ ողը հաղեցած եր արեից կիզլած փոշուծանը հոտով: Թաղի կանաչք յերկարատև որվա չարքաշ աշխատանքից հետո խումբ-խումբ նստոտած ելին իրենց դռների առջև՝ մերկ վոտոներով, մերկ գետնին, գլխաների փաթաթանների կապն արձակած կիսաբաց կրծքներին և զրաղված ելին իրենց սովորական խոսք ու զրույցով, վորոնք բամբասանքներից դենը չելին անցնում: Բոկոտն, գլխաբաց, կեղտոտ յերեխաները ճանճերի պես իրար խառնված՝ վաղվղում ելին փողոցներում ականջ խացնելու չափ միչ ու ծղբացով:

— Հոպոպ, — հանկարծ կանչեց յերեխաներից մեկը: Հոպոպն ամենեկին ուշադրություն չդարձրեց այդ կանչին, վորը, ինչպես յերեւում եր, մի շատ սովորական բան եր դարձել նրա համար, և անտարեր շարունակում եր իր ճանապարհը: Քրտինքը ծորում եր նրա գտակի տակից ականջների լետեռում և պուտողուտ կաթում խունացած ուսերին:

— Հոպոպ... Հոպոպ..., — ծկլթաց յերկրարդը, յերրորդը, չորրորդը... և վերջին այդ հատ ու կենած ծկլթոցները միախառնվեցին և դարձան ընդհանուր մի աղաղակ այնքան սուր ու համար, վոր ամենաբթացած ջղերն անգամ կարող ելին գոգոել:

Հոպոպը յերկար չկարողացավ համբերել. առանց յետ նայելու և շարունակելով ճանապարհը, սկսեց սարսափելի հայնուանքներ թափել յետեկից աղաղակող յերեխաների հասցեին:

Յերեխաներն, ըստ յերեւոյթին, այդ բանին ելին սպասում, և նրանց աղաղակը դարձավ ավելի միահամուռ, ավելի սուր ու համար, համեմված յերեխալական անհոգ քրքիջով և մեծերից լսած փոխադարձ հայնուանքով: Նրանցից մի քանիսն սկսեցին նույնիսկ քարեր շպրտել Հոպոպի հետեկից:

Սակայն Հոպոպը գնում եր իր համար, առանց նույնիսկ մտածելու, վոր պաշտպանվի, թեև տեսնում եր, թե ինչպես քարերը լետեկից գալով՝ թռչում ելին իրեն ուս ու այն կողմից և գետին ընկնելով՝ փոշի ելին քարձրացնում: Նա միայն շարունակում եր իր հատընտիր հայնուանքները: Լսա յերեւոյթին, այդպես ել կշարունակեր ճանապարհը մինչև տուն, յեթե քարերից մեկը չդիպչեր նրա վոտին: Յերեկի վոտը խիստ

ցավեց, վորովինետև հանկարծ կանգ առավ, մի ակընթարթում գինու գալիս ու աղլուխի կապոցը դրեց գետնին, մի մեծ քար վերցրեց և արտունով լցված աշքերով պատրաստվեց շպրտելու լերեխաների վրա: Բայց մինչ այդ՝ յերեխաները ծկլթացին, շուռ լեկան և ցան ու ցիր լեղան շեղակի ներ վողոցներում:

— Այ լես ձեր... (լերկաը հայուանքներ), թե մի կկանգնելիք, թե մի կկանգնելիք... Քարով եք ուզում կովի՞, ու կովենք, ելի, ուր եք փախչում, ձեր... (հայույանք): Փիե, անց կենալ չի ըլում, ելի. վրա յեն թափում, կասես գեղի շներ ըլեն: Տա, ասա յես ձեզ բան եմ անհեմ. թողեք, ելի, գնամ ինձ համար վեր ընկնեմ իմ տանը, իս ձեր... (հայույանք):

Նա քարը վայր գցեց, ցուցամատով սրբեց ճակատին վրա տված քըրտինքը, մատը թափ տվեց, կուցավ և, շարունակելով հայուանքները, սկսեց ձեռքով տըռը իլ վոտի այն տեղը, ուր դիպել եր քարը:

Հը՛, ուստա Ասատուր, եղ ինչ ես ըտենց տաքացել — ասաց այդ լոպելին նրա մոտով անցնող մի ծանոթ մարդ, առանց կանգ առնելու:

Հոպոսլը նայեց նրան, գալիս ու կապոցը վերցրեց գետնից և, շարունակելով ճանապարհը նրա լեռեկից, սկսեց գանգատվել:

— Տո, ըսենց ել բան կըլի՞: մի հետ չըլավ, վոր եղ շան լակոտները թողան արխալին գնամ իմ ճամբով: Հոպոսլ հա Հոպոսլ: Տո, Հոպոսլ... (հայույանք յերեխաների հասցելին), Հոպոսլ ձեր թալն ա:

— Ե՛ս, երեխեք են, ելի, ուստա Ասատուր, ինչ ես անգաջ դնում, — ասաց ծանոթը շտապ քայլելով նրա առջեկցի:

— Տո, մի ա անգաջ դնում, յես դրանց... (հայույանք): Տեսնում են թե չե, վոնցվոր գեղի շները վրա տան: Քարեր ել են գցում, քարեր:

Բայց ծանոթն ալիս չեր լսում նրան, նա ծովեց մյուս վողոցը և անցավ գնաց:

Իսկ Հոպոսլը, բարձրածախն շարունակելով հայույանքներով համեմված իր բանակոիվը բացակա յերեխաների հետ, մտավ իրենց վողոցը: Դոներին նստածած կանաց խմբերի մոտով անցնելիս մի ջահել կին կանչեց նրա յետից:

— Հոպոսլ:

Ու իսկույն ծիծաղերով գեմքը ծածկեց մոտը նստած ընկերունու մեջքի լիտելը: Մյուս կանայք ուրախ նրաւացին, բացի մի պառավ կնոջից, վորը մեղմորեն հանդիմանեց բացականչողին:

Հոպոսլը լիտ չնաւեց, բայց, ի հարկե, առանց հարձարավոր հայույանքի հթողեց իր լետերից կանչող կնոջը և անցավ գնաց: Այդ հայույանքն այնքան անհամեստ եր, վոր պառավը նկատեց կանչողին.

Հը՛, եղ իր ուղիւմ...

Իսկ մյուս կանայք, մանավանդ կանչողը, ամոթից ծածկեցին բերաները և, իրար կողքի բղելով, աշխատում եյին զսպելի ավելի սաստկացած հրնոցը:

Այնուհետև մինչեւ տուն հասնելը Հոպոսլի միենուն հայույանքը զանազան վարիանտներով ուղղված եր միայն իր լետերից կանչող կնոջ հասցելին:

* *

Ամբողջ թաղը Հոպոսլ մականունով եր կնքել զինագործ Ասատուրին, ժողովրդական այն առածի

փական ձեռքով տրենվիկ եր արել նրա քիթն ու պուլնկը:

Հոպոպն արբեցող եր, ճիշտ ե, բայց միայն գինի էր խմում, այն ել միայն կարմիր և լավ գինի, արագ տեր սիրում և խմելուց հետո ել գեմքին այնպիսի արտահայտություն եր տալիս, վոր թվում եր, թե պիտի թափի: Կերակուրների մեջ ել խիստ խտըություն եր դնում. Ջրալի կերակուրներ չեր սիրում, ուասլա կերակուրներն ատելով առում եր, մանավանդ լորին, նրա սովորական ուտելիքն եր՝ լեղալի դոշը, խավարը, խորովածը, թարմ կանաչին, կարմիր բողկը և սպիտակ հացը, իսկ այդ համեմատաբար թանգ ուտելիքները գնելու համար փող միշտ ուներ, վորովնետե իր արհետի մեջ լավ վարպետ եր և այնքան ճարպիկ, վոր կարողանում եր մի վորեև գրոշանոց ժանգութուր, խանչալ կամ հրացան հարցուր տարվա հնության տեղ ծախել յելքոպացի տուրիստների վրա շատ լավ գներով:

Գինու գավը, վոր տեսանք նրա ձեռքին, բանեցնում եր տասնհինգ տարուց ավելի, առավոտները դատարկ հետը տանում եր խանութը, յերեկոները լիքը տուն բերում, Ալնքան եր սիրում, վոր շաբաթ զիշերները, դատարկելուց հետո, մոմ եր վառում վրեն, «Բարաքիս» սրա մեջն ա, — ասում եր. — ինչ հա գավով գինի լեմ խմում, բանս լավ ա գնում»: Մի անգամ նրա մեծ տղան, վեց տարեկան, վոտով դիպավ դավինչ գավը դորվեց և քիչ եր մնում թախտից ընկներ կոտրվեր, Հոպոպը վրա ընկալ յերեխին և սկսեց ձեծել նրան այնքան սաստիկ, վոր կսպաներ, լեթե կինը չիւեր վորդուն կատաղած հոր ձեռքից, Բարերախտա-

հիման վրա, վոր ասում ե, թե «Հոպոպն ինքը հոտած ե, կարծում ե, թե բունն ե հոտած», Յեվ իսկապես, շատ հոտած, ալսինքն կովարար մարդ եր զինտգործ Աստառուրը. Պատճառը թերևս իրենք՝ թաղըցիսերն եյին, վորովնետե, ինչպես ինքն ել շարունակ գանգատվում եր, վոչ մի որ չելին թողնում, վոր մարդը հանգիստ տուն դնա: Հոպոպին կատաղեցնելը մի կատարյալ զվարճություն եր նրանց համար, նույնիսկ այն ժամանակ, յերբ նա տանը նստած սուվիրեն առաջին, գինու գավը կողքին, թուրքերեն բայտաթի յեր իբրում իր ճաթած ճախով, թաղի կանաչը, վորոնց մի առանձին հաճուկը ելին պատճառում նրա անզուգական հայոյանքները, դըղում եյին մի վորեև չարաճնի լերեխալի, վոր գնա չարացնի Հոպոպին, Յերեխույն վաղ եր տալիս, գլուխը զգուշորեն ներս կոխում դռնից, կանչում «Հռպապ» ու ծլիում արտգավաղ նապաստակի պես: Յեվ այդ մի հատիկ բառը բավական եր լինում, վոր Հոպոպի քեֆը հարամ լիներ. Նա իսկույն ընդհատում եր բայտին, դուրս գալիս դուռը և ամբողջ թաղը հավաքում գլխին:

Վոչ վոքի հետ չեր հաշտվում Հոպոպը: Բազարում թե թաղում վոչ մի հարեան չուներ, վորի հետ կոված և մի լավ ել ծեծ կերած չլիներ: Կնոջ հետ խո ամենոր տուրուզմիոցի մեջ եր: Ինքը կնոջն եր ծեծում, կինը՝ նրան. Թակում եյին իրար ալնքան ժոմանակ, մինչև վոր կամ հոգնում ելին, կամ հարեանները միշտառում բաժանում նրանց իրարից: Վոչ վոքից չեր վախենում, բացի վոստիկանությունից, վոր շատ անգամ կոխել եր նրան մեծ-մեծ մկներով լի մութ նկուղը և մի քանի անգամ ել նույն իսկ պրիստավն իր սե-

բար, դավին արդեն դատարկված եր, թե չե՞ ծեծից նրան
ել բաժին կհասներ:

* * *

Կինը տանը չեր, վոր Հոպոպը տուն հասավ: Դուրսը
ալատի տակ տղան տուն եր շինում տաշեղներից:
Բացի կարձ, կեղտոտ շապկից, ուրիշ բան չկար նրա
հագին:

Ո՞ւր ա մերդ, — հաբցրեց հայրը:

Տղան վեր կացավ, աչքերը տնկեց հոր ձեռքի աղ-
ջուխին և պատափանեց,

— Բագրատանց տուն գնաց:

Հոպոպի աչքերը կրակ կտրվեցին:
Ելի... վայ յես նրա... — հայոյեց նա, շտապով
ներս մտավ, դավին ու աղլուխի կապոցը դրեց թախտի
վրա և նորից դարձավ վորդուն: — Գնա ես սըհաթիս
կանչի: Դե, հը՛:

Տղան, վոր հոր յետեկից ներս եր մտել և աչքը չեր
հեռացնում աղլուխից, հանկարծ շուռ յեկավ և դուրս
թռավ:

— Բագրատանց տուն... Լավ, շատ լավ, — սկսեց
բարձրածայն խոսել ինքն իրեն Հոպոպը: — Դե եըմի
կդաս կտեսնենք, Ելի՛: Յես քեզ Բագրատանց տուն
շանց կտամ... Հայ գիտի հա, Աստառւը մեռելա, Ելի,
ել չկա, ել գետնի յերեսին ման չի գալի, Ելի, վոր նրա
կնկա հետ ուրիշներն են սիլիքիլի անում... Հոպոպ
վոր գտանք, նամուսն ել կորցրենք... Ե՛յ, գետինը
չի մանի՞ ես զդակը:

Յեղ նա գդակը պոկելով զմից ուժքին թափով
խփեց գետին: Հետո շարունակելով հայնոյանը ներով

համեմված սպառնալիքները կնոջ հասցելին, գոտիկը
յետ արեց, հանեց արխալուղը, վոտնամաները, հո-
տած գուլպաները, շալվարը և գուան շեմքին կանգնե-
լով, սկսեց չթի կարձ շապկի փեշերով հով անել քրտին-
քից ջուր կտբած յերեսին ու փորին:

Անհամբեր սպասում եր կնոջը, բայց մինչև վոր
կինը կգար, ծգրած սրտով մոտեցավ գավին, գլխին
քաշեց, ծծեց աղաճորեն և, ծարավը հաղեցնելուց հե-
տո, գավը տեղը դրեց: Հետո, առանց աղլուխի կա-
պոցը բանալու, կտրեց շոթիներից մեկի սուր ու չոր
ծալրը, բերանը գցեց և սկսեց ծամել:

Մոր յետեկից գնացած յերեխան ներս ընկավ գըն-
դակի նման:

— Ասեց գալիս եմ, — ասաց նա և այս անգամ աչ-
քերը տնկեց հոր բերանին:

— Հը՛մ, — մանչաց Հոպոպը, — հացը ծամելով, և
ձեռքը նորից տարավ դեպի գավը:

Ասպիսով գավը մի քանի անգամ մոտեցել եր նրա
շրթունքին և պլղել թախտին, յերբ վիրջապես դուռն
շեմքին յերեսաց կինը — բավական սիրունատես ու գի-
րուկ, մաշված դեղին չուստերը մերկ վոտներին և ծծի
մանուկը գրկին:

Հը՛մ ես ել եկա, ինչ ես ուզում, — ասաց նա հա-
մարձակորեն, ըստ յերեսութին շատ լավ իմանալով,
վոր կրկնվելու յե ամենորյա տեսաբաններից մեկը:

— Ինչ եմ ուզում, — ասաց Հոպոպը, վոր հենց նոր
գավը նորից գլուխն եր քաշել, գավը դրեց թախտի
վրա, շապկի թեմով սրբեց շրթունքը, մոտեցավ բռնեց
կնոջ ձեռքից, ներս քաշեց և սպառնական դիրք բռնեց
նրա առջև: — Վարտեղ իր:

— Բագրատանց տանը, — նույն համարձակությամբ պատասխանեց կինը:

— Ի՞նչ եր շինում ընտեղ:

— Ինչ պիտի շինելի, լվացք ունեն անելու, կանչել ին, վոր եղուց գնամ լվանամ,

— Լվացք... լվացք... Տն, իս քու... (հայնոյանք)... անաեր-մունդովիկ ես մնացել, քաղցած-տկող ես մնացել, վոր ուրիշների հըմար լվացք ես անում: Համ: Բա իս չկամ, բա իմ գլուխը շներն ու գելերն են կերել: Համ: Տն, իմ կնիկն ընչի՞ պըտի ուրիշի լվացքն անի, հը՞: Տն, Բագրատն ում շունն ա, վոր իմ կնիկը գնանրա հըմար լվացք անի, հ՞ը: Տն, Բագրատի պես հարուրին կառնեմ-կծախեմ, ու իմ կնիկը պտի գնանրա հըմար լվացք անի՞: Ի՞նչ անենք, թե գդակին կակարդ ունի ցցած, իս նրա... (հայնոյանք Բագրատի հասցին): Տն, ինչ լվացք, ինչ դես, ինչ դեն, ում ես ուզում խարի, հազիր ասես... Դես արի հլա, դեսը... (Հոպովը քարշ տվալ նրան դեպի ավելի ներս, ձայնը ցածրացրեց, գլուխն առաջ տարավ և փշաց սեղմած ասամերի միջից). հազիր ասես գնացել իր նրա հեա շնութին անելու... Հ՞ը, սուս մ... ելի կամս սուս աս...

Կինը ձեռքը խլեց նրա ձեռքի միջից և չանչեց նրան:

— Ի՞ւ, հոդեմ դիժ գլուխդ, — ասաց նա արհամարհանքով և դարձավ, վոր գուրս գնա:

Բայց մարդը չանթեց նրա թերից, թույլ չավավ, վոր տեղից շարժվի:

— Կաց, — գոռաց նա, — ուր ես գնում, վոր գնում ես: Հենց գիտաս ձեռիցս կարծնես: Գիժը հըմի կտես-

նաս, թե վոնց գիժ եմ: Ընչկլի հոգիդ չհանեմ, կթողամի: Բա իս մեռել եմ, վոր են շուն շան վորդու հետ ես շնութին անում: Հ՞ը, մեռել եմ... մեռել եմ... մեռել եմ...

Եեվ ամեն մի «մեռել եմ» խոսքի հետ բռունցքի մի ծանր հարված եր իջեցնում կնոջ մարմին, ուր վոր պատաճեր — դիմին, ուսին, մեջքին... Կինը մի ձեռքով մանուկը գրկած՝ գլուխը կախել եր, վոր հարվածները յերեսին չդիմչեն, մյուս ձեռքով աշխատում եր բռնել մարդու ձեռքը, և յեթե յերբեմն հաջողվում եր այդ, Հոպովն ավելի յեր կատաղում և հետագա հարվածներն ավելի անխնա ելին լինում:

— Տո, գիժ Հոպով, ինչ ես ուզում ինձնից, կանում եր կինը լաց լինելով:

Ծծի մանուկը ծիլում եր նրա խտըաին, իսկ մյուս յերեխան մի կողմ քաշված՝ դիմում եր այդ շատ սովորական տեսարանը լուս ու անտարբերութիւնը:

— Յես քեզ հլա փետով պտի ծեծեմ, փետով, — ասաց Հոպովը շնչասպառ և, թողնելով կնոջը, սկսեց խենթի պես դես գեն ընկնել սենյակում, վոր փայտ դտնի: Փայտ չգտնելով, նրա աչքովն ընկան իր վոտնամանները: Ու վեր թոցրեց այդ վոտնամաններից մեկը, վորի կրնկին հաստ նաև եր խիտած գոգավոր մեխերով:

Մինչ այդ՝ կինը ծծի մանուկը գրեց թախտի վրա, շակեց իրեն և վեր թոցրեց գինու գավը:

— Արա խփի, արա խփի, տես ես գավի գլուխը վերտեղ եմ ուտում, — կանչեց նա անլախ և սպառնագին:

— Վայ յես քու..., — բղավեց Հոպովը և, վոտնամանը ձվելով ձեռքից, վրա վաղեց, վոր գավը խմի:

Բայց կինը, ժամանակ չտվավ նրան, վոր իրեն հասնի. վուսները հաճեց չուստերից և զուրս փախավ գավը ձեռքին:

Մարդն ընկավ նրա յետելից:

Աւ փողոցում, ուր թաղի կանալք և լերեխաներն արդեն հավաքվել ելին նրանց աղմուկի վրա՝ սովորական տեսարանը դիտելու, մարդ ու կին վաղում ելին — կինը առջնից գավը ձեռին, մարդը՝ յետելից, դիխաբաց, վոտարոպիկ և ներքնաշապկով:

Փողոցում մի անասելի ժխոր եր բարձրացել. կանալք հրառում ելին, լերեխաները սուր ծկլթոցներով՝ «Հոպոպ» ելին աղաղակում և սուլում, իսկ թաղի մանրավաճառի խանութիւն առջև հասուն տղերքը ծիծաղելով բղավում ելին՝ «Հասի հմ, Հոպոպ, հասի հմ»:

Այդ սարսափելի ժխորի մեջ Հոպոպը վաղում եր հավաղում կնոջ յնտելից, կարճ շապկի վեշը փրփռացնելով ողի մեջ և աչքը տնկած կնոջ ձեռքի գալին, վորի մեջ գինին լիկլիսկում եր և թափվում բերանից:

Քանի գնում, այնքան փոքրանում եր տարածությունը մարդու և կնոջ միջև, վորովհետեւ գավը խանգարում եր կնոջն ավելի արագ վաղելու, վերջապես, մի քանի քայլ եր մնում, վոր մարդը հասներ կնոջը, յերբ հանկարծ կինը, առանց կանգ առնելու, ձեռքը բարձրացրեց և գավը ուժովին թափով գեանովը տվեց. Գավը բղիաց և ալ վարդի պես բացվեց: Տակի հաստ մասը քրեղանի պես մնաց ընկած տեղը, իսկ բարակ պատերի թաց վշուրները թռան ալս ու այն կողմ. կարմիր գինին ներկեց գետինը լերդացած արյան սեղունով և իսկույն ծծվեց արհակեղ գետնի մեջ:

Հոպոպը ցնցվեց և կանգ առավ հանկարծ: Նրան

թվաց, թե իրեն տվին գետնով: Աչքերը մթնեցին: Ել չիմանալով, թե ինչ ե անում, արագորեն կրացավ, մի մեծ քար թոցրեց գետնից և ծալրահեղ կատաղի թափով շպրտեց փախչող կնոջ յետելից:

Քարը շեշտակի գնաց դիպավ կնոջ մեջքին: Կինը սաստիկ ձչաց, իներցիայով առաջ վազեց մի քանի քալլ ել և փովեց գետնին յերեսի վրա:

Հընուցող փողոցը հանկարծ լռեց և քարացավ:

թե Ի՞նչ ՅԵՂԱՎ ՀԵՏՈ, ՀԵՐԲ ՇԱՔԱՐԱՄԱՆԻՑ
ՅԵՐԿՈՒ ԿՏՈՐ ՇԱՔԱՐ ՊԱԿԱՍԵՑ

Մի ընդարձակ ամայի բակում յետին կողմը կանգնած եր դրոգապան Յաղորի հնորյա տնակը, բաղկացած ընդամենը մի մեծ սենյակից, վորի դուռը բացվում եր ուղղակի դեպի բակը։ Տնակի մի կողքից կըպած եր տախտակամած խոհանոցը, իսկ խոհանոցի կողքին մի ընդարձակ ծածկոց, վորի տակ Յագորը գիշերները կապում եր իր ծանրաշարժ զրոյի աժդահան ձին։ Բակը փողոցից բաժանված եր տախտակի ցանկապատով, վորի տակ մի անկյունում կիտված եր ձիու ամիսներով հավաքած աղբը։ Մինչդեռ բակի ցած մասում մի ծեղ անգամ չեր կարելի գտնել—այն քան մաքուր եր, վարովինետև Յագորի կինը—Անանը, որը լրասանար թե չեր ամենից առաջ ձիու աղբն եր հավաքում և բակն ավլում։

Զարմանալի մաքրություն եր տիրում նաև ներսը,
սենյակում։ Հնամաշ, տեղ-տեղ թելերը դուքս թափ-
ված կապէրտը ցածրիկ թախտի վրա միշտ ավլած եր։
Հողի հատակն անդադար ջրվելուց խոնավացել, պըն-
դացել գորշ գույն եր ստացել և այնքան մաքուր եր,
վոր, ինչպես ասում են, յուղ թափելիք՝ կհավաքվէր։
Թախտի, յերկու փոքրիկ պատռճանների, ծալքի և
թարեքի սպիտակ միտկալի վարագույրները և չորս
հատ հնաձև աթոռների սպիտակ լեռեանները փալում
եյն ձույնի մաքրությամբ։ Մինչև անդամ պատի տակ

զրված, տակը ջրակալած և ամբողջապես ջուր լացող կարմիր խելագան ամեն անզամ ջրով լվացվելիս խնամ ով ողողվում, մաքրվում եր: Ճանճ ասված բանը գնչություն չուներ այդ սենյակում, ուր ներքնատան մի տեսակ ծանր զովություն եր տիրում: Համախկարելի յեր տեսնել միայն մի վորեւ հոռթիս, վոր դուրս գալով հայտնի չե վորտեղից՝ լույսից վախեցած վաղում եր թախտի տակը մտնելու, կամ մի նամաճինու, վոր արխկալով ցած հեր ընկնում առաստաղից մեջքի վրա և սպիտակ փորը վերև արտօն յերկար ժամանակ վատները բարդի-բարդի յեր անում, մինչև վոր աջողում եր շուռ գալ և, ծանր ու բարակ, կարծես խոր մատածունքի մեջ, սկսում եր ուր-վոր գնալ:

Ամառվաշտութեալ է առթ կերեկո էեր: Ողն այնքան անշարժ էր, վոր պատուհանների վար թողած վարագույըներն ամեննեին չելին շարժվում: Անանը նստած եր հատակին մի չի վրա և յերեխացին վեր եր կացնում որոշոցից: Նա դեռ ևս շատ ջահել կին եր, հաղիվ քամ տարեկան, չթի հնամաշ դերիացով և դիւին մաքուր, սպիտակ աղլուխ: Գաթաթած: Կազմվածքն այնքան նիհար եր, վոր պարզորոշ նկատվում ելին թիակների սուր ծալըքը, վորոնք դուրս ելին ցցվել բարակ դերիացի տակից և մեջքի վրա, վերեկից ներքն, տաշտանըման մի փոս եյին գոյացրել: Մի տեսակ սարսափի արտահայտություն կար նրա տեղ-տեղ կարմրատակած, տեղ-տեղ կապտած և տեղ-տեղ ուռած դեմքի վրա, մանափանդ տարօրինակ կերպով չուած-քարացած աչքերի մեջ, վորոնք կարծես ծալըքահեղ ապուշ տարագուսանքով հարցնում ելին շարունակ չինչեւ, ինչնի...» ու վոչ մի տեղից պատասխան չելին ստանում:

Էռու ու մունջ առավ լերեխալին, գրեց գողը և սկսեց հազինելի Յերեխան ծիծաղկոտ աչքերով նայում եր նրա քարացած դեմքին և, ինչվոր թոթովելով, կարծես քնքշանք եր խնդրում մորից, բայց մայրը կարծես չգիտեր, թե ինչ ե քնքշանքը. Սակայն լերը կարծես չգիտեր, թե ինչ ե քնքշանքը. Սակայն լերը լերեխան փամփլիկ ձեռքը մեկնեց և սուր յեղունգներով բռնեց նրա քթից, նրա դեմքի վրա ժպիտի նման մի բան լերեաց. Նախ համբուրեց լերեխալի ձեռքը, զլիսի մի թեթև շարժումով քիթն աղատեց նրա ձեռքը, հետո խոնարհվեց և շրթունքը ամուր ու կաթոքից, հետո խոնարհվեց և շրթունքը ամուր ու կաթոքից, բայց և այնպիս դին սեղմեց նրա թիվիկ այտին. Բայց և այնպիս սարսափը քարացած եր նրա դեմքի վրա և աչքերի մեջ:

Ներս մտավ մի կին միջին տարիքով, ու հագուստով, կարմիր քըտնած գեմքով, մի ու շալ ձեռքին. առվ, կարմիր քըտնած գեմքով, մի ու շալ ձեռքին. Ամբողջ թաղում և թաղի սահմաններից ել դուրս նա հայտնի յեր գիծ-Հոռոմսիմ անունով. Յեկ իդուր. չեր, վոր վաստակել եր այդ անունը Կիսախելագար մեկն վոր մեկի հետ չկուիեր—ով ուզում ե լիներ ալդ մեկը՝ վոր մեկի հետ չկուիեր—ով ուզում ե լիներ ալդ մեկը՝ հարազատ, հարեան թե անծանոթ. Տարին տասներկու հարազատ, հարեան թին միայն, վոր թափլում ելին ամիս անեծքներ ելին միայն, վոր թափլում ելին անը բերանից, Անիծելիս շատ անգամ կատարլաւ բանը բերանից եր դառնում. այնպիսի հղոր ու ազդու, իերութեան և կնոջ բերանին անսաղ անեծքներ ու հայութեան հորինում, վոր վոչ վոք վոչ մի տեղ չեր լսել: Պահանքներ հորինում, վոր մինչ անգամ չնայեց սկեսոր կողմը, այլ անգամ թաղը սարսափում եր նրա բերանից: Թաղեկ ամբողջ թաղը սարսափում եր նրա բերանից: Թաղական վոստիկանն անգամ, յերբ հարեանները դնում ելին գիծ-Հոռոմսիմից գանգատվելու, ձեռքը թափ եր տալիս և հեռանում:

Թաղում դեռ կային ուրիշ մի քանի հայտնի կըռ-վարար կանայք ևս, բայց գիծ-Հոռոմսիմը վաղուց արդեն տվել անցել եր ամենքից թե իր ճարտար լեզվով, թե անեծքնայիշանքով և թե նույնիսկ ֆիզիքական ուժով, վորին շատ անդամ դիմում եր բերանացի կովից հետո:

Ցածրահասակ, լրաբ, ծայր աստիճան արագաշարժ՝ տեղն ու տեղը կըակ եր գիծ-Հոռոմսիմը: Պստիկ, պըլ-պըլան աչքերը ջղային անհանգստությամբ այս ու այն կողմն ելին զառնում շարունակ ծտի գլխի պես,—կարծես շարունակ կովի առիթ եր վորոնում: Կովելիս նախ յերկար ժամանակ լեզվակոխ ու անեծքակոխ եր անում համարձակ հակառակորդին սկզբում հանգիստ, հետո արագորեն տաքանալով, վերջը հանկարծ կատվի պես վրա յեր ընկնում նրան և յեթե աշողում եր բռնել նրա մազերից, ձիգ եր տալիս բոլոր ուժով, իսկ յեթե վոչ, սկսում եր կմշտել և վոլորել նրա մարմինը իր յերկայն, չոր մատների սուր յեղունգներով, վորոնց գծած ստորակետերն արնակալում, ուռչում-կապտում ելին և յերկար ժամանակ չելին չնշվում:

Գիծ-Հոռոմսիմը Անանի սկեսուրն եր:

* *

— Ը-ը՝, տափը դնեմ քեզ, ատփը, վոնցոր փետացել ես եղ տափին,—մըթմըթաց նա մանելուն պես, պստիկ, չար աչքերը վոլորելով հարսի վրա:

Անանն այն աստիճան սովորել եր ալգպիսի անսապիթ անեծքների, վոր մինչև անգամ չնայեց սկեսոր կողմը, այլ անտարեր ու զանգաղ՝ շարունակում եր հազցնել յերեխային:

Գիծ-Հոռոմսիմը շալը շպրտեց թախտի վրա, վորի ժամանակ նրա արագաշարժ աչքերը հանկարծ մի վայրկան կանգ առան պատուհանների վայր թողած վարագույրների վրա:

— Աղջի՛, բա եղ քոռացած աչքերովդ տեսնում չե՞ս արել միր ա մտել, — ասաց նա, — Ա՛յ, վոչ ունենամ քեզ պիս հարսը, վաչ, չորանաս կպչես եղ տափից, վոնցոր չորացել կպիլ ես:

Ու անծծքները շարունակելով գիծ-Հոռոմսիմը բարձրացավ թախտը, պատուհանների վարագույրները դցեց բաց փեղկերի դլխին, հետո ուղում եր իջնել, բայց մի բան մտաբերելով՝ արագ մոռեցավ թարեքին, իստ քաշեց վարագույրը և սկսեց մելմեկ համարել թիթեղյա մատուցարանի վրա թելի պարագաների կողքին դրված շաքարամանի միջի շաքարի կտորները: Առավտական տնից դուրս գնալիս շաքարամանի, մեջ ճիշտ տասը կտոր շաքար եր թողել նա, բայց այժմ, համարելուց հետո տեսալ յերկու կտոր պակաս ե: Ու ծորի նման ցած թուավ թախտից:

— Ա՛յ քեզ... այ, այ, այ...

Այս խոսքերով նախ յերկու ձեռքով պինդ խփեց հարսի դլխին, հետո ծայրահեղ կատաղությամբ ատամները սեղմած՝ սկսեց սուր-սուր յեղունդներով կմշտել նրա դեմքը, ձեռքերը, կողերը — ուր վոր պատահեր, սնդ սմին, ամեն մի կմշտոցի հետ յեղունդների մեջ բռնած կաշին վոլորում եր և ճիգ տալիս:

— Քը..., ցավից մղկտաց Անանը և, յերկու ձեռքով ամուր գրկելով յերեխային, խոնարհվեց նրա վրա:

— Առանց ինձ չայ իլ ես խում հա... Ա՛յ քեզ...

նաս դու... այ քեզ, այ, այ... շատ եժան ենք առնում, հա, վոր քոռ ու փուչ ես անում, քոռանաս ու փչանաս դու... այ քեզ, այ այ...

Ու սուր յեղունդները դանակի պես ակոսում եյին Անանի վախո մարմինը:

— Վըի, վըի... մղկտըմ եր Անանը ցավերից գալարվելով, ու նրա ձեռքերը մեքենայաբար ավելի ու ավելի եյին սեղմում յերեխային, և նա ավելի ու ավելի յեր խոնարհվում յերեխայի վրա: Իսկ յերեխան սաստիկ ճշում եր նրա գրկին:

Գիծ-Հոռոմսիմի կատաղությունը գնալով սաստկանում եր: Յերկու ձեռքերի սուր յեղունդները կարծես անդոր եյին նրա բոլոր բարկությունը թափելու: Նրան կատաղեցնում եր առանձնապես այն հանդամանքը, վոր Անանը համարյա թե ձայն չեր հանում. կարծում վոր թիթեղյա մատուցանի գավ չի դդում, մինչեր, թե ուրեմն հարսը բոլորովին ցավ չի դդում, մինչդեռ սիրտը հովացներու համար ուղղում եր, վոր Անանը ճշար, աղաղակեր, լաց լիներ, ոդնություն կանչեր, ուստի աշխատում եր խփել կամ կմշտել նրա մարմինը լինպիսի մի նըրազգաց տեղ, վոր հարսը ստիպված լիներ վերջապես բարձրաձայն արտահայտել իր ցավը: Բայց չե, Անանը համառորեն ձայնը փորն եր գցել և, նրա առջև խոնարհված, զսպած հառաջանքներ եր միայն արձակում, վոր գիծ-Հոռոմսիմը հաղիվ թե լսում եր իր կատաղի ծկլթոցների և յերեխայի լացի մեջ:

Տեսնելով, վոր խփելով և կմշտելով վոչինչ չի մենում, գիծ-Հոռոմսիմը պոկեց հարսի դլխից սպիտակ աղլումը, բռնեց նրա ցանցառ մաղերի յերկու հյուսեղից մեկի ծայրից և ձեռքի ուժգին թափով ձիգ տվեց հանկարծ:

— Ամասա... — յերկար ու սուր ճշաց Անանը և, սաստիկ ցավից աչքերը փակելով, յետ ընկալ մեջքի վրա: Նրա թուլացած ձեռքերը բաց թողին յերեխային: Յերեխան նրա գոգից գլորվեց ընկալ զետին և սկըսեց ավելի ճշալ:

Հարսի սուր ճիչը, վերջապես, փոքր ինչ հովացրեց գիֆ-Հոռոմսիմի սիրտը, նա թողեց հարսի մաղերը, վերցրեց յերեխային և, շարունակելով անհճքնիր թափել, հոգնած նստեց թախտի վրա ու մկնեց ձեռքերի մեջ ուրուել յերեխային, վոր սուս կացնի: Նրա սլստիկ, չար աչքերը դեռ ևս պլազում եյին խելադարի կատաղությամբ, քրտինքը վրա յեր տվել նեղ ճակատին: Նա հեռամբ եր՝ յերկար տեղ վաղած մարդու նման:

Իսկ Անանը, աչքերը փակ, ընկած եր հատակին մեջքի վրա և նվում եր միալար հազիվ լսելի ճախնով:

* *

Ամառվայ յերկարատե, անտանելի տոթ որը նոր եր մթնել: Պառավ հեղնարը և նրա յերկու փոքրիկ թուները — մեկը տղա, մյուսն աղջիկ - ծալապատիկ նստած ելին թախտի վրա և հալտնի չե՛ ճաշ թե ընթրիք եյին ուտում, վորովհետեւ իրենք ել չդիտելին վնրն ե իրենց ճաշը և վարն ընթրիքը: Կապույտ սուփերի վրա պլազում եր մի փոքրիկ լամպ, վոր չմաքրած ապակու միջից պղտոր լույս եր սփոռում նրանց հոգնատանջ. քրտնած յերեխներին: Նրանց կերածը փուան սև հաց եր և կիսախակ մի ձմերուկ, վորի գույնը դըժվար եր վորոշէ սպիտակ եր, թե դեղին: Լամպի լույսը իր շուրջը հավաքել եր ահազին թվով մասը մժեղներ, վորոնք պտույտ եյին անում տաք ապակու շուր-

ջը, շատերն այրվում թափվում եյին ներքե, շատերն ել կոչում թաց ձմերկից:

Պառավ Հեղնարը ցածաքած, կուչ յեկած մի կին եր՝ դեմքի անհամար խորշոմներով: Հարատե չքավորությունն ու բախտի ծանր հարվածները ծահել եյին նրա մեջքը և իրենց անջնջելի կնիքը դրոշմել նրա դեմքին և թախտալի աչքերի մեջ: Թոռները — քուլը ու յեղալը — վորը եյին և մնացել եյին ուսուավ տատի խնամքի տակ: Այդ յերկու փոքրիկ յերեխաներն եյին, վոր պառավ Հեղնարին յեռանդ եյին ներշնչում ապրելու և աշխատելու: Բայց պառավ Հեղնարը մի ավելի մեծ վիշտ ուներ. այդ՝ յերկու փոքրերի մեծ քրոջ — Անանի վիճակն եր՝ եր կիսախելագար սկսոր և նրանից վոչ պակաս վայրագ ամռւսում ձեռքից:

Պառավի մշտական պարապմունքը լվացարարությունն եր և հաց թիմել: Շատ լվացք անելուց և թոնըի մեջ հաց կող տալուց նրա գեմքի և ձեռքերի կաշին յեռացրած ջրի և թոնըի կրակի մեջ մրկվել, չորացել, մագաղաթ եր գարձել: Լվացք անելիս փոքրիկ թոռներն ոկնում եյին տատին, մեկը փայտն ու տաշեղները խտած, մյուսը կաթսան ուսած և լվացքի թաբախը քարշ տալով առաջնորդում ելին լվացքի ծանր կապոցը շալակած տատին դեպի գետափ: Յեկ այնուհետեւ, յերբ տատը կիզիչ արևի տակ թաբախի մոտ պաղած՝ ձմռում եր լվացքը, նրանք ծակ տոլչով ջուր եյին մատակարարում մերթ կաթսայից թաբախին, մերթ գետից՝ կաթսային: Իսկ յերբ պարապ եյին մնում, աղջիկը դերեխալի փեղերը շեքը հավաքած, տղան վարտիկը մինչև աղդրերը վեր քաշած՝ մտնում եյին

գետի վճիռ ջուրը և լպրծուն սալ քարերից ու խճից
թումբեր կաղմում:

Այդ լեռեկո ել ամբողջ որը կիզիչ արևի տակ
գետափին անցկացնելուց և լվացքը, կաթսան ու թա-
քախը տիրողը հանձնելուց հետո, նոր ելին վերա-
դարձել տուն և հոգնած ու քաղցած հաց ելին ուտում,
վոր շուտով քնեն և տուավոտը վաղվաղ դարձյալ
գործի գնան:

— Նանի, վոր ուտես կորիզն ինձ տու, — ասում եր-
թուներից մեկը, ձմերկի կորիզները հավաքելով իր
առջն:

— Սուտ ա տսում, նանի ջան, ինձ տու, — ասում
եր մյուսը նույնպես կորիզները հավաքելով իր առջն:

— Հրեդ, դու քիչ ունեմ, — ասում եր առաջինը:

— Դու ավելի շատ չունեմ, — առարկում եր լեռկ-
ըորդը:

— Ո՞ւր ա, հը, մուր ա, շատ ըլի՝ քսանն, ելի:

— Քսանն ել կըլի, հըլա հարուրն ել:

— Հա, վճնց չե, հարուրը հրեդ քունը կըլի ու...

— Դե, քիչ բասերաս մտեք, գլուխս ցավում ա. —
բարկացավ տասն իրեն հատուկ բարեսրտությամբ: —
Յանի ինչ եք տեսել եղ կորզի մեջ, վոր ամեն. հետ
Յանի ինչ եք տեսել եղ կորզի մեջ, վոր ամեն. հետ
կերպը միս եք կըծում: Կեսը մեկիդ կտամ, կեսը՝ մե-
կերպիդ:

* *

Պառավ չեղնարը կորիզը լեռկու թուների մեջ բա-
ժանելու վրա լեռ, լեռը հանկարծ ներս մտավ Անանը
յերեխան խտախն, Մտավ շտապով, հուսահատ, վճռա-
կան քաղլերով:

— Նանի, ախր իմ մեղքը վճնց ընկար, տարաբ
ինձ են դժոխքը զցեցիր, — ըացականչեց նա լացակա-
կումած, լեռեխան գրեթե զցելով թախտի վրա: —
Քամ եմ, չերկաթ եմ, վոր դիմանամ: Աստոծ ինձ ել
մարդ ա սաեղծել թե շուն...

Նա նստեց թախտի վրա և, սրտի փղձուկը չկա-
րողանալով բռնել սկսեց սաստիկ, ցնցողաբար հեկե-
կալ, դեմքը ձեռքերով ծածկած:

Նանն իր լեռկու պղտիկ թուներով կորիզն ել մո-
ռացավ, ամեն բան ել: Սկզբում, յերբ Անանը ներս
մտալ այնքան անսովոր կերպով, պառավ Հեղնարը
խիստ վախսցավ, բայց լեռը Անանի խոսքերէց իմա-
ցավ բանը, մնաց նստած աեղը ցամաքած, լուռ վշտա-
հար:

— Ել ինչ արեց, աղջի, — հարցյեց նա:

— Զան դիակի ինչ կանի, — արտասանեց Անանը
հեծկլուանքի միջից: — Զանիս վրա ել տեղ չմնաց, վոր
արհնըլիի չածեց, ել գլխիս վրա մազ չմնաց, վոր չպո-
կց, ել գլխումս զուզ չմնաց, ենքան թակեց... մինչեւ
յերբ... Մի հազի ունեմ, զի են ա մի անդամ հանի,
պրծնեմ ելի... թե չե, ել հալ կմ, վոր դիմանամ...

— Այ, վոչ եր ըլել են որը, սկ որ եր մթնել են
որն իմ գլխին, վոր դու մտար եղ քարուքանդ տունը —
հառաչեց Հեղնարը: — Բու սաբար ըլովի ջանը կըակ
ընկնի, վոնց վոր կըակ ա ընկել իմ ջանը: Ախր հն
գիտ սրտամեռն ինչ ա ուղում քեզանից, վոր ըտենց
կըծում ա միսդ, շունը կըծի նրա միսը:

— Ի՞նչ ա ուղում, — դառնութիւնմբ արտասանեց Ա-
նանը, զիսի աղջուխի ծալըրով սրբելով աշքերը: — Են
ա ուղում, վոր ասում ա՝ մի ուտի, մի խմի, մի հագնի,

մի մաշի, հենց իմանաս մանանա ա թափվում ինձ
հըմա յերկնքից:

— Հառը ելի գժվեց:

— Գժվեց թե ընենց... Առավոտը վեր կացավ, կո-
րավ գնաց մեռելի թաղման: Չունքի ինքը չեր խմե-
լու, չթողեց վոր սամավար գցեմ: Յագորն ել խո ա-
ռավոտը լիսանում և թե չե, դրոգը լծում գնում ա,
առանց չայ խմելու: Դե իմ պլաւխը ջնանդամը, չայի:
հըմար սիրաս շատ ել չի գնում, ես երեխն եր լաց ըլում,
սոված եր: Չուտելուց ծիծ չորացել, կպել ա զոշիս:
Գնացել հարևանից մի չայնիկ ջուր եմ բերել, յերկու
կտոր շաքար եմ գցել, հաց բրթել, ուահցըել, վոր
անջախ ձենը կտրել ա: Սաղ որը կորած եր: Իրիկնա-
պահին քեւեխը զահրումար արած, հարված տրաքված
տուն յեկավ ու եկած-չեկած՝ հըլա մի լայ անքծքա-
կոխ արավ, յենսա վրա ընկավ թարեքին: Տեսավ
յերկու կառը շաքար պակաս ա, խո գիտաս, շաքարն
ել ու ամեն բան ել համբրած ունի տանը, վճնց թե,
առում ա, յերկու կտոր շաքար ես բանացըել առանց
ինձ, վճնց վոր մի կատղած շուն՝ վրա պլծավ ու ջա-
նիս վրա մի սաղ տեղ չթողաց—խփեց, գղղղեց, ծակ-
ծեց... Զանս վոր բաց անեմ, չես կարա մտիկ անի,
կասես կեծացրած շամփուրներով դաղղղել ինչ...

Փղձուկը նորից բռնեց Անանին, բայց նա կարո-
ղացավ զապել իրեն:

— Սրանից յետը, վոր սալանես ել, նանի, յես ել
ընտեղ գնացողը չեմ, —ավելացրեց դողդող, բայց վճռա-
կան ձայնով.—կդնամ Քուռը կընկնեմ, կխեղղվեմ, հոգիս
ատանի փայ կանեմ ու ընտեղ չեմ զնա: Հերիք ա,
հոգիս հըես եկել դեմ ա առել բէիս: Իմ մատաղ որերը

ու ու մութ ա արել, Մի որ ուրախութին չեմ տեսել:
Սաղիրեք տարի, վրաց վոր շամփորի վրա դնես խրովս,
ընենց խրովել ա ինձ, ինքը ջոկ, տղեն՝ ջոկ: Ինքը ծե-
ծել ջարդել, մսերս գզզել ա, հերիք չի, տղեն ել
հարբած, տրաքված յեկել ա պակասը թամամցրել:
Բնչի, ինչ եմ արել: Մի անլեզու հայվանի պես ըն-
կած եմ ինձ հըմար. տալիս են՝ ուտում եմ, չեն տտ-
լիս՝ ձեն չեմ հանում: Սաղ որը հոգիս դուրս ա գալի-
քոյց ջուր կրելով, ձիու թըթեը հավաքելով, բակն-
ավելով, տունը տեղավորելով, նրանց կարկտաններն
անելով, ել ինչ են ուղում: Շունը, վոր շուն ա, շանն
ել են չարչարանքը չեն տա, ընչոր ինձ. բա մի շան
դադար ել չկամ: Հըես ես ըլեխի հըմար հոգի յեն
տալիս, բա սրա հըմար ել ա խնալեն, ե, ինձ: Վաւյ,
աստոծ ջան,—բացականչեց Անանը, արտավալից աշ-
քերը գցելով առաստաղին—ինչ կըլի, հոգիս առնես
քրծնեմ...

Նրա ձախը բոլորովին գողդողաց և հանկարծ-
կտրվեց, գլուխն ընկավ տախտակի պես հարթ կրծքի-
վրա և ուժգին հեկեկանքը նորից սկսեց ցնցել նրա
վոսկրացած ուսերն ու մեջքը:

Փոքրիկ քուլըն ու յեղբայրը սուս արած նայում
ու լսում ելին նրան մանկական լուրջ հետաքրքրու-
թիամբ. մանուկը չոչ անելով մոտեցել եր սուփրին,
վերցրել ձմերուկի մի կլեալ և աշխատում եր կրծել իր
նոր գուրս յեկած պստիկ ատամնիրով: Իսկ պառավ
չեղնացը մնացել եր տեղնուտեղը ցամաքած, չիմա-
նալով ինչ ասի, վոր գոնե մի քիչ մխիթարած լինի-
սկեսոր և մարդու ձեռին ալրված, դաղված թոռանը:
Վշտից և կարեկցութիւնից նրա պառավ գլուխն որո՞ւ-

մում եր սաստիկ և բարի աչքերը լցվել ելին արտասուրով:

— Աղջի, ըտենց վոր խոսում ես, սաղ ջանս կրակ ա ընկնում ախր,— ասաց նա լացակումած: — Ասում ես թե ել չես գնա ընտեղ, յենան դբանով կպրծնես են կապելու դժերի ձեռից:

— Չեմ այրծնի, ավելի լավ, — պատասխանեց Անանը, շարունակելով հեծկլտար — Սրանից ավելի ի՞նչ պտի անեն: Սպանեն, թող սպանեն: Ջանս ել ա կը դնջանա: Ել խո, ամեն որ դադդորիկ չեն ածի: Դիշերները չեմ կարում քնի մզկտոցից, — ավելացրեց նա և արտասուրը նորից սկսեց գլուխով թափփել նըս աչքերից:

Պառավ Հեղնարն այլիս չկարողացավ դիմանալ, նրա գլուխը դադարեց որորվելուց, հանգած աչքերը վառվեցին հուսահատական վճռականության կրակով, և պառավ մարմինն սկսեց դոզդվալ ներքին բուռն դայրույթից:

— Լավ, մեա: Ել չգնաս են կապելու դժերի տուն, — բացականչեց նա: — Յես նրանց աղջիկ չեմ տվել վոր համ քոծի պես բանեցնեն, համ ել տակները դնեն, ջարդեն: Մուռմի պես հակել մաշել են, հալիք ու մաշիք նրանց ջանը: Անտեր չես, չես հըլա չեմ մեռել: Կաց, ել չգնաս: Հալբաթ մի կտոր հաց ել քեզ հըմար կհարենք՝ վոր...

Խոսքը շվերջացավ պառավի բերանում. դժված գոմշի պես ներս ընկավ մի ահագին մարդ, այնքան ահագին, վոր ներս ընկնելուն պես կասես լցրեց իրենով ալդ փոքրիկ խրճիթը: Անանի մարդն եր, զբութապան Յաղորը, իր դբողի պես կրակիտ ու անտաշ իր

հակա ձիու պես խոշոր ու ջլապինդ: Գլխին գդակ չուներ, արեառ յերեսն այնքան թավամազ եր, վոր միբուքն ու բեխերը կասես խառնվել ելին իրար. կուրծքը բաց եր, կապուլս արխալուզով և այնքան լայն ջալ վարով, վոր յեթե տոտերը հաներ անկրունկ լերկարաճիտ լավչիների միջից, կկարծեցիր, թե կանացի շրջասղգեստ ունի հագին: Կատաղությունից վիալում եցին նրա ահագին աչքերը թավամազ, ու հոնքերի տակ, մեծ քթի պնչերը փռնչում ելին հոդնած ձիու անգների պես լայնացած:

Կինը նրան տեսնելուն պես վայրկինաբար դադարեց լալուց, վեր թռավ տեղից և վազեց կպավ պատին, մեռելի պես գոնինատված:

— Յես քու... — գորգոռաց մի սարսափելի հայնոցանք, և Յագորը սպառնագին մի քանի քայլ արավ գեպի նա:

Պառավ Հեղնարը վեր թռավ տեղից և ուզեց կարել նրա ճանապարհը, բայց նա ձեռքի մի թեթև շարժումով նետեց նրան նորից գեպի թախտը և իր հակա հասակով գնաց կանգնեց վախից տերեկի պես թփրտացող կնոջ առջև:

— Վայէ, չխփես, Յագոր ջան... հոդուտ մեռնեմ չխփես, ջանս ցավում ա, — աղաչեց Անանը գլուխը յերկարացրած և լերկու ձեռքով պինդ գրկած իր վոսկրացաց ուսերը:

— Զիփեմ, չխփեմ, — վորոտաց Յագորը կատաղի աչքերը փայլեցնելով նրա վրա: — Բա ի՞նչ անեմ: Աչքերդ պաշեմ, վոր են պառավը քնած՝ թագուն վեր ես կացել, եկել, տունն անտեր թողել: Փախել ես, համ, տանից: Զառը-չնանդամը, թե վախել ես, — շատ ել

դարդ չեմ անի քեզ հըմար, ևս երեխի՞ն ուր ես բերել Հը՞ Խո չես ուզում ես սհաթի՞ն ճիվը ճիշտ հանեմ, Ճիվի պես ճիվեմ վոտիս տակը: Հը՞ ինձ չես ճնանչում: Բը՞, յես քու...

Եեվ մի ահագին բուռնցք, կարծես լերկաթից ձուլված, ծանր ու դանդաղ, հորիզոնական ձևով գնաց ու լեկավ գիտավ կնոջ կողքին:

Անանը մինչև անգամ չճշաց, այլ միտքն հանկարծ բերանը բաց արեց, ներս ծծեց ողը մի տարրորինակ հեքով, այսպիս, ինչպես ջրից հանած ձուկը, հետո որորվեց և կամաց, փալասի պես, վայր ընկավ գետին:

Ա՛, քու սիրտը չմեռնի, եթ ի՞նչ արիր, — ճշաց չեղնարը սարսափած և վաղեց ողնության:

Յագորը մի րոպէ թալամաղ հոնքերի տակից նաւից իր վոտքերի առջև թալամած կնոջ չուած աչքերին, հետո շարունակելով հայոցանքները, մոտեցավ յերեխային, վորը շարունակում եր կրծել ձմերկի կիեպը, վերցրեց և առանց շտապելու դուրս գնաց:

Պառավ նանը խոնարհվեց Անանի վրա և սարսափից քարացավ:

Անանն ընկած եր գետնին՝ վորկորը տարրորինակ կերպով վեր ցցած. չուած աչքերը նալում եյին առաստաղին ապակու բութ փալով, բաց բերնից արյուն եր հոսում, հեքը կարծես քարացել եր այստեղ:

Կնոջն սպանելու համար մեղադրվող գրոգապան Յագորը նախնական քնության ժամանակ դատական քննիչի հարցություններին պատասխանելով՝ ասաց.

— Մի մուշտի տվի, ելի, ուրիշ բան խո չեմ արել:

ՍԵՎ ՓՈՂԵՐԻ ՏՈԿՈՍԸ

Նոր եր մթնել, վոր պառավ Մարանը պատրաստվեց քնելու, թեև գիտեր, վոր մինչև կես-գիշեր շուռ ու մուռ պիտի գար անկողնում լվաներից և պառավական անքնությունից: Դեռ բավական լույս եր, վոր զցել եր տեղաշորը: Միշտ այդպիս եր անում, վոր գիշերվա մթան մեջ նեղություն չտան իրեն: Նավթ չուներ, վոր վառեր:

Պառկելուց առաջ մոտեցավ խրճիթի պուռախին, ձեռքով շոշափեց և տեսավ, վոր հավերը նստած են թառին, թեև շատ լավ գիտեր, վոր նրանք ամբողջ որը հարևան հավերի և աքլորների հետ ամբողջ թաղը տակնուվա անելուց հետո յերեկոյան, սովորական ժամին, յեկել թառել եյին իրենց տեղը: Ցերեք չեր կարող հանգիստ տեղաշոր մտնել, մինչև վոր չստուգեր հավերի ներկայությունը, վորովհետեւ նրա ապրուստի համարյա միակ աղբյուրն ու հուլսը այդ յերկու հատիկ համն եր, վորոնց սիրում և խնամում եր իր աչքի լուսի պես: Հավերը ձու ելին ածում, պառավ Մարանն այդ ձեռքը տանում եր թաղի մանրավաճառի մոտ և փոխում հացի կամ կուտի հետ: Այդպիսով հավերը համ իրենց ելին պահում, համ պառավ Մարանին:

Հավերը նրա ձեռքի շոշափումից շարժվեցին և կրկոց արձակեցին: Այնուհետև պառավը կատարեց ի՞ն սովորական աղոթքը. յերեսն անկանոն կերպով Նար-Դոս—8

խաչակնքելով լերեք անգամ ծունը դրեց խրճիթի խորդուբորդ հատակի վրա, ինչշվոր մրմռալով քթի տակ, հետո հանվեց և պառկեց: Խոնավ անկողինը մի անախորժ սարսուռ աղղեց նրա ցամաքած մարմին. նա կուզ լեկավ և վերմակը քաշեց գլխին: Ու մտածմունքները՝ տիտուր ու անմիջական, նորից պաշարեցին նրան:

Մենակ, մեն-մենակ եր ապրում պառավ Մարանն ալգ կիսախարխուր խրճիթում, վոր մարդուց մնացած միակ հարստությունն եր: Վաղուց, շատ վաղուց եր մեռել մարդը, վոր մի հարբեցող խարազ եր: Մեռել եր շատ հիմար կերպով. մի անգամ վիշերով կոնծած, բայթի լերգելով տուն գալիս ընկել եր փողոցում գլխի ծածկը փլած արտաքնոցի հորը և մինչև հանելը խեղդաման լեղել գաղերից: Զնայելով, վոր կինը շատ քիչ լավ որ եր տեսել նրա ձեռքին, բայց և այնպես իերկար ժամանակ սուզ եր անում նրա համար և այժմ ել առանց խոր հոգոց հանելու չեր կարողանում հիշել նրան. ախր ինչ ել վոր լիներ, ելի այն ժամանակ մի կենդանի շունչ կար մոտը, թեև ծեծ ու հայնուանքով, — բայց պահող-պահպանող ուներ:

Ճիշտ ե, այժմ ուներ մի վորդի, բայց նա ել փուչ փշանալու մեկն եր, գող ու ջերգիր, վոր որերով ուշաքաթներով տան լերես չեր տեսնում, մորը չեր նալում, այնպես վոր լեղած չեղած մեկ եր:

Վորդու փչությունը թունավորել եր պառավ Մարանի առանց այն ել թշվառ կյանքը: Քանի՞ քանի անգամ արցունքն աչքերին փորձ եր արել խրատելու Արտեմին, վոր հեռանա վատ ճանապարհից, մի գործի կպչիր, պսակվի, որինավոր տուն ու տեղ դնի, որինակ եր

ըերում հարևան Ռանի տղա թարախ ման ածող ծականին, վոր նրա հասակակիցն եր և կարգին ընտանիք եր պահում, բայց հենց առաջին խոսքի վրա Արտեմն այնպես չուել եր նրա վրա իր ահարկու աչքերը, այնպես բղավել նրա վրա, վոր խեղճ պառավան իսկուն ձայնը փորն եր դցեւ:

«Ա՞ի, վորդի, վորդի... հառաչեց պառավ Մարանը և շուռ լեկավ մյուս կողքի վրա: — Ես հավերն ել վոր չունենամ, լարաբ ինչ կլնի իմ չարենք:»

Որամեջ կամ յերկու որը մի անգամ վերցնում եր հավերի ածած ձուն և զնում մանրավաճոի մոտ, վորը զանգան մանրուքի և մրգեղենի հետ հաց ել եր ծախում, ոգտվելով հանգամանքից, վոր թաղում հացթուխ չկար:

— Բաղդո ջան, երկու ձմի հաց տա՛ս, ասում եր նա խնդրական լեղանակով:

Մանրավաճառը ձմերը մեկ-մեկ շարժում եր ականջի մոտ:

— Ես մեկը լակ ա, Մարան նանի, — ասում եր նա կատակով:

— Վերւ չե, Բաղդո ջան, ըսոր են ածել: Յես ըսկի լակ ձու կունենամ:

— Մարան նանի, ինչ կանես, վոր հավերիդ ձվամանը չորանա, — զարունակում եր կատակ անել մանրավաճառը, մի ֆունտ հաց կշռելով:

— Վերւ, մի ասի, Բաղդո ջան: Աստոծ վոչ անի. ել իմ պահողն մվ կըլի:

— Բա տղեղ:

— Տղիս լերեսը սկանա, ըսկի տեսնում եմ վոր: Մակայն, ի հարկե, տարին տասներկու ամիս լեր-

կու հավի ձվով ապրել չեր կարելի: Աշխարհը չեր չուրացել. կային բարի հարևաններ, վորոնք յերբեմն-յերբեմն չեյին խնայում իրենց տաք կերակրից նրան ել բաժին հանելու կամ ուրիշ բանով ոգնելու: Ինքն ել, վորքան ներում եյին ուժերը, բուրդ եր մանում, առավոտից մինչև յերեկո ածխավաճառի խանութում նստած ածուխի մրոտ, ծակծակ տոպրակ եր կարկատում:

Հավերից մեկը շարժվեց և քնաթաթախ մի խուզ կրկոց արձակեց:

— Զա՞ն, զա՞ն, մատաղ զա՞ն, — արտասանեց պառավ Մարանը և հորանջեց:

* * *

Կես գիշերից բավական անցել եր: Յերկար տանջվելուց հետո Մարանը նոր եր խոր քնի մեջ ընկել, յերբ հանկարծ ինչ-վոր դրնդրնդոց արթնացրեց նրան, Վախեցած բարձրացրեց զլուխը և նայեց մթության մեջ:

Դուռը ծեծում եին, ըստ յերեռութին, բռուցնքով ու վոտով և այսպես պինդ, վոր դռան հետ խրճիթն ել ամբողջ շարժվում եր տեղից.

— Ո՞վ ա, — կանչեց պառավը լեղապատառ: — Զահրումար ու չոռ ա, բաց արա, ելի, — լսվեց տղամարդու մի հուժկու ձայն, և խրճիթը նորից դրնդաց դռանն իջեցրած վատի մի կատաղի հարվածից:

— Արտեմ... Ա՛ քու սիրտը չմեռնի, լեղիս ճաքեց, — ասաց պառավը, վեր կացավ, մթության մեջ իւարիսափելով մոտեցավ դռանը և, հազիվ գտնելավ սոդնակը, բաց արավ:

Գարնանացին պարզ գիշեր եր: Դուան առջև կանգնած եր մի պարթև յերիտասարդ գղակը ձեռին:

— Եսքան թրիթրիսկացնում եմ, չես իմանո՞ւմ, — գոռաց նա մոր վրա:

— Քնով ի անցել, Արտեմ ջան, — խեղճ-խեղճ պատասխանեց մայրը:

— Մ'յ, ընենց քնով անցնես, վոր ել վեր չկենաս, — ասաց Արտեմը և լայն շեք տալով, ներս մըտավլ՝ ձրագ վառի, — հրամայեց նա:

— Նավթ չունենք, Արտեմ ջան:

— Բա մթնումն ես նստիւմ:

— Բա ի՞նչ:

— Գիտ ա անտեր-մունդուիկը: Տո, յերկու գրոշի նավթն ի՞նչ ա, վոր չես առնում:

— Երկու գրոշի ավողն ել դու յես, վոր չես տալի, վո՞րդիւն առնեմ, — վրա բերեց պառավը մի քիչ վըրդովված:

— Հավերդ սատկել ե՞ն, ել ձու չեն ածո՞ւմ: Պառավը հանկարծ վառվեց:

— Յեքա աղեղ ըստեղ սարի պես կանգնած, անխոս թոչունքին ես ասնեմ, — կանչեց նա զարյագին: Մերդ եմ, հալից-ջանից ընկած, տարի ա անց կենում, յերեսիս մտիկ չես տալի, ելի մենձ սրտովը դո՞ւ իես: Ամոթ ելա քաշի, ե: Հավերս ինձ հաց են տալի, դո՞ւ ի՞նչ ես տալի. վոր հըլա սատկացնում ել ես:

— Դե, շատ մի ճղճղա, թե չե, հը՝ — սպառնաց Արտեմը և մոտեցավ նրան:

Վորդին հասակով բարձր եր մորից գրեթե կրկնակի: Պառավն իր գլուխ վերև տեսավ մթության մեջ փալող յերկու ահարկու աչքեր և ողի մեջ քարացած:

մի ըռունցք: Միւնուկն ժամանակ նրա քթովը դիպավ գինու ծանր հոտ:

— Դե, բնչ անեմ, Արտեմ ջան, — ասաց նա նորից խեղճացած: — Միւտս մղկտաց, վոր...

— Սասդ, — գոռաց նորից Արտեմը, — Գնա տեղաշորս զցի:

Պառավը սուս ու փուս շտապեց նրա հրամանը կտտարելու: Մթության մեջ խարխափելով և տնքտընքալով մի կերպ զցեց Արտեմի անկողինը:

Արտեմը ձեռաց հանվեց և պառկեց: Պառկելուն պես սկսեց խոմփացնել:

— Են, իս ել կտտամ վորդի ունեմ ու ապրում եմ, աշխարքի յերեսին: Վայ իմ որին, վայ, — հառաշեց Մարանը և նորից մտավ անկողին:

Ծեղը հեռու չեր: Փոքրիկ պատուհանի մութ ապահուներն սկսեցին վորոշակի յերեսը խրճիթն սկսեց քիչ-քիչ լուսավորվել:

Հավերը շարժվեցին թառի վրա, մեկը մյուսի յետեից բարձրացան վոտների վրա, թափահարեցին թերերը, սկսեցին կտուցներով քորել թերերի և կրծքի վերը, սկսեցին կտուցներով դեպի ներքե, նատակ, հետո վզներն յերկարացրին դեպի ներքե, նայեցին դես ու դեն, ցնցեռով մսեղ կարմիր կատարները, յեցին դես ու դեն, ցնցեռով մսեղ կարմիր կատարները, և հանկարծ ահագին կրկառով ցած թուան, ոդի մեջ ցանելով իրենց թափող փետուրները:

Պառավը, վոր լուսադեմին նորից քնով եր անցել աչքերը բաց արեց, տնքտնքալով վեր կացավ և հագավ իր սկ լաթերը:

Հավերը մոտեցան նրան և սկսեցին ավելի բարձր կրկուալ:

— Հա, հա, ձեր աչքն ել կարեմ, ես ա տալիս

եմ, — կընթինթաց պառավը և ուղում եր մատենալ կուտի տոպրակին, բայց հանկարծ կողմանակի մի հայացք ձգելով քնած վորդու վրա, տեսավ վերմակը մի կողմ և ընկել և նրա մազոտ կուրծքը բաց և մնացել: Մոտեցավ և զգուշորեն վերմակի ծալը քաշեց նրա կրծքին:

Չնայելով հավերի բարձրաձայն կրկուցին, Արտեմը խոր քնած եր:

Մի քանի ըոպեից հետո հավերը, կուտն արդեն կերած, ջուր խմած, ուղում ելին դուրս գնալ: Պառավը մեկ-մեկ տապ-տապ արեց, ձկուացրեց և վերցրեց տեսնելու՝ ձու ունեն թե վոչ: Անունետև դուռը բաց արեց և դուրս թողեց նրանց:

* * *

Որն արդեն ճաշ եր դառել, վոր Արտեմը զարթեց: Անկողին մեջ նստած, նա դեռ ճմլուտած, ճրթճըրթացնելով թիկունքի և մեջքի վոսկորները, մատների խալերը կոտրատեց, հետո վոտները կախեց թախտից և սկսեց ծանր ու բարակ հագնվել, անդադար հորանցելով:

— Զայ չունե՞նք, — հարցրեց մորը, վորը դուան շեմքին նստած, ինչ-վոր լաթ եր կարկատում:

— Հա, վհնց չե, — հեգնեց պառավը, — հրեդ ամավարը քըլթքլթում ա, չալ-շաքար ել, վոր դրկել եյթ, հրեն փթում ա թարեքումք:

Արտեմը ծիծաղեց:

— Բա վոր ըտենց ա, նանի, յես ես ա գնում եմ մի գրվանքա չայ առնեմ, մի գլուխ ել շաքար, թե գործի ել չունես, մի բեռ ել գործի:

— Տնազը քու գլխին գցի, քու, — պատասխանեց պառավը: — Առավատը հրեն Մարդարանք ին կանչել, վոր մի թաս չայ խմեմ: Վոր ամոթ չես քաշում, ինչ ասեմ:

Արտեմն հոնքերը կիտեց, վեր կացավ, նախ մի, հետո մյուս վոտը դրեց թախտի վրա, խնամքով դարսեց յերկարաճիտ չուստերի ծալերը, հետո վերցրեց խելադան և սկսեց յերեսը վլանալ ուղղակի հատակի վրա, վոտներն իրարից հեռու դրած: Յերեսը գրպանի աղլուկով սրբելուց հետո, գրպանից հանեց մի կոտրած սանր, սանրեց մազերը, առանձին խնամքով վոլորեց ճակատի վրա թողած յերկար խոպոպիկը, հետո առավ գդակը, թափ տվեց ձեքով՝ դրեց ծոծրակին և դիմեց գեղի դուռը: Դառն մոտ կանգ առավ հանկարծ կարկատանի վրա կռացած մոր մեջքին: Ու նորից տրամադրվեց կատակ անելու:

— Լավ, նանի, չայ խո չտվի՞ր, — ասաց:

— Գնա հրեն տրախտիրը՝ չայ ել կիսմես, արադել, — պատասխանեց պառավը, առանց գլուխը կարկատանից բարձրացնելու:

— Վայ, նանի, նանի, գրողը քեզ տանի, — Արտեմը ծիծաղելով, լայն շեք տվեց մոր վրայով և դուրս գնաց: — Հը՛, ինչ ես քիթդ ու մռութդ հավաքել, — ասաց, հանկարծ կանգնելով մոր առջև: — ուղիւմ ես լոթիանա փող բաշխեմ:

— Փող ունես, տար արդանով քեփ արա, ինձ խի կտաս, — քրթմիջաց պառավը միշտ գլուխը կախ կատանի վրա:

— Հայ գիտի, նանի, աչքդ վոնց վախցել ա: Ա՛յ թե չեմ տա: — Արտեմը ձեռքը կոխեց սկ սատինի ար-

խալուղի գրպանը և սկսեց դրամները չխչըխկացնել գրպանի մեջ՝ պառավի ախորժակը գրգռելու համար: Հը, տամ:

Դրամների չըխչըխկոցը, հիրավի, իր մոգական աղղեցությունն ունեցավ պառավի վրա: Նա կարկատանը մի կողմ դրեց և ձեռքերն աղերսագին մեկնեց դեպի վորդին:

— Վհայ, տու, տու, Արտեմ ջան, քեզ մատաղ ըմ նանը:

Արտեմը մի բուռ սկ ու սպիտակ դրամներ հանեց գրպանից և այս անդամ սկսեց չըխչըխկացնել բռան մեջ:

— Տմմ, ասում ես:

Պառավը մի քիչ բարձրացավ նստած տեղից, ձեռքերը միշտ գեղի վորդին:

— Արտեմ ջան, արեիդ մեռնի նանը. հենց իմանաս ժամի դունը նստած մի աղքատ եմ:

— Լավ, վոր տամ, ինչ կանես:

Պառավը շտապով վեր կացավ:

— Ա՛յ ինչ կանեմ, Արտեմ ջան: Առաջ մի քիչ բուրդ կառնեմ, թել կմանեմ, գուլպա կգործեմ քեզ հըմար ել, ինձ հըմար ել: Յեննա սապուն կառնեմ, կըլանամ քու փոխորդն ել, իմն ել: Յեննա նալիթ կառնեմ, վոր գիշերը գաս՝ վառեմ: Յեննա չայ-շաքար կառնեմ, մի քիչ ել գործի, վոր առավոտը վեր կենաս, չայ խմացնեմ: Յեննա...

— Վայ, վայ, ե, չհատավ, — բացականչեց Արտեմը:

— Վհնց հատնի, Արտեմ ջան, քիչ պակասութին ունենք, — ասաց պառավը: — Հըլա հավերի կուտը չասեցի: Բա պանիրը. քանի վախտ ա սրառվ պանիր եմ ուղում:

— Պահիր չե, հա, բիշկեթ-կատլետ չես ուղի՞, —
առաց Արտեմն այս անգամ արդեն առանց կատակի: —
Անտեր մունդոիկ, դորթ խո փող չեմ կտրում: Դե,
փեշդ բաց արա, ու ընչոր կըտամ, ձեն չըհանես,
թե չե....

Պառավը մի քանի քայլ մոտեցալ վորդուն և փեշը
դեմ արեց՝ աչքերն անհամբեր տնկած նրա ձեռքին:

Արտեմը բաց արեց բուռը, մեկ-մեկ ջոկեց սպիտակ
դրամները, գրանն ածեց և մնացած ու փողերը թա-
փեց մոր փեշը:

— Հը՛, ել չասես, թե փիս տղա ունես:

— Վհւյ, չե՛, չե՛, լայն ես, լավը, Արտեմ ջան: Վհւյ,
արևտ ապրի, Արտեմ ջան: Վհւյ, ինդաս ու միթթարվես,
Արտեմ ջան:

Պառավը նորից նստեց դռան շեմքին, դոդը բաց
արեց և սկսեց համբել դրամները: Ուրախությունից
ձեռքերը դողում ելին:

Արտեմն ինքն ուրախացել եր նրա ուրախության
վրա: Նա պաղեց մոր առջև և ժպտերես նայեց նրա
դեմքին:

— Հը՛, տվի՞, թե չե, — հարցրեց:

— Տվիր, տվիր, Արտեմ ջան, վհւյ դու շատ ուրա-
խանսա, վոնցոր ինձ ուրախացրի:

Արտեմը ծիծաղեց, թեթեակի խփեց մոր ծնկանը,
վեր թռավ պպղաց տեղից և հեռացավ լայն ու չ ա
փաղոր քալերով, վորի ժամանակ նրա շալի չուխալի-
ծանը փեշերը ծափ ելին տալս յերկարաճիտ չուս-
տերին:

* * *

Անցավ մոտ յերկու շաբաթ:

Պառավ Մարտնն ապրում եր ելի այնպես, ինչպես
առաջ: Արտեմի տված փողերն ինչքան ել վոր ինս-
յողաբար եր ծախսել ելի շատ շուտ ելին հատել Պա-
ռավը զարմանում եր, վոր այդ փողերով վոչ մի փո-
փոխություն չեր կատարվել իր կենցաղի մեջ: Նրա
ստացած միակ շոշափելի ոգուտն այն եր, վոր այդ
ժամանակամիջոցում տաս-տասնուհինդ ձու եր յետ
զցել թուխս նստեցնելու համար:

Մի որ Արտեմը կրկին յեկավ: Սովորաբար, յերբ
տունը միտն եր գցում, գալիս եր կես գիշերից անց,
շատ անգամ լուսաղեմին. բայց այս անգամ այնքան
վաղ յեկավ, վոր պառավ Մարտնը դեռ անկողին չեր
մտել: Այդ բանը խիստ զարմացրեց պառավին:

— Արտեմ ջան, հիմտնդ խո չե՞ս, — հարցրեց նա
անհանգստացած:

Արտեմը չպատասխանեց:

Մարտնը խրճիթի կիսախավարի մեջ աշխատեց լավ
դիտել վորդու դեմքը, բայց վոչինչ չկարողացավ տես-
նել բացի այդ դեմքի խալար ուրվագծից: Շտապեց
լամպը վառել: Հետո մոտեցավ վորդուն:

Արտեմն յերեն ի վեր պառկել եր թախտի վրա,
ձեռները զլիսի տակ դրած:

Պառավը խոնարհվեց նրա դեմքի վրա և վախեցավ:
Արտեմի դեմքը սաստիկ մուալ եր, աչքերը պլպլում
ելին. յերեռում եր, վոր խիստ վատ տրամադրության
մեջ եր:

— Արտեմ ջան, — շնչաց մալրը:

— Հը՛, — հանկարծ մոնչաց Արտեմն իր հուժկու ձայնով և աչքերը վորորեց մոր վրա:

— Բնշի՞ իս ըտենց, — հարցրեց պառավը յերկյուղավ:

— Մի խոսացնի, թե չե՞ ես ջգրած սրտովս մի քացի կտամ, վոր տեղն ու տեղդ բանհոգի կըլես, — արտասանեց Արտեմը հանդարս, բայց սարսափ ազդող ձայնով և նույնիսկ բարձրացրեց վոտը:

Մայրը կծկվեց և սուս ու փուս հեռացավ:

Տիրեց յերկարատև լոռություն:

Ճրագի լուսից և խոսակցության ձայներից հավերը դարթել ելին թառի վրա նստած, պլղել ելին իրենց կլորիկ աչքերը և, ըստ յերկութին հետաքրքրված ճրագի անսովոր լուսից, դես ու դեն ելին նայում:

Պառավը, թախտի ծայրին կուչ յեկած, մտածում եր թե ինչ ե պատահել Արտեմին: Հիշեց անցյալից մի դեպք, յերբ վորդին նույն տրամադրությամբ տուն եր յեկել. բայց այն ժամանակ պատճառը չծածկեց. ասաց, վոր դումար խաղալիս շատ փող եր տարվել Յերեկի հիմա ել այդպիսի մի բան կար, — մտածեց պառավը և ուղեց միսիթարել վորդուն:

— Արտեմ ջան, նավթը քու բաշխած փողովս եմ առել, մի, — ասաց նա տեսնելով, վոր վորդին, մտածմունքի մեջ խորասուզված, մոայլ հալացքով անթարթ նայում ե լամպին:

Արտեմը ձայն չհանեց:

— Թանի՛ վախտ ա առել եմ, հա. քեզ հըմար եյի պահում, վոր գաս վառեմ, — ավելացրեց պառավը, Արտեմը դարձյալ լուս մնաց:

— Քիչ չաբշաքար ել եմ առել, առավոտը չայ կը խմացնեմ, — նորից խոսեց պառավը:

Արտեմն անշարժ պառկած եր միշտ միւնույն դրության մեջ, Կարծես չեր ել լսում մորը:

Պառավի սրտին դիպավ, վոր վորդին վոչ մի ուշ շադրություն չի դարձնում իր խոսքերին:

— Թե քունդ տանում ա, ասա տեղաշորդ գցեմ, — ասաց նա նեղացած, յերկար լոռությունից հետո:

Արտեմը պատասխանելու տեղ մութաքան քաշեց գլմի տակ, կուռը ցցեց յերեսի վրա, և մի քանի ըու պելից հետո լսվեց նրա խռմփոցը:

Մարանը հին, կեղտուա մթելով ծածկեց նրան ըգ-գուշորեն, վոր գունը չխանգարի, լսմալը հանգցեց, կատարեց իր սովորական աղոթքը և անկողին մատվ:

«Եդ ա, փողերն ելի աանուլ ա տվել» — վճռեց նա մտքումը դարդակալած: Այն ինչ՝ հույս ուներ, թե վորդին առավոտյան նախորդ անգամվա պես փող կտա իրեն:

Ծեղը նոր եր բացվում, փոքրիլ պատուհանի մութապակիները նոր նոր սկսել ելին պարզվել յերբ հապերի ոտարոտի կըկոցը հանկարծ զարթեցրեց պավալին: Նա գլուխն արագ բարձրացրեց և նայեց թառի կողմը. այսակ մթնաշաղի մեջ նրա քնաթաթախ աշ-քերին հազիվ հաղ նշանարելի յեղավ մարդու մի սերվագիծ:

— Եդ ժկ ես, — աղաղակեց պառավը սաստիկ վախեցած և մեքենայարար նստեց անկողնում:

Մարդու ուրվագիծը շարժվեց դեպի գուռը: Լսվեց սողնակի շրմկոցը: Դուռը բացվեց, Մարդու ուրվագիծը մի վալրկյան յերեաց վաղորդյան դալուկ լուսի

մեջ և չքացավ: Դուռը բաց մնաց: Հավերի կրկողը
լսվեց դրսից և հանկարծ լրեց:

Պառավին թվաց, թե յերազի մեջ և: Նա վբա ըն-
կավ և գողղող ձեռքերով սկսեց շոշափել Արտեմի պառ-
կած տեղը թախտի վրա: Տեղը դատարկ եր: Խելագարի
պես թուավ թախտից և վաղեց դեպի թառը: Թառը
նույնպես դատարկ եր:

— Վա, քու սիրու չմեռնի, Արտեմ, ևս ինչ ա-
բիր, — ճշաց պառավը և, շտապով դելրան դցելով գըլ-
խին, դուրս յեկավ:

Ու հեալով, անդադար սալթաքելով սկսեց վաղել
ամայի փողոցի լերկարությամբ, առանց զգալու, վոր
սուր-սուր խճաքարելը ծակում են իր չորիկ-մորիկ
մերկ վոտները: Հետո, այլևս չկարողանալով շունչը
լիտ բերել կանգ առավ, նստեց հենց այնտեղ, փո-
ղոցի մեջտեղը, և սկսեց թակել ծնկերն ու լալ առանց
արտասունքների:

Արտեմը չքացել եր:



46174

ԳԻՒՆ 65 Կ.
ԿԱԶՄ 25 Կ

|
d

НАР-ДОС
ИЗБРАННЫЕ РАССКАЗЫ

Гиз. ССР Армении, Эривань, 1934